

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՄԻՆԶՅԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# Դիմորդի ուղեցույց 2011

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ – 2011

ՀՏԴ 378  
ԳՄԴ 74.58  
Դ 495

Կազմեցին՝

*Ա.Կ.Գրիգորյան  
Վ.Ս.Գալստյան  
Է.Ա.Սանթրոսյան  
Ա.Ն.Սարգսյան*

Դ 495 **Դիմորդի ուղեցույց 2011: - Եր.: ԵՊՀ հրատ., 2011 թ., 95 էջ:**

Դիմորդի ուղեցույցը պարունակում է համառոտ տեղեկատվություն ԵՊՀ ֆակուլտետների և մասնագիտությունների, հեռակա ուսուցման համակարգի, նախապատրաստական դասընթացների և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մասին:

Ներկայացված են վերջին երեք տարիների ընդունելության քննությունների պատկերը, ԵՊՀ բոլոր մասնագիտություններով անցողիկ միավորները և դիմորդների թիվը ըստ առաջին հայտի:

Նախատեսված է ՀՀ հանրակրթական հաստատությունների (դպրոցներ, վարժարաններ, քոլեջներ, նախնական մասնագիտական հաստատություններ) ավարտական դասարանների աշակերտների և սովորողների մասնագիտական կողմնորոշման համար:

ԳՄԴ 74.58

Մեր հասցեն.

ՀՀ, 0025 ք. Երևան  
Երևանի պետական համալսարան  
Կենտրոնական մասնաշենք, 2-րդ հարկ  
Մինչհամալսարանական կրթության վարչություն  
հեռ. (37410) 55 – 40 – 03  
(37410) 54 – 43 – 10  
էլ. փոստ՝ pre-ued@ysu.am

ISBN 978-5-8084-1073-2

© ԵՊՀ հրատարակչություն, 2011 թ.

© Կազմողի համար, 2011 թ.

**ԴԻՍՏՐԻԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ**  
**2011**

Հրատ. խմբագիր՝ **Լ.Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**  
Տեխ. խմբագիր՝ **Վ.Զ. ԲԴՈՅԱՆ**

Ստորագրված է տպագրության 13.01.2011թ.:  
Չափսը՝ 70x100<sup>1/16</sup>: Թուղթը՝ օֆսեթ: Հրատ. 7.0 մամուլ,  
տպագր. 8.1 մամուլ= 7.5 պայմ. մամուլի:  
Տպաքանակ՝ 1500: Պատվեր՝ 12:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1:

---

Երևանի պետական համալսարանի  
օպերատիվ պոլիգրաֆիայի ստորաբաժանում  
Երևան, Ալ. Մանուկյան 1:

*ՍԻՐԵԼԻՒՆԻ ԴԻՍՈՐԴՆԵՐ*

Հայաստանի մայր բուհը՝ Երևանի պետական համալսարանը, 90-ամյա արգասավոր ուղի է անցել: Իբրև ուսումնագիտական և կրթանշակութային առաջատար կենտրոն՝ պետհամալսարանը լուրջ և պատվախնդիր առաքելությամբ է հանդես եկել ոչ միայն մեր հանրապետությունում, այլև համայն հայության առջև:

Բոլոր դարաշրջաններում գիտակրթական համակարգի առաջ մղիչ ուժը եղել է իմացության զարգացումը: Այն է եղել գիտության, կրթության նորանոր հորիզոնների նվաճման խթան:

Դեռևս դարեր առաջ, Մաշտոցի բերած կրթության ջահով մեր հավերժության անդորրագիրը կնքվեց: Եվ քանի որ գրի և գրչության փափազը հայի համար կենսական անհրաժեշտություն էր, հանապազօրյա հացից կարևոր, այն հայի կենսունակության առհավատչյան հանդիսացավ՝ մեկընդմիշտ անրագրելով դպրության, կրթության առաջնայնության գաղափարը:

Եվ ինչպես դարեր շարունակ հավատքի օջախներն էին ջերմացնում մարդկանց հոգիները, այնպես էլ Հայաստանի տարբեր շրջաններում բացված կրթօջախները երկնային կանթեղների նման լուսավորում էին ազգը հայոց: Այսօր էլ՝ դարերի հեռավորությունից, խոնարհումով ենք հիշում Վաղարշապատի, Հաղպատի, Անիի, Մեծփա վանքի, Սյունիքի, Երևանի, Շուշիի դպրոցները: Այսօր էլ սրբացնում ենք Տաթևի, Սանահինի և Գլաձորի համալսարանները, կարևորում Մոսկվայի Լազարյան ճեմարանը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Սակայն այսօր էլ միանշանակ կարելի է հավաստել, որ Հայաստանում գիտակրթական նվաճումները ժամանակի ու տարածության հուղվույթում քննություն են բռնում:

Դպրության զարգացումը ասպարեզ բերեց ուսումնամեթոդական բազում ծրագրերով ու կառույցներով հագեցած նոր կրթօջախներ, հանրակրթական, միջնակարգ դպրոցներ, վարժարաններ, ճեմարաններ, ինստիտուտներ, համալսարաններ:

Այս շարքում առաջնայնությունը վերապահված է մայր բուհին, որն իրավամբ այն վաստակել է իր կենսագրությամբ:

ԵՊՀ-ն է այսօր նախապատրաստում և ուղղորդում երթը դեպի գիտություն ու կաճառ, քանզի ինքն է կրթական օջախների ռահվիրան:

Լինելով անկախ ու ինքնիշխան Հայաստանի Հանրապետության առաջատար բուհը՝ պետական համալսարանը ներկայումս աշխարհում առաջնակարգ համալսարանների կողքին լուրջ մրցակից ու գործընկեր է:

Կարևորելով ԵՊՀ-ի տեղն ու դերը գիտակրթական համակարգում՝ եկեք անվարան համախմբվենք նրա շուրջ, սատարենք անմնացորդ ու ազնիվ նվիրումով: Եկեք տերը լինենք մեր հոգևոր արժեքների, պահենք, պահպանենք կրթության ու գիտության վաստակավորին, կերտենք նրա ապագան:

*ԵՊՀ ռեկտոր,*

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ԱՐԱՍ Հ.ՍԻՄՈՆՅԱՆ*

## Ց Ա Ն Կ

### ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2011/2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ծածկագիրը	Մասնագիտությունը	Ընդունելության քննությունները				
		մրցութային			ոչ մրցութային	
1	2	3	4	5	6	7
010100	Մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ)			Հլ(գ)*
010800	Սեխանիկա	Մ(գ)	Ֆ(գ)			Հլ(գ)*
011000	Ակտուար մաթեմատիկա	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)		
010400	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ)			Հլ(գ)*
010500	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	Ֆ(գ)	Մ(գ)			Հլ(գ)*
010600	Ֆիզիկա	Ֆ(գ)	Մ(գ)			Հլ(գ)*
011100	Միջուկային ֆիզիկա	Ֆ(գ)	Մ(գ)			Հլ(գ)*
011200	Ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա	Ֆ(գ)	Մ(գ)			Հլ(գ)*
011300	Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա	Ֆ(գ)	Մ(գ)			Հլ(գ)*
011400	Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում	Ֆ(գ)	Մ(գ)			Հլ(գ)*
020100	Քիմիա	Ք(գ)	Կ(գ)** կամ Ֆ(գ)**			Հլ(գ)*
020900	Էկոլոգիական քիմիա	Ք(գ)	Կ(գ) կամ Ֆ(գ)			Հլ(գ)*
021000	Դեղագործական քիմիա	Ք(գ)	Կ(գ) կամ Ֆ(գ)			Հլ(գ)*
020300	Երկրաբանություն	Մ(գ)	Ֆ(գ)**			Հլ(գ)*
020200	Կենսաբանություն	Կ(գ)	Ք(գ) կամ Ֆ(գ)			Հլ(գ)*
021200	Կենսաֆիզիկա	Կ(գ)	Ք(գ) կամ Ֆ(գ)			Հլ(գ)*
021300	Կենսաքիմիա	Կ(գ)	Ք(գ) կամ Ֆ(գ)			Հլ(գ)*
021500	Կենսաինֆորմատիկա***	Կ(գ)	Մ(գ)	Ֆ(գ)		Հլ(գ)*
020400	Աշխարհագրություն	Ա(գ)	Մ(գ)			Հլ(գ)*
020500	Քարտեզագրություն և կադաստրային գործ	Ա(գ)	Մ(գ)			Հլ(գ)*
020600	Ջրաօդերևութաբանություն	Ա(գ)	Մ(գ)			Հլ(գ)*
100100	Սերվիս	Ա(գ) կամ ՀԺՊ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)		
030400	Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Օտլ(գ)	Հլ(գ)		
031400	Մշակութաբանություն	ՀԺՊ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)		
031500	Արվեստաբանություն	ՀԺՊ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)		
030200	Քաղաքագիտություն	ՀԺՊ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)		
030700	Միջազգային հարաբերություններ	ՀԺՊ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)		
032000	Հանրային կառավարում	ՀԺՊ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)		
080100	Տնտեսագիտության տեսություն	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)		
081800	Կառավարում	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)		
030100	Փիլիսոփայություն	ՀԺՊ(գ) կամ Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)		
030300	Հոգեբանություն	Կ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ) կամ Ռլ(գ)		
040100	Սոցիալական աշխատանք	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)		

1	2	3	4	5	6	7
040200	Սոցիոլոգիա	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ(գ)		
031000	Հայոց լեզու և գրականություն	Հլգ(բ)	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) կամ Օտլ(գ)		
051300	Սոցիալական մանկավարժություն	Հլգ(գ)	Օտլ(գ) կամ Ոլլ(գ)			Մ(գ)*
030600	Լրագրություն	Հլգ(գ)	ՍԱ(գ)	ԲՀՄ(բ)		
031200	Լեզվաբանություն և միջնշակութային հաղորդակցություն՝ ռուսաց լեզու	Ոլլ(գ)	Հլգ(գ)	Օտլ(գ)		
032300	Թարգմանչական գործ՝ ռուսաց և հայերեն լեզուներ	Ոլլ(բ)	Ոլլ(գ)	Հլգ(գ)		
032400	Ռուսաց լեզու և գրականություն	Ոլլ(բ)	Ոլլ(գ)	Հլգ(գ)		
031200	Լեզվաբանություն և միջնշակութային հաղորդակցություն՝ անգլերեն լեզու	Անգլ(բ)	Անգլ(գ)	Հլգ(գ)		
031300	Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(բ)	Անգլ(գ)	Հլգ(գ)		
031300	Գերմաներեն լեզու և գրականություն	Գլ(բ)	Գլ(գ)	Հլգ(գ)		
031300	Ֆրանսերեն լեզու և գրականություն	Ֆրլ(բ)	Ֆրլ(գ)	Հլգ(գ)		
031300	Իսպաներեն լեզու և գրականություն	Օտլ(բ) կամ ԻՍ(բ)	Օտլ(գ) կամ ԻՍ(գ)	Հլգ(գ)		
031300	Իտալերեն լեզու և գրականություն	Օտլ(բ) կամ Իտ(բ)	Օտլ(գ) կամ Իտ(գ)	Հլգ(գ)		
032300	Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն լեզուներ	Անգլ(բ)	Անգլ(գ)	Հլգ(գ)		
032300	Թարգմանչական գործ՝ գերմաներեն և հայերեն լեզուներ	Գլ(բ)	Գլ(գ)	Հլգ(գ)		
032300	Թարգմանչական գործ՝ ֆրանսերեն և հայերեն լեզուներ	Ֆրլ(բ)	Ֆրլ(գ)	Հլգ(գ)		
030800	Արաբագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)		
030800	Իրանագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ(գ) կամ Պլլ(գ)		
030800	Թյուրքագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)		
030500	Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)		
031900	Աստվածաբանություն	ՀԺՊ(գ)	Հլգ(գ)	Օտլ(գ)		

### Ծանոթություն

1. \*\*\* Տվյալ մասնագիտությամբ դիմող դիմորդներին իրավունք է վերապահվում իրենց ընտրությամբ հանձնել նշված երեք՝ «Կենսաբանություն», «Մաթեմատիկա» և «Ֆիզիկա» մրցութային քննություններից երկուսը: Մրցութային անց է կացվում դիմորդի կողմից դիմում-հայտում նշված քննությունների հերթականությամբ՝ որպես առաջին և երկրորդ մրցութային քննություններ: Հավասար միավորների դեպքում առավելություն է տրվում դիմում-հայտում առաջինը նշած առարկային:
2. Լրագրություն մասնագիտության համար նախատեսված քննությունները.

**ՍԱ**-ստեղծագործական աշխատանք և **ԲՀՄ**-բանավոր հաղորդակցման մշակույթ ներբուհական քննություններ են, իսկ **ՀԼԳ(գ)**-հայոց լեզու և գրականություն՝ միասնական:

**ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

Ծածկագիրը	Մասնագիտությունը	Ընդունելության քննությունները				
		մրցութային			ոչ մրցութային	
1	2	3	4	5	6	7
010500	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	Ֆ(գ)	Մ(գ)			Հլ(գ)*
020800	Բնապահպանություն և բնօգտագործում	Կ(գ)	Ֆ(գ) կամ Բ(գ)			Հլ(գ)*
030400	Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Օտլ(գ)	Հլ(գ)		
051000	Մանկավարժություն և հոգեբանություն	Հլ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ(գ) կամ Ու(գ)		
031000	Հայոց լեզու և գրականություն	Հլ(գ)	Հլ(գ)	ՀԺՊ(գ) կամ Օտլ(գ)		
031300	Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(բ)	Անգլ(գ)	Հլ(գ)		
031300	Ֆրանսերեն լեզու և գրականություն	Ֆրլ(բ)	Ֆրլ(գ)	Հլ(գ)		
071100	Կիրառական արվեստ	Գժն	Գն	Կոմպ		Հլ(գ)*
080100	Տնտեսագիտության տեսություն	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)		
100100	Սերվիս	Ս(գ) կամ ՀԺՊ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)		

## ՄԱՔԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Մաթեմատիկոս մասնագետների պատրաստումը ԵՊՀ-ում սկսվել է 1924թ., հասարակագիտական ֆակուլտետի ֆիզիկամաթեմատիկական ենթաբաժնում, որը 1933թ. դարձել է ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ: 1959թ. այն տրոհվել է երկու ֆակուլտետների՝ ֆիզիկայի և մեխանիկամաթեմատիկական: 1963թ. մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետում բացվել է մաթեմատիկական կիրառական մասնագիտությունը, որի հիման վրա 1972թ. ստեղծվել է կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետը: 1988թ. մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը բաժանվել է երկու առանձին՝ մեխանիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետների, որոնք 2007թ. նորից վերամիավորվել են մեկ՝ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում:

Քառասնական թվականներին, պատմականորեն շատ արագ, ԵՊՀ-ում և ՀՀ ԳԱԱ-ում ձևավորվեց այժմ արդեն ճանաչված հայկական մաթեմատիկական դպրոցը, որի հիմնադիրը ակադեմիկոս Արտաշես Շահինյանն էր:

Այսօր ֆակուլտետում դասավանդում են ՀՀ ԳԱԱ 4 ակադեմիկոս և 4 թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների 20 դոկտոր և մոտ 60 թեկնածու: Ֆակուլտետում դասավանդման միջազգային բարձր մակարդակի մասին է վկայում այն փաստը, որ մեր ուսանողները վերջին տարիներին լուրջ հաջողություններ են արձանագրել միջազգային մաթեմատիկական ուսանողական օլիմպիադաներում: Շատ ուսանողներ կարողանում են հաջողությամբ շարունակել ուսումը և գիտական հետազոտություններ կատարել արտասահմանյան առաջատար համալսարաններում՝ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեդիայում, Լեհաստանում և այլուր:

Ֆակուլտետում ուսուցումը կատարվում է երեք մասնագիտություններով՝ մաթեմատիկա, մեխանիկա և ակտուար մաթեմատիկա:

Մաթեմատիկան մարդկային մտքի ամենակարևոր և ամենակատարյալ ստեղծագործություններից է: Այն նույնքան հին է, որքան մարդկությունն ինքը, սակայն շարունակում է բուռն զարգացում ապրել՝ գտնելով նորանոր կիրառություններ մարդկային գործունեության ամենատարբեր բնագավառներում: Այսօր դժվար է գտնել որևէ գիտական ուղղություն, որը չի օգտվում մաթեմատիկական մեթոդներից և մաթեմատիկայի նվաճումներից: Այս մասին են վկայում մաթեմատիկայի երիտասարդ և արագ զարգացող այնպիսի ուղղությունները, ինչպիսիք են բիոմաթեմատիկան, ակտուարական մաթեմատիկան, ֆինանսական մաթեմատիկան և այլն:

Մեխանիկան գիտություն է մարմինների հավասարակշռության, շարժման և ձևափոխությունների մասին, որի գլխավոր խնդիրն է հայտնաբերել, ճանաչել ու գործնականում կիրառել մարմինների մեխանիկական շարժումների և փոխազդումների ընդհանուր օրինաչափությունները: ԵՊՀ մեխանիկոսների գիտական ձեռքբերումները համաշխարհային ճանաչում ունեն և կարևոր են ժամանա-



կակից գիտության ու տեխնիկայի զարգացման գործում:

Մեր օրերի մեխանիկոսներին բնորոշ է ամենատարբեր մաթեմատիկական գիտելիքների կիրառումը՝ օգտագործելով տեսական և կիրառական մաթեմատիկաների նորագույն մեթոդները:

Ֆակուլտետի ղեկավարությունը կարևորում է մաթեմատիկայի այնպիսի ուղղությունների ներդրումն ու զարգացումը, որոնք այսօր ունեն առավել մեծ պահանջարկ: Այս առումով նշանակալի քայլ էր ակտուար մաթեմատիկա մասնագիտության ներդրումը: Ակտուարն իր մեջ համակցում է մաթեմատիկոսի, ֆինանսիստի, սոցիոլոգի ու ներդրումային կառավարչի մասնագիտությունները: Ակտուարները առևտրային ու ֆինանսական կշռադատված խորհրդատվություն են տրամադրում տնտեսության, ֆինանսների ու գործարար ոլորտներում՝ ապագայում սպասվող երևույթները կանխատեսելու, վերլուծելու և դրանց ֆինանսական հետևանքները գնահատելու համար:

Արագ զարգացող և փոփոխվող շուկայական տնտեսակարգը շեշտակի մեծացնում է կազմակերպությունների ֆինանսական ռիսկերը, ինչը հաճախ հանգեցնում է սնանկացման: Նման բացասական երևույթներից խուսափելու միակ ճանապարհը այդ ռիսկերի գնահատումն է և հնարավոր զարգացումների կանխատեսումը: Ակտուարն այն մասնագետն է, որը վերլուծում է այդ ռիսկերի ֆինանսական հետևանքները: Ջարգացած երկրներում ապահովագրությունը կայացած ոլորտ է և ավանդաբար ակտուարների ամենախոշոր գործատուն է, քանզի ապահովագրական ընկերությունների վճարունակության իրավական երաշխավորները ակտուարներն են: Կենսաթոշակային ոլորտում ակտուարները խորհրդատվություն են տրամադրում աշխատողներին, արհմիություններին ու հոգաբարձուներին՝ մասնավոր կենսաթոշակային և աշխատողներին նպաստ տրամադրող ծրագրերի մասին, ֆինանսավորման ու ղեկավարման գործում: Բացի այդ, ակտուարների մեծ պահանջ կա փոխհատուցման վերաբերյալ խորհրդատվության, ֆինանսական ռիսկերի գնահատման, ներդրումների կառավարման, ֆինանսական պլանավորման, աշխատողների վարձատրության, բուժսպասարկման կառավարման և այլ ոլորտներում:

Ֆակուլտետի բոլոր երեք մասնագիտություններով սովորող ուսանողները ստանում են հիմնարար մաթեմատիկական կրթություն, որը բարեբեր հող է ստեղծում մասնագիտական ոլորտում հաջողությունների հասնելու համար: Ուսուցման համակարգը եռաստիճան է՝ բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա:

Բակալավրիատն ավարտած լավագույն ուսանողները կրթությունը շարունակում են մագիստրատուրայում, որտեղ ուսման տևողությունը 2 տարի է: Այսօր ֆակուլտետում գործում է 8 մագիստրոսական ծրագիր: Հիմնական գիտական ուղղություններն են՝ ֆունկցիաների տեսություն, դիֆերենցիալ հավասարումներ, ֆունկցիոնալ անալիզ, հավանականությունների տեսություն, օպտիմալ կառավարում, հանրահաշիվ, երկրաչափություն, պինդ մարմնի մեխանիկա, տեսա-

կան մեխանիկա, ակտուար մաթեմատիկա:

Մագիստրատուրայի առավել շնորհալի, մաթեմատիկական բարձր ունակություններով օժտված շրջանավարտները, ովքեր նպատակ ունեն իրենց հետագա կյանքը կապել գիտության հետ, ընդունվում են ասպիրանտուրա: Հետագայում նրանք աշխատանքի են անցնում ԵՊՀ-ի կամ այլ բուհերի (այդ թվում՝ նաև արտասահմանյան) մաթեմատիկական ամբիոններում, ակադեմիական ինստիտուտներում և այլն:

Գիտնական դառնալը միակ ուղին չէ, որը կարող է ընտրել մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ ընդունված ուսանողը: Ֆակուլտետի շրջանավարտներն այսօր հաջողությամբ աշխատում են ամենատարբեր բնագավառներում՝ գործարարությունից մինչև քաղաքականություն:

Մաթեմատիկա և մեխանիկա մասնագիտություններով բակալավրիատն ավարտած ուսանողները բակալավրի աստիճանի հետ մեկտեղ ստանում են նաև մանկավարժի որակավորում և կարող են աշխատել հանրապետության դպրոցներում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ, քանի որ հիմնարար մաթեմատիկական կրթությունը էական նշանակություն ունի դպրոցում մաթեմատիկա բարձր մակարդակով դասավանդելու համար:

Ֆակուլտետում կարևորվում է բարձր մակարդակով համակարգչային կրթությունը և ժամանակակից ծրագրավորման լեզուների դասավանդումը: Ֆակուլտետի բազմաթիվ շրջանավարտներ այսօր հաջողությամբ աշխատում են որպես ծրագրավորող տարբեր հաստատություններում:

Ըստ կանխատեսումների՝ առաջիկա տարիներին Հայաստանում կայուն աճ պետք է ունենա ակտուար մաթեմատիկոսի պահանջարկը՝ պայմանավորված նախատեսվող պետական ու կամավոր կենսաթոշակային ապահովագրության, պարտադիր բժշկական ապահովագրության և մասնավոր ապահովագրական համակարգերի ներդրումներով: Ներկայումս այդ մասնագիտությամբ ավարտած ուսանողներն աշխատում են ապահովագրական ընկերություններում, տարբեր առևտրային բանկերի և այլ կազմակերպությունների վարկային, ֆինանսական ու վերլուծական բաժիններում, «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոնի ակտուար գրասենյակում: Ակտուար մաթեմատիկայի ամբիոնը գործնական հարաբերությունների մեջ է ապագա ակտուարների պոտենցիալ գործատուների հետ՝ Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության, ՀՀ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի, ՀՀ Կենտրոնական բանկի, «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոնի, ապահովագրական ընկերությունների և բանկերի հետ:

Ֆակուլտետի նորաստեղծ ընթերցասրահը հազեցած է ուսումնական ծրագրերին համապատասխան գրականությամբ, և շատ ուսանողներ այստեղ են կատարում իրենց առաջադրանքներն ու պատրաստվում քննություններին, նմանապես կարող են օգտվել նաև այստեղ գործող ինտերնետային ցանցից՝ լրացուցիչ

տեղեկատվություն ստանալու համար:

Ֆակուլտետում սովորում են 736 ուսանողներ, որոնցից 606-ը՝ բակալավրիատում, իսկ 130-ը՝ մագիստրատուրայում: Շրջանավարտներից 26-ը ուսումը շարունակում են ասպիրանտուրայում:

2007թ. ֆակուլտետում իրականացվում է նաև հեռակա ուսուցում, որտեղ սովորում է 51 ուսանող:

Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է

- մաթեմատիկա
- մեխանիկա
- ակտուար մաթեմատիկա

մասնագիտություններով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.

Մասնագիտություն	Նախորդում	2010թ.		2009թ.		2008թ.			
		Հիմնական մրցույթ		Հարցագրույց		Հիմնական մրցույթ		Հարցագրույց	
		Միջևնորմների թիվը	Տեղերի թիվը	Միջևնորմների թիվը	Տեղերի թիվը	Միջևնորմների թիվը	Տեղերի թիվը	Միջևնորմների թիվը	Տեղերի թիվը
Մաթեմատիկա	Անվճ	76	20	89	38	55	21	27	17
	Վճ	-	-	-	22	-	17	-	5
	ԱՏ	-	55	-	15	-	15	-	-
Մեխանիկա	Անվճ	18	9	23	17	31	10	5	7
	Վճ	-	-	-	8	-	5	-	3
	ԱՏ	-	26	-	10	-	10	-	-
Ակտուար մաթեմատիկա	Անվճ	96	6	70	10	46	10	-	-
	Վճ	-	-	-	10	-	10	-	-
	ԱՏ	-	49	-	35	-	30	-	-

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.				
	Հիմնական մրցույթ		Հարցագրույց			Հիմնական մրցույթ		Հարցագրույց		
	Անվճ	Վճ(ԱՏ)	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ
Մաթեմատիկա	29.25	21.75	25.5	25.3	16	31	31.3	20.6	31.8	25.5
Մեխանիկա	24	16.75	19.3	24.3	18.8	31.3	29.8	23.1	25.3	25

Ակտուար մաթեմ.	53.75	36.75	47.3	44.3	34.4	53.3	50.3	34.8	-	-
----------------	-------	-------	------	------	------	------	------	------	---	---

**ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ**

Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը ստեղծվել է 1971թ.: Իր գոյության տարիների ընթացքում ֆակուլտետը տվել է շուրջ 6000 շրջանավարտ, որոնցից շատերն իրենց ծանրակշիռ տեղն են գտել մեր հանրապետությունում և նրա սահմաններից դուրս:

Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության գծով կադրերի պատրաստման գործում ֆակուլտետը մեր հանրապետության կրթական համակարգում զբաղում է առաջատար դիրք:

Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի բակալավրը պատրաստված է առավելապես հետազոտական գործունեություն կատարելու այն ոլորտներում, որոնք օգտագործում են համակարգչային տեխնոլոգիաները և կիրառական մաթեմատիկայի մեթոդները, գիտության, տեխնիկայի, տնտեսության և կառավարման խնդիրների լուծման, ծրագրային խնդիրների մշակման ու կիրառման համար:

Շրջանավարտներից շատերը կարող են աշխատանք գտնել կոնստրուկտորանախագծային, կառավարման և ֆինանսական գործունեությամբ, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաներով զբաղվող հիմնարկներում:

Ֆակուլտետն ակտիվ մասնագիտական գործունեություն է ծավալում հանրապետության գիտահետազոտական կենտրոնների, պետական կառավարման մարմինների, կրթական հաստատությունների և սեփականության տարբեր ձևեր ունեցող կազմակերպությունների հետ, որոնք իրենց աշխատանքում օգտագործում են կիրառական մաթեմատիկայի մեթոդները և համակարգչային տեխնոլոգիաները: Վերոնշյալ ոլորտներում իրենց աշխատանքն են գտնում մեր շրջանավարտները: Ֆակուլտետն անմիջական կապեր ունի արտասահմանյան, մասնավորապես՝ Գերմանիայի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի Դաշնության և այլ երկրների մի շարք համալսարանների և գիտական կենտրոնների հետ: Այս կապերը կարևոր նշանակություն ունեն նաև ֆակուլտետի ուսանողների համար, որոնցից ոմանք ուսումը շարունակում են այդ երկրների տարբեր համալսարաններում: Ֆակուլտետում արդիականացվել և ժամանակակից տեխնիկայով են հագեցվել համակարգչային լսարանները, ինչը հնարավորություն է տվել ուսումնական պլանում կատարել փոփոխություններ՝ ժամանակի պահանջներին համապատասխան:

Ներկայումս հանրապետությունում բուռն զարգացում ապրող բարձր տեխնոլոգիաների և տեղեկատվության ուղղությունը պահանջում է ամենօրյա լուրջ և հետևողական աշխատանք, որպեսզի ուսումնական գործընթացը համապատասխանի ժամանակակից չափանիշներին:

Երևանի պետական համալսարանը միշտ տարբերվել է այլ բուհերից կրթության կազմակերպման իր յուրահատուկ ձևով ու ոճով. այսօր ֆակուլտետի ամբիոնները և մեթոդական խորհուրդը կատարում են հնարավորը՝ պահպանելու

և զարգացնելու համալսարանական կրթության չափանիշները: Ֆակուլտետի ուսանողներն ակտիվ մասնակցություն են ունենում ծրագրավորման հանրապետական և միջազգային օլիմպիադաներում:

Հարկ է նշել, որ ծրագրավորման համաշխարհային օլիմպիադայում ֆակուլտետի թիմը միշտ ունենում է մասնակցություն և հաջողությամբ է հանդես գալիս:

Ֆակուլտետում գործող երեք ամբիոններում՝ ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների, թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման, դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի, իրենց ուսումն են ստանում 734 ուսանողներ, որոնցից 645-ը՝ բակալավրիատում, 89-ը՝ մագիստրատուրայում: Շրջանավարտներից 15-ը կրթությունը շարունակում են ասպիրանտուրայում: 2007թ-ից ֆակուլտետում իրականացվում է նաև հեռակա ուսուցում, որտեղ սովորում են 55 ուսանողներ:

Ֆակուլտետում գործում է «Մաթեմատիկական կիրառական կիրառական և մաթեմատիկական տրամաբանության» ատենախոսությունների պաշտպանության մասնագիտական խորհուրդը:

Ֆակուլտետում դասավանդում են ՀՀ ԳԱԱ 2 ակադեմիկոս, ֆիզմաթ. գիտությունների 7 դոկտոր պրոֆեսոր և 38 թեկնածու, դոցենտ, որոնցից շատերը ճանաչված մասնագետներ են ոչ միայն մեր հանրապետությունում, այլ նաև նրա սահմաններից դուրս:

Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է

- ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա

մասնագիտությամբ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.

Մասնագիտություն	Հասկողություն	2010թ.		2009թ.		2008թ.	
		Դիմորդների թիվ	Մուտքի վճարված	Դիմորդների թիվ	Մուտքի վճարված	Դիմորդների թիվ	Մուտքի վճարված
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Անվճ	322	30	331	55	330	55
	Վճ	-	-	-	80	-	80
	ԱՏ	-	115	-	10	-	10

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.		
	Անվճ	Վճ(ԱՏ)	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ	ԱՏ
Ինֆորմ. և կիրառ. մաթեմ.	36.75	26.75	33.8	29.1	16.5	36.5	34	24



## ՖԻԶԻԿԱՅԻ ՖԱԿՈՒՆԵՏ

Բնագիտական հետազոտությունների արձանագրությունները Հայաստանում սկիզբ են առնում դեռևս մ.թ. V-VII դարերից՝ սկսած Դավիթ Անհաղթից ու Անանիա Շիրակացուց և առավել արձանավորվում են՝ պայմանավորված Գլաձորի համալսարանի հիմնադրմամբ՝ XIII դարում: Սակայն հետագայում այդ հետազոտությունները շարունակություն չեն ունենում:

1919թ. համալսարանական կրթության վերաստեղծումը Հայաստանում և XX դարասկզբի ֆիզիկայի հսկայական նվաճումները օրակարգային են դարձնում նաև ֆիզիկամաթեմատիկական մասնագիտության գծով կադրերի պատրաստումը համալսարանում: Այդ ասպարեզում մասնագետների պատրաստումը սկսվում է 1922թ.:

Հայաստանում ֆիզիկայի զարգացման գործում առաջին նշանակալից իրադարձությունը 1933թ. համալսարանի կազմում ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ստեղծումն էր՝ ֆիզիկայի և մաթեմատիկայի առանձին բաժիններով:

Ֆիզիկայի զարգացումը խթանելու և նոր կադրերով ապահովելու պահանջները բավարարելու նպատակով՝ 1959թ. համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետից բաժանվում և կազմավորվում է ֆիզիկայի ֆակուլտետը, որի առաջին դեկանն էր ՀԽՍՀ ԳԱ քղթակից անդամ Նորայր Քոչարյանը:

Ներկայումս ֆիզիկայի ֆակուլտետում գործում են 7 ամբիոններ՝ ընդհանուր ֆիզիկայի ու աստղաֆիզիկայի, միջուկային ֆիզիկայի, տեսական ֆիզիկայի, պինդ մարմնի ֆիզիկայի, օպտիկայի, մոլեկուլային ֆիզիկայի և բարձրագույն մաթեմատիկայի, որտեղ դասավանդում են ՀՀ ԳԱ 3 ակադեմիկոսներ, ՀՀ ԳԱ 4 քղթակից անդամներ, գիտության 31 դոկտորներ և գիտությունների մոտ 60 թեկնածուներ:

Ֆակուլտետում սովորում են 505 ուսանողներ, որոնցից 391-ը բակալավրիատում, 114-ը՝ մագիստրատուրայում: Շրջանավարտներից 36-ը կրթությունը շարունակում են ասպիրանտուրայում: 2007թ-ից սկսած ֆակուլտետը ֆիզիկոս-մանկավարժներ է պատրաստում հեռակա ուսուցմամբ, որտեղ սովորում է 27 ուսանող:

Նշված ամբիոնները մասնագետներ են պատրաստում երեք մասնագիտությունների՝ ֆիզիկա, միջուկային ռեակտորների ֆիզիկա, կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա գծով:

Ֆիզիկա մասնագիտությունն ունի 5 մասնագիտացումներ՝ կոնդենսացված միջավայրերի ֆիզիկա, լազերային ֆիզիկա, տեսական ֆիզիկա և մաթեմատիկա, միջուկային ֆիզիկա և աստղաֆիզիկա, մակրոմոլեկուլների ֆիզիկա և կենսաֆիզիկա: Կարևոր է նշել, որ այս մասնագիտությամբ շրջանավարտները ստանում են նաև մանկավարժի որակավորում:

Միջուկային ռեակտորների ֆիզիկա մասնագիտությամբ կադրեր են պատրաստվում Հայկական ատոմակայանի, Հայատոմ ինստիտուտի, ինչպես նաև Հայպետատոմհսկողություն կազմակերպության համար: Այս ուղղության առաջնայնությունը Հայաստանի համար կարևորվում է ատոմային էներգետիկայի զարգացման ակնկալվող հեռանկարներով:

Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա մասնագիտությամբ բարձրակարգ

մասնագետներ են պատրաստում համակարգչային մեթոդների խորացված իմացությամբ, ովքեր ունակ են աշխատելու ոչ միայն ֆիզիկական խնդիրների համակարգչային մոդելավորման ասպարեզում, այլև բազմաթիվ այլ հարակից բնագավառներում:

Մագիստրոսական կրթության սահմաններում ֆակուլտետում մշակված է ճկուն համակարգ, ինչը թույլ է տալիս արագորեն արձագանքել գիտահետազոտական ինստիտուտների և գիտական կենտրոնների, ինչպես նաև արդյունաբերական ձեռնարկությունների կողմից շրջանավարտներին ներկայացվող պահանջներին: Մասնավորապես, նախապատրաստված են 13 մագիստրոսական ծրագրեր (այդ թվում՝ նաև հանրապետության մի շարք գիտական կենտրոնների հետ համատեղ), որոնց ընտրությունը կատարվում է մագիստրոսների ցանկությամբ՝ մասնագետների պահանջարկին համապատասխան:

Ֆիզիկայի ֆակուլտետին վերաբերող ուսումնական և գիտահետազոտական բնագավառների կարևոր հարցերը քննարկվում են ֆակուլտետի խորհրդի նիստերում: Խորհուրդը հանգամանորեն քննարկում և տպագրության է երաշխավորում ուսումնական ձեռնարկներ, ինչպես նաև դասընթացների դասախոսություններ՝ հիմնականում մայրենի լեզվով:

Ուսումնական գործընթացի, ինչպես նաև ուսումնական ծրագրերի արդիականացման հարցերի քննարկումն իրականացվում է ֆակուլտետի մեթոդական խորհրդի պարբերաբար կայացող նիստերում:

Հայտնի ասույթ է, որ լավ է մեկ անգամ տեսնել, քան տասն անգամ լսել: Ուստի և, ֆիզիկոս-մասնագետի կրթության ամենակարևոր բաղադրիչներից մեկը լաբորատոր աշխատանքներն են:

Ֆիզիկայի ֆակուլտետի ուսումնական լաբորատորիաներում կատարվող փորձերը թե՛ գիտական, թե՛ տեխնիկական բարդությամբ համապատասխանում են գիտության ներկայիս պահանջներին:

Ֆակուլտետն ունի նաև ժամանակակից համակարգչային տեխնիկայով հագեցված ուսումնական լսարաններ, որոնք հնարավորություն են ընձեռում ուսանողներին ծանոթանալու ժամանակակից գիտափորձի և տեխնիկայի ղեկավարման ավտոմատացված համակարգերի, ինչպես նաև ծրագրավորման և մաթեմատիկական մոդելավորման ժամանակակից լեզուների:

Ներկայումս աշխատանքներ են ծավալվում ուսումնական պրոցեսում օգտագործվող լաբորատոր սարքավորումների արդիականացման ուղղությամբ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը զգալի աշխատանք են տանում ուսանողների առօրյան միօրինակությունից զերծ պահելու ուղղությամբ: Կազմակերպված միջոցառումների թվին են պատկանում ուսանողական օլիմպիադաները, գիտական կոնֆերանսները, ինչպես նաև հանդիպումները հանրապետության և արտասահմանյան առաջնակարգ մասնագետների հետ: Ֆակուլտետը լավ ավանդույթներ ունի նաև «Ֆիզիկոսի օր» ամենամյա տոնակատարության կազմակերպման ուղղությամբ:

Այսօր բարձրակարգ մասնագետների պատրաստման գործընթացն ան-



հնար է պատկերացնել առանց ակտիվ գիտական գործունեության: Պատահական չէ, որ ֆիզիկայի ֆակուլտետը հանրապետության ճանաչված գիտական կենտրոններից է: Ակտիվ գիտական աշխատանքներն իրականացվում են ֆակուլտետում գործող հինգ պրոբլեմային լաբորատորիաներում, միջազգային գիտական ծրագրերի և պետքույն տային ֆինանսավորումով իրագործվող թեմաների սահմաններում: Ներկայումս ֆակուլտետում իրականացվում են գիտահետազոտական աշխատանքներ 13 միջազգային դրամաշնորհների և 15 բյուջետային ֆինանսավորմամբ թեմաների սահմաններում:

Ֆակուլտետի շրջանավարտների գիտելիքները հնարավորություն են ընձեռում նրանց աշխատելու ոչ միայն հանրապետության, այլ նաև աշխարհի առաջատար գիտահետազոտական լաբորատորիաներում:

Ֆակուլտետի ամբիոնները ներկայումս ակտիվ գիտական կապեր ունեն Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ-ի, Կանադայի, Ճապոնիայի և մի շարք այլ երկրների ճանաչված գիտական կենտրոնների հետ:

Ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է հետևյալ մասնագիտություններով

- ֆիզիկա
- կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա
- միջուկային ռեակտորների ֆիզիկա:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին Ֆիզիկայի ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.

Մասնագիտություն	Փամիտում	2010թ.		2009թ.		2008թ.			
		Գիմորդների թիվ		Գիմորդների թիվ		Գիմնական մրցույթ		Հարցագրույց	
		Սերերի թիվ	Սերերի թիվ	Սերերի թիվ	Սերերի թիվ	Սերերի թիվ	Սերերի թիվ	Սերերի թիվ	Սերերի թիվ
Ֆիզիկա	Անվճ	87	22	64	40	60	24	20	16
	Վճ	-	-	-	20	-	17	-	3
	ԱՏ	-	43	-	5	-	5	-	-
Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	Անվճ	15	3	26	5	19	3	2	2
	Վճ	-	-	-	5	-	4	-	1
	ԱՏ	-	17	-	10	-	10	-	-
Միջուկային ռեակտորների ֆիզիկա	Անվճ	21	10	5	5	8	3	-	2
	Վճ	-	-	-	5	-	4	-	1
	ԱՏ	-	17	-	10	-	10	-	-

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.				
	Գիմորդների թիվ		Գիմորդների թիվ			Գիմնական մրցույթ		Հարցագրույց		
	Անվճ	Վճ(ԱՏ)	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ
Ֆիզիկա	30.75	20.75	22.8	22.8	17.5	30.8	30.6	21.1	34	26.8

Կիրառ. մաթ. և ֆիզիկա	23.5	22	27.3	26.1	16.3	34.6	33.6	20.8	28.5	22.3
Միջուկային ռեակտորների ֆիզիկա	22.75	16.25	17.5	21.3	16.8	25	28.5	21.8	31.5	-

## ՈԱՂԻՈՖԻԶԻԿԱՅԻ ՖԱԿՈՒՆԵՏ

Ուղիորդական ֆակուլտետը կազմավորվել է 1975 թ.՝ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի հիման վրա: Դա այն պահն էր, երբ էլեկտրամագնիսական ալիքների արտասովոր առանձնահատկությունների համակողմանի հետազոտությունները հանգեցրել էին նշանակալից տեխնիկական նվաճումների, իսկ առաջիկայում ակնկալվող արդյունքները աննախադեպ առաջընթաց էին կանխատեսում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ հեռահաղորդակցությունը, տեղեկատվության հաղորդման ու նշակման համակարգերը, մարդու առողջական վիճակը ախտաբանող սարքերը, տիեզերական մարմինների ռադիոճառագայթումը և այլն: Անկարելի է պատկերացնել քաղաքակրթությունը առանց ռադիոյի, հեռուստատեսության, համակարգիչների, ինտերնետի, բջջային հեռախոսների, ծանրագույն հիվանդությունները վաղ շրջանում ախտորոշող սարքերի, լազերների և այլն: Ֆակուլտետ ստեղծելու նպատակն էր ետ չմնալ այն արագընթաց գնացքից, որում էլեկտրամագնիսական պրոցեսների հետազոտողներն էին: Հենց սկզբից պարզ էր, որ ֆակուլտետի պատրաստած կադրերը համակողմանի հիմնարար գիտելիքներ ստանալուց բացի պետք է տիրապետեին նաև տեխնիկական գիտելիքներին: Ֆակուլտետի գործունեության նպատակը եղել և մնում է միջազգային չափանիշներին բավարարող հմուտ ճարտարագետ հետազոտողների պատրաստումը կիրառական ֆիզիկայի ոլորտում: Այս ոլորտը մինչ այժմ էլ խիստ արդիական է, և դրանով է զբաղված առաջատար երկրներում աշխատող ֆիզիկոսների ճնշող մեծամասնությունը:

Ֆակուլտետում գործում է կրթության եռամակարդակ համակարգը, ուր շրջանավարտները ստանում են բակալավրի, մագիստրոսի և ասպիրանտի որակավորումներ երեք մասնագիտություններով:

«Ուղիորդական և էլեկտրոնիկա» մասնագիտությունը յուրացնող ուսանողները բացի ֆիզիկայի հիմունքները ներկայացնող ավանդական դասընթացներից հանգամանալի գիտելիքներ են ստանում էլեկտրամագնիսական ալիքների ճառագայթման աղբյուրներին, դրանց տարածման առանձնահատկություններին և գրանցող սարքերին նվիրված առարկաներից:

Դա հնարավորություն է տալիս դասընթացը հաջողությամբ ավարտած «ուղիորդական» որակավորում ստացած մասնագետին աշխատել ամենատարբեր ուղղություններով՝ սկսած գիտակրթական հաստատություններում գիտական հետազոտություններից մինչև ճարտարագիտական բնույթի աշխատանքը էլեկտրատեխնիկական հաստատություններում:

«Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա» մասնագիտությամբ որակավորում ստացած շրջանավարտները գիտելիքներ են ստանում կիսահաղորդչային միկրո և նանոէլեկտրոնիկայի բնագավառից: Ֆակուլտետում առկա ամենաարդիական սարքավորումները նրանց թույլ են տալիս ամրապնդել գիտելիքները միջազգային չափանիշների պահանջներին բավարարող լաբորատորիաներում, իսկ նրանց ավարտական աշխատանքներում և թեզերում գիտական

արժեք ներկայացնող արդյունքները հազվադեպ չեն: Հատկանշական է, որ կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկայի բուռն զարգացող բնագավառն ըստ ամենայնի պետք է հանդիսանա մեր երկրի ամենահեռանկարային ճյուղերից մեկը՝ իր արտադրությամբ և գիտական ենթակառուցվածքով:

2008թ-ից ֆակուլտետի ուսանողները հնարավորություն ունեն յուրացնել նոր մասնագիտություն՝ «Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում»:  
Այս մասնագիտությունը յուրացրած շրջանավարտները կարող են աշխատել ժամանակակից կապի բազմապիսի ուղիները ապահովող հաստատություններում և դրանց հետագա զարգացմանը միտված գիտահետազոտական ինստիտուտներում: Ազդանշանների համակարգչային մշակման եղանակները և դրանց արագագործությունը վճռական նշանակություն ունեն ամենատարբեր բնագավառներում՝ ռազմական խնդիրներից սկսած մինչև արտադրական և գիտական սարքերի ավտոմատացում:

Այս բնագավառը նոր է ձևավորվում հանրապետությունում և ներկայումս մեծ պահանջարկ ունի:

Միկրոէլեկտրոնիկայի ոլորտում աշխարհում առաջատար դիրք զբաղեցնող «Սինոփսիս» կազմակերպությունը, ուր աշխատում են գերմեծ ինտեգրալային սխեմաների նախագծելու ուղղությամբ մասնագիտացած հմուտ գիտնականներ, լայն գործունեություն է ծավալել մեր երկրում: Այս կազմակերպությունը մեծ ուշադրություն է դարձնում նաև բանիմաց երիտասարդ մասնագետների պատրաստման խնդրին: Ռադիոֆիզիկայի ֆակուլտետին է վերապահված այս մասնագիտությամբ դասընթացների կազմակերպման, ուսանողների ընտրության և մատուցվող գիտելիքների յուրացումը վերահսկելու գործը: Հատկանշական է, որ բարձրորակ կադրերի պահանջարկ ունեցող «Սինոփսիս» կազմակերպությունը գոհունակությամբ աշխատանքի է ընդունում նշված ուղղությամբ մասնագիտացած շրջանավարտների մեծ մասին:

Ֆակուլտետում կատարվող ակտիվ գիտական հետազոտությունները, արժեքավոր լինելով հանդերձ, նպաստավոր պայմաններ են ստեղծում ուսանողությանը հասու դարձնելու գիտության արդի նվաճումներին: Յուրաքանչյուր տարի միջազգային մանուկում ֆակուլտետի աշխատակիցների կողմից հրապարակված գիտական աշխատանքների թիվը հիսունից ավելին է:

Ֆակուլտետի կազմում գործում է «Կիսահաղորդչային սարքերի և նանոտեխնոլոգիայի կենտրոն»-ը, որտեղ կատարվող գիտական հետազոտությունները ունեն ինչպես կարևոր հիմնարար, այնպես էլ կիրառական նշանակություն: Հետազոտությունները նվիրված են արեգակնային էներգիայի օգտագործման նոր արդյունավետ ուղիների որոնմանը, շրջակա միջավայրի աղտոտվածության աստիճանը որոշող սարքերի ստեղծմանը և մի շարք այլ արդիական խնդիրներին: Հատկանշական է, որ կենտրոնի գործունեությունը խթանվում է բազմաթիվ միջազգային դրամաշնորհներով, ինչը նաև կատարվող գիտական աշխատանքների արժանի գնահատականն է:

Ֆակուլտետը միջազգային գիտական համագործակցություն է ծավալում ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ճապոնիայի, Իտալիայի, Հարավային Կորեայի մի շարք ճանաչված կենտրոնների և համալսարանների հետ:

Գիտական թեզեր պաշտպանած երիտասարդ գիտնականների մի մասը ներկայումս իրենց որակավորումը բարձրացնում է արտասահմանում: Հատկանշական է, որ համալսարանում կազմակերպվող բոլոր միջոցառումներին ակտիվորեն մասնակցում են ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանողները:

Ֆակուլտետում այսօր գործում են չորս ամբիոններ՝ գերբարձր հաճախությունների ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության, ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի, կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի, բարձրագույն մաթեմատիկայի, որտեղ աշխատում են բարձրորակ մասնագետներ: Ֆակուլտետի շրջանավարտներից շուրջ 200-ը ստացել են տարբեր գիտական աստիճաններ, դարձել առաջատար գիտնականներ և արտադրության ղեկավարներ: Նրանց զգալի մասն աշխատում է բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպես նաև ռադիոէլեկտրոնային արդյունաբերության գիտաարտադրական հիմնարկներում:

Իր ստեղծման օրից մինչ այսօր ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանողությունը եղել է Երևանի պետական համալսարանի ուսանողության առաջատար ջոկատներից մեկը:

Ֆակուլտետում դասավանդում են ՀՀ ԳԱԱ 2 ակադեմիկոսներ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների 11 դոկտոր և 26 թեկնածու: Այժմ ֆակուլտետում սովորում է 410 ուսանող, որոնցից 345-ը՝ բակալավրիատում, 65-ը՝ մագիստրատուրայում, իսկ 18-ը ուսումը շարունակում է ասպիրանտուրայում: 2008թ. ֆակուլտետում իրականացվում է նաև հեռակա ուսուցում, որտեղ այժմ սովորում է 23 ուսանող:

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է

- ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա
- կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա
- հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում

մասնագիտություններով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներից Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.

Մասնագիտություն	Բանաձև	2010թ.		2009թ.		2008թ.			
						Հիմնական մրցույթ		Հարցագրույց	
		Միջոցների քիվ	Տեղերի քանակ	Ռիսկայինների քիվ	Տեղերի քանակ	Միջոցների քիվ	Տեղերի քանակ	Ռիսկայինների քիվ	Տեղերի քանակ
Ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա	Անվճ	86	17	73	30	76	17	18	13
	Կճ	-	-	-	23	-	20	-	3
	ԱՏ	-	46	-	10	-	10	-	-
Կ/Հ ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա	Անվճ	15	5	17	10	13	7	3	3
	Կճ	-	-	-	5	-	3	-	2
	ԱՏ	-	15	-	5	-	5	-	-
Հեռահաղ. և ազդանշ. մշակում	Անվճ	18	4	19	5	9	3	2	2
	Կճ	-	-	-	5	-	3	-	2
	ԱՏ	-	16	-	10	-	10	-	-

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.				
						Հիմնական մրցույթ			Հարցագրույց	
	Անվճ	Կճ(ԱՏ)	Անվճ	Կճ	ԱՏ	Անվճ	Կճ	ԱՏ	Անվճ	Կճ
Ռադիոֆիզիկա և էլ.	30.5	21.75	26	24.1	19.5	33.5	31	22.3	34.5	27
Կ/Հ ֆիզիկա և միկրոէլ.	25.25	19.5	23.5	22.3	-	31.3	31.3	-	26	-
Հեռահաղ. և ազդ. մշ.	30.75	20.5	29.8	24.3	21.1	30.1	28.3	-	35.3	-

## ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒՆԵՏ

Քիմիան գիտություն է կյանքի մասին և օգնում է բացահայտելու բնության զաղտմիքները, լուծելու շատ հիմնարար պրոբլեմներ մարդու առողջության, երկարակեցության, նոր տեսակի օրգանիզմների կենսասինթեզի, սկզբունքորեն նոր կատալիտիկ համակարգերի ստեղծման, նոր տեխնոլոգիական պրոցեսների և, ընդհանրապես, նոր նյութերի ստեղծման բնագավառներում: Նոր նյութերի կիրառությունը տեխնիկայում իսկական հեղաշրջում է առաջացրել այնպես, ինչպես իր ժամանակին շոգեքարշի, իսկ հետագայում էլեկտրականության կիրառումը արդյունաբերության մեջ:

Հսկայական է քիմիայի դերը էներգետիկայի զարգացման ոլորտում, որը ոչ միայն առաջարկում է վառելիքի տարբեր աղբյուրներ, այլև միջուկային վառելիք, ծանր ջուր և այլ նյութեր ատոմակայաններին, իրականացնում է ռադիոակտիվ թափոնների օգտահանումը (ուտիլիզացիան):

Մեծ է քիմիայի դերը բնապահպանության, գյուղատնտեսության, շինարարության և այլ բնագավառներում, այսինքն՝ տնտեսության քիմիացումը անհրաժեշտ է բոլոր երկրներին: Եվ հասկանալի է, թե ինչու քիմիայի դասավանդումը համալսարանում սկսվել է դեռ 1921թ. որն իրականացնում էր այն ժամանակ կազմակերպված՝ քիմիայի միացյալ ամբիոնը:

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում գործում է եռաստիճան ուսուցման համակարգ: Բակալավրիատում մասնագետներ են պատրաստվում՝ «Քիմիա», «Էկոլոգիական քիմիա» և «Դեղագործական քիմիա» մասնագիտություններով, իսկ մագիստրատուրայում՝ «Անօրգանական քիմիա», «Օրգանական քիմիա», «Ֆիզիկական և կոլոիդ քիմիա», «Անալիտիկ քիմիա», «Էկոլոգիական քիմիա», 2013 թ-ից՝ նաև «Դեղագործական քիմիա» մասնագիտացումներով:

Էկոլոգիական քիմիայի բաժինը պատրաստում է մասնագետներ, ովքեր կարող են աշխատել հանրապետության տնտեսության ամենատարբեր բնագավառներում՝ բնապահպանության նախարարությունում և նրա ենթակայության գործակալություններում, պետական ոչ առևտրային կազմակերպություններում՝ ջրերի, ընդերքի, կենսառեսուրսների, էկոլոգիական մոնիթորինգի և փորձաքննության ոլորտներում, ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի ծրագրային գրասենյակներում, արտակարգ իրավիճակների պետական կոմիտեի, գյուղատնտեսության, էկոնոմիկայի նախարարությունների տարբեր գերատեսչություններում, հանրապետությունում գործող արտադարական ձեռնարկություններում, մասնավոր կառույցներում և այլն: Շրջանավարտների մի մասը աշխատում է կրթության ոլորտում՝ դպրոցներում և համալսարաններում, քոլեջներում և վարժարաններում, շրջանավարտների մի մասը մասնագիտական աշխատանքի է անցել նաև արտերկրում:

Դեղագործական քիմիայի ամբիոնում հաջողությամբ զարգացվում է օպտիկապես մաքուր, ոչ սպիտակուցային ամինաթթուների և պեպտիդների ասի-

մետրիկ բիոմիմետիկ սինթեզի ուղղությունը, որն այսօր մեծ հետաքրքրություն է առաջացրել ժամանակակից հակաքաղցկեղային, հակավիրուսային և այլ դեղապատրաստուկների արտադրության բնագավառում: Դեղագործական քիմիայի ամբիոնում ստեղծված է ժամանակակից ուսումնաարտադրական դեղատուն, որտեղ ուսանողները ինքնուրույն զբաղվում են դեղաձևերի պատրաստման տեխնոլոգիաներով, իսկ մասնագիտական առարկաները դասավանդվում են հանրապետության տարբեր մասնագիտական ինստիտուտներում և հիվանդանոցներում: Դեղագործական քիմիայի բաժնի շրջանավարտները ստանում են «քիմիկոս դեղագետի» և «դեղագետ պրովիզորի» որակավորում, ինչը նրանց հնարավորություն է տալիս աշխատել ինչպես գիտահետազոտական և փորձարարական հիմնարկներում, այնպես էլ դեղատնային ցանցում: Այսօր Երևանի և հանրապետության այլ քաղաքների դեղատները համալրված են ԵՊՀ դեղագործական քիմիայի բաժնի շրջանավարտներով: Վերջինները լուրջ հաջողությունների են հասել նաև գիտության բնագավառում: Ընդամենը 13 տարվա կյանք ունեցող ԵՊՀ դեղագործական քիմիայի բաժինը արդեն տվել է գիտությունների տասնյակ թեկնածուներ, որոնց մի մասը աշխատում է աշխարհի զարգացած պետությունների (Բելգիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ՌԴ և այլն) հանրաճանաչ գիտահետազոտական կենտրոններում:

Ֆակուլտետի ուսումնագիտական գործընթացը կազմակերպվում է 6 ամբիոնների կողմից, որոնցում կատարվում են լուրջ աշխատանքներ: Նշված ամբիոններն են՝ անօրգանական քիմիա, օրգանական քիմիա, վերլուծական (անալիտիկ) քիմիա, ֆիզիկական և կոլոիդ քիմիա, դեղագործական քիմիա և էկոլոգիական քիմիա:

Քիմիայի ֆակուլտետը ակտիվ գործունեություն է ծավալում նաև հանրակրթական ասպարեզում: Քննարկվում և գրախոսվում են դպրոցական քիմիայի ծրագրերն ու չափորոշիչները, զանազան ուսումնական աշխատանքներ, ձեռնարկներ և դասագրքեր: Ֆակուլտետի աշխատակիցները ակտիվորեն մասնակցում են քիմիայի դպրոցական դասագրքերի, ձեռնարկների և խնդրագրքերի ստեղծման գործում: 2001թ. ակադեմիկոս Ա.Ա. Ավետիսյանի և դոցենտ Լ.Ա. Խաչատրյանի հեղինակությամբ գրվեց և տպագրվեց միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի «Օրգանական քիմիա»-ի դասագիրքը, 2009թ. հրատարակվեց «Փորձարարական ֆիզիկական քիմիա»-ի բուհական դասագիրքը՝ պրոֆ. Շ.Մարգարյանի և դոցենտ Ա.Խաչատրյանի հեղինակությամբ:

Հայտնի է, որ ԵՊՀ ֆակուլտետների մեծ մասը՝ այդ թվում և քիմիայի ֆակուլտետը, երկար տարիներ պատրաստում է նաև հանրակրթության համակարգի համար մանկավարժներ, որոնք նույնպես ունեն մեծ պահանջարկ:

Քիմիայի ֆակուլտետի ուսումնական գործի բաղկացուցիչ մասն են կազմում ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաները, որոնց նպատակային և ամխափան կազմակերպումը նպաստում է լիարժեք մասնագետներ պատրաստելուն: Այս պրակտիկաների անցկացումը համապատասխան մասնագիտական կենտրոններում խիստ նպաստում է նաև մասնագետ-շրջա-



նավարտների հետագա աշխատանքի տեղավորմանը: Եվ շրջանավարտների 50-60%-ը աշխատում է ըստ ընտրած մասնագիտության (սա բավականին լավ ցուցանիշ է տվյալ մասնագիտության և մասնագիտացման համար):

Ֆակուլտետում լուրջ աշխատանքներ են տարվում ուսանողական կյանքը հետաքրքիր և լիարժեք դարձնելու համար: Այս աշխատանքներում իրենց մասնակցությունն են բերում ֆակուլտետի ուսանողական կառույցները՝ ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը: Ֆակուլտետում ամեն տարի անց են կացվում ՌԳԸ նստաշրջաններ, հիշարժան օրերին նվիրված միջոցառումներ, սպորտային տարբեր մրցումներ և խաղեր: Մեր ուսանողներն ակտիվորեն մասնակցում են համահամալսարանական տարաբնույթ միջոցառումներին:

Քիմիայի ֆակուլտետը իր գործունեության ընթացքում միշտ գտնվել և գտնվում է գիտության առաջավոր դիրքերում:

Քիմիայի ֆակուլտետը միջազգային ճանաչում ունեցող գիտական կենտրոն է: Ֆակուլտետը սերտ կապեր է հաստատել տարբեր երկրների առաջատար գիտական կենտրոնների հետ. ԱՄՆ-ում՝ Յյուսիսարևմտյան համալսարան (Չիկագո) և Արիզոնայի համալսարան (Թյուսոն), Գերմանիայում՝ Ռոստոկի համալսարան, Ֆրանսիայում՝ Փարիզի համալսարան, Մոն Պելյեի համալսարան, Լեհաստան՝ Սիլեզյան համալսարան (Կատովիցե), Սարի Կյուրի-Սկլադովսկայայի անվան համալսարան (Լյուբլին), Ռուսաստանում՝ Մոսկվայի պետական համալսարան, ՌԴ ԳԱ էլեմենտաօրգանական քիմիայի ինստիտուտ (Մոսկվա), Օրգանական քիմիայի ինստիտուտ, Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ, Կառուցվածքային մակրոկինետիկայի ինստիտուտ, Մարդու ուղեղի ինստիտուտ (Սանկտ Պետերբուրգ): Նշված գիտական կենտրոնների հետ իրականացվում են շատ կարևոր հետազոտական աշխատանքներ քիմիայի և դեղաբանության բնագավառներում: Առավել կարևոր է Գերմանիայի Դաշնության Ռոստոկի համալսարանի հետ համագործակցությունը, քանի որ այն ուղղակիորեն վերաբերում է ուսանողներին: Տասնյակ տարիներ քիմիայի ֆակուլտետի լավագույն ուսանողներից ընտրյալները իրենց ավարտական, դիպլոմային աշխատանքները և մագիստրոսական թեզերը կատարել են այդ կենտրոնում, իսկ ասպիրանտներից երկուսը այնտեղ կատարել և պաշտպանել են թեկնածուական ատենախոսությունները: Այդ համագործակցությունը այսօր էլ հաջողությամբ շարունակվում է, և նման կենտրոնում բարձր մակարդակի գիտական և ուսումնական դպրոցով անցնելը պատիվ կրերի նշված բնագավառի ցանկացած մասնագետի:

Ֆակուլտետում դասավանդում են ՀՀ ԳԱԱ 1 ակադեմիկոս, 1 թղթակից անդամ, գիտությունների 15 դոկտոր պրոֆեսորներ, 28 թեկնածու, դոցենտ, 23 թեկնածու, ասիստենտ: Քիմիայի ֆակուլտետում սովորում է 695 ուսանող, որոնցից՝ 530-ը բակալավրիատում, 65-ը՝ մագիստրատուրայում: 2008թ-ից ֆակուլտետում իրականացվում է նաև հեռակա ուսուցում, որտեղ այժմ սովորում է 89 ուսանող:

Քիմիայի ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է  
- քիմիա

- էկոլոգիական քիմիա
- դեղագործական քիմիա

մասնագիտություններով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին Քիմիայի ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.

Մասնագիտություն	Ֆակուլտետ	2010թ.		2009թ.		2008թ.			
		Հիմնական մրցույթ		Հարցագրույց		Հիմնական մրցույթ		Հարցագրույց	
		Ուսանողների թիվ	Սեռերի քանակը	Ուսանողների թիվ	Սեռերի քանակը	Ուսանողների թիվ	Սեռերի քանակը	Ուսանողների թիվ	Սեռերի քանակը
Քիմիա	Անվճ	27	10	15	20	18	12	2	8
	Վճ	-	-	-	15	-	17	-	3
	ԱՏ	-	35	-	10	-	10	-	-
Էկոլոգիական քիմիա	Անվճ	12	6	17	10	36	10	-	-
	Վճ	-	-	-	20	-	20	-	-
	ԱՏ	-	29	-	5	-	5	-	-
Դեղագործական քիմիա	Անվճ	91	7	75	15	67	15	-	-
	Վճ	-	-	-	25	-	25	-	-
	ԱՏ	-	49	-	10	-	10	-	-

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.				
	Հիմնական մրցույթ		Հարցագրույց			Հիմնական մրցույթ		Հարցագրույց		
	Անվճ	Վճ(ԱՏ)	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ
Քիմիա	18.5	16.25	16.5	16	-	19.4	18	-	23.5	-
Էկոլոգիական քիմիա	18	16.25	20.5	20	-	26.3	21.5	16.8	-	-
Դեղագործական քիմիա	32.5	18.5	29.3	25.8	16.3	30.5	23.8	17.8	-	-

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱՔԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒՆԵՏ

1932 թ-ին ԵՊՀ պատմատնտեսագիտական ֆակուլտետի կազմում ստեղծվում են ապագա աշխարհագրական և երկրաբանական ֆակուլտետները, որոնք 1933-34 ուստարում միավորվում են և կազմավորվում է երկրաբանաաշխարհագրական ֆակուլտետը: 1945թ-ին ֆակուլտետը բաժանվում է աշխարհագրության և երկրաբանության առանձին ֆակուլտետների, որոնք ինքնուրույն գործում են մինչև 2008թ.: 2008թ. ապրիլին ֆակուլտետները նորից միավորվում են, և ձևավորվում է աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետը:

Ֆակուլտետում կատարվում են մեծ ծավալի գիտահետազոտական աշխատանքներ, ինչպես միջազգային դրամաշնորհների, այնպես էլ պետությունչետային ֆինանսավորմամբ: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուժերով հրատարակվել են բազմաթիվ մենագրություններ, մայրենի լեզվով բուհական դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, գիտական հոդվածներ: Ամեն տարի ֆակուլտետում կազմակերպվել և կազմակերպվում են գիտական նստաշրջաններ, ՈՒԳԸ կոնֆերանսներ և միջազգային գիտաժողովներ:

Ուսումնական պլաններում իրենց արժանի տեղն են գտել էկոլոգիական ուղրտի առարկաները՝ հասարակություն-բնություն փոխհարաբերություններում գործող և ձևավորվող պրոբլեմներն իրենց դրսևորումներով:

Ֆակուլտետի ուսումնական գործընթացի կարևոր մասն են կազմում ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաները, որոնց կազմակերպումը էականորեն նպաստում է բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստմանը: Մեծ աշխատանքներ են տարվում ուսանողության ազատ ժամանցի և նրանց արտալսարանային կյանքի կազմակերպման ուղղությամբ:

Ֆակուլտետում ուսումնագիտական աշխատանքները կազմակերպվում են 8 ամբիոնների կողմից: Դրանք են՝ երկրաֆիզիկայի, ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության, պատմական և ռեգիոնալ երկրաբանության, օգտակար հանածոների, հանքավայրերի որոնման և հետախուզման, քարտեզագրության ու գեոմորֆոլոգիայի, ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության, սոցիալ-տնտեսական աշխարհագրության, միներալոգիայի, պետրոլոգիայի և երկրաքիմիայի ամբիոնները: Ներկայումս ֆակուլտետում աշխատում են ՀՀ ԳԱԱ 1 ակադեմիկոս, գիտությունների 9 դոկտոր պրոֆեսոր, գիտությունների 32 թեկնածուներ, խոստումնալից երիտասարդ դասախոսներ:

Երկրաբանությունը գիտություն է երկիր մոլորակի ծագման, զարգացման, երկրակեղևի ձևավորման, օգտակար հանածոների հանքավայրերի առաջացման, դրանց որոնման, հետախուզման և պաշարների գնահատման մասին:

Հայկական լեռնաաշխարհի ընդերքը հարուստ է բազմատիպ միներալային և ոչ միներալային օգտակար հանածոներով, որոնք և առիթ են հանդիսացել, պատմական հնագույն ժամանակներից սկսած, կազմակերպելու մետաղների

արդյունահանման ու ձուլման աշխատանքներ:

«Երկրաֆիզիկա» մասնագիտացում ընտրող դիմորդը պետք է իմանա, որ նա ընտրել է բնագավառ, որը գտնվում է երկրաբանության և ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների հանգուցակետում: Նա ստանալու է գիտելիքներ երկրի կառուցվածքի, նրանում առկա մետաղական և ոչ մետաղական հանքավայրերի որոնման և հետախուզման մասին, լուծելու է ճարտարագիտական-երկրաբանության (հատկապես վտանգավոր երկրաբանական երևույթների), ջրաերկրաբանության, հնագիտական և էկոլոգիական բնագավառների բազմաթիվ խնդիրներ: Այդ խնդիրների լուծման համար ինքն օգտագործելու է ժամանակակից չափիչ սարքեր և համակարգչային տեխնոլոգիաներ: Ուսման տարիներին մասնագիտության գծով ձեռք բերված տեսական և գործնական գիտելիքների յուրացման և ամրապնդման նպատակով՝ Հանքավանի գեղատեսիլ բնության տարածքում անցկացնելու է իր ուսումնական պրակտիկան, առանձին դեպքերում մասնակցելու է գիտահետազոտական և արտադրական գործնական աշխատանքներին, որոնք կատարվելու են հանրապետությունում և նրա սահմաններից դուրս: Իր ուսումն ավարտելուց հետո հնարավորություն կունենա աշխատելու որպես երկրաֆիզիկոս Գիտությունների ազգային ակադեմիայի Երկրաֆիզիկայի և ինժեներական սեյսմաբանության, Երկրաբանական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտներում, ՀՀ Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունում, պետական և մասնավոր ձեռնարկություններում, որոնք իրականացնում են օգտակար հանածոների որոնման և շահագործման աշխատանքներ, կարող է աշխատել նաև համապատասխան բուհում և այլ հանրակրթական ինստիտուտներում ու դպրոցներում:

Միներալոգիայի, պետրոլոգիայի և երկրաքիմիայի ամբիոնը պատրաստում է բարձրորակ կադրեր երկրաքիմիայի, միներալոգիայի և պետրոլոգիայի գծով:

«Երկրաքիմիան» երկրաբանության ժամանակակից ուղղություններից է: Այն ուսումնասիրում է քիմիական տարրերի տարածման օրինաչափությունները երկրակեղևի ապարներում, մթնոլորտում, ջրոլորտում և տիեզերական մարմիններում: Երկրաքիմիական մեթոդներով որոշվում են երկրի և երկնային մարմինների հացսակները: Բացի տեսական հարցերից երկրաքիմիան ունի նաև կիրառական նշանակություն: Երկրաքիմիայի՝ վերջին տասնամյակներում ստեղծված նորագույն մեթոդները հնարավորություն են ստեղծում հայտնաբերել ոսկու, պղնձի, մոլիբդենի, ուրանի ինչպես նաև նավթի ու գազի հանքավայրեր:

Լավագույն ուսանողներն իրենց գիտելիքները խորացնում են արտասահմանյան մի շարք գիտահետազոտական և ուսումնական կենտրոններում, մասնավորապես՝ Մոսկվայի պետական համալսարանում, Եմայի երկրագիտության ինստիտուտում և Ֆրայբերգի լեռնային ակադեմիայում (Գերմանիա):

Ավարտելով բուհը՝ մասնագետները կարող են աշխատել երկրաբանական պետական և մասնավոր կազմակերպություններում, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանության ինստիտուտում, Բնապահպանության, Էներգետիկայի և բնական պաշարների, Գյուղատնտեսության նախարարություններ:

րում:

Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնը զբաղվում է հանքային հումքի որոնման, հետախուզման և արդյունահանման հարցերով:

Քաղաքակրթությունը առանց հանքային հումքի արդյունահանման չի կարող գոյատևել: Հանքային հումքի նկատմամբ պահանջարկը տարեցտարի ավելանում է: Այն արդյունահանվում կամ ստացվում է հանքավայրերի շահագործման արդյունքում, սակայն նախքան արդյունահանումն սկսելը անհրաժեշտ է հանքավայրը կամ հանքային կուտակումը հայտնաբերել և հետախուզել, այսինքն՝ զննահատել նրա արդյունաբերական նշանակությունը: Հանքավայրի տնտեսական նշանակությունը որոշվում է ստացված եկամուտների և ծախսերի դրական տարբերությամբ. ինչքան հարուստ է հանքաքարը, ինչքան բարձր է նրա մեջ օգտակար բաղադրիչների պարունակությունը, այնքան շատ եկամուտներ կարելի է ստանալ նրա շահագործումից: Հանքավայրերի որոնման՝ հայտնաբերման փուլում լայնորեն կատարվում են երկրաբանաքարտեզագրական աշխատանքներ, կիրառվում են երկրաֆիզիկական և երկրաքիմիական որոնման մեթոդներ: Այս աշխատանքների համալիրը թույլ է տալիս արդյունավետ ծախսերով հայտնաբերել մեզ հետաքրքրող բնական միներալային կուտակումները: Հանքավայրի հայտնաբերումով ավարտվում է երկրաբանահետախուզական աշխատանքների առաջին՝ որոնողական փուլը: Երկրորդ փուլում որոշվում է հանքավայրի արդյունաբերական նշանակությունը՝ շահավետ է օգտագործել հայտնաբերված բնական կուտակումը, թե ո՞չ:

Ուսանողներն անցնում են ուսումնական, արտադրական պրակտիկաներ. ունակություններ են ձեռք բերում երկրաբանական քարտեզագրումից, մասնակցում են հանքավայրերի որոնման և հետախուզման աշխատանքներին:

Ամբիոնի շրջանավարտները կարող են աշխատել բազմաթիվ երկրաբանական ընկերություններում, որոնք զբաղվում են հանքավայրերի որոնմամբ և հետախուզմամբ: Նրանց պահանջարկը առկա է նաև շահագործվող հանքավայրերում, քանի որ այս մասնագիտացմամբ երկրաբանները աշխատում են ընդհուպ մինչև հանքավայրի պաշարների սպառումը և նրա փակումը:

Ռեզիդուալ երկրաբանության ամբիոնը զբաղվում է երկրի ընդերքի և երկրակեղևի զարգացման պատմության, տեկտոնիկայի, օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և քարտեզահանման հարցերով:

Համատեղելով երկրի մակերևույթի անմիջական ուսումնասիրությունները օդատիեզերական լուսանկարների վերծանման արդյունքների հետ՝ մեծ հնարավորություններ են բացվում նոր հանքաերևակումներ հայտնաբերելու և նախկինում անհեռանկարային ճանաչված հանքաերևակումների վերագնահատման համար:

Ուսանողների մասնագիտական գիտելիքների խորացմանը և դրանց ամրապնդմանը խորապես նպաստում են հետաքրքիր ուսումնական և արտադրական պրակտիկաները՝ մասնավոր երկրաբանական ընկերությունների կողմից ու-

ուսումնասիրվող բազմաթիվ հանքաերևակումներում և հանքավայրերում:

Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնը մասնագիտանում է ջրաերկրաբան և ճարտարագետ մասնագետների պատրաստման գծով:

«Ջրաերկրաբանությունը» գիտություն է ստորերկրյա ջրերի ծագման, տեղադրման պայմանների, տարածման և շարժման օրինաչափությունների մասին: Այն ուսումնասիրում է ստորերկրյա ջրերի ֆիզիկական հատկությունները, քիմիական, գազային կազմը և ռեժիմը:

Ճարտարագիտական երկրաբանությունն ուսումնասիրում է ինչպես բնական, այնպես էլ ինժեներատնտեսական գործունեությամբ պայմանավորված երկրաբանական գործընթացները և երևույթները: Նրա ուսումնասիրության օբյեկտը երկրաբանական միջավայրն է, որը հիմք է տարբեր բնույթի կառույցների և օբյեկտների (ստորերկրյա փորվածքներ, թունելներ, ջրատարներ, ջրամբարներ, հանքուղիներ և այլն): Նրա կարևոր խնդիրներից է բնական կառույցների կայունության գնահատումը, գրունտների երկրատեխնիկական հատկությունների որոշումը:

Ավարտելուց հետո ուսանողները կարող են աշխատանքի անցնել նախագծաշինարարական կազմակերպություններում, երկրաբանական ծառայություններում, Բնական ռեսուրսների և բնապահպանության նախարարությունում, հանքային ջրերի գործարաններում, ջրային պրոբլեմների գիտահետազոտական հիմնարկներում:

Աշխարհագրությունը՝ որպես գիտության ճյուղ, դեռևս Յերոդոտոսի, Էրատոսթենեսի ու Ստրաբոնի ժամանակներից, անցել է զարգացման հարուստ ճանապարհ: Այն ունեցել է նաև իր քանակական ու որակական թռիչքների, լճացման ու ճգնաժամային փուլերը՝ պայմանավորված հասարակական զարգացման վերելքներով ու վայրէջքներով, կյանքի կողմից գիտությանը ներկայացվող պահանջների փոփոխություններով:

Աշխարհագրական գիտությունը ներկայումս խորքային որակական փոփոխությունների ժամանակաշրջան է ապրում: Դա պայմանավորված է հասարակական պահանջներով, 20-րդ դարի երկրորդ կեսին սկսված և այժմ շարունակվող համամոլորակային երևույթներով, ինչպես նաև հասարակություն-բնություն հարաբերությունների խորացող ճգնաժամով պայմանավորված սոցիալական նոր պատվերով: Ելնելով վերը նշվածից՝ հատուկ ուշադրություն է դարձվում նաև աշխարհագրության ներքին ռեֆլեքսիայով պայմանավորված ուսումնական պլանների մաթեմատիզացման, հումանիզացման և էկոլոգացման գործընթացներին:

Աշխարհագրության տեսությանն ու մեթոդաբանությանը նվիրված վերջին տարիներին մայրենի լեզվով դասագրքերի ստեղծումը որակական լուրջ քայլ էր ֆակուլտետի ուսումնակրթական դաշտում:

Ներկայումս Հանրապետությունում տեղի ունեցող արմատական փոփոխությունները հրամայաբար պահանջում են կրթական բարեփոխումներ և տնտեսության մեջ կիրառական բնույթի մասնագիտությունների ներդրում, որոնք ունեն շուկայական ապահովվածություն: Աշխարհագրության և երկրաբանության

Ֆակուլտետի ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնը շուրջ 15 տարի կադրեր է պատրաստում «Ջրաօդերևութաբանություն» մասնագիտությամբ: Այսօր կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով ծագած խնդիրները խիստ արդիական են դարձրել այս մասնագիտությունը: Աճել է ջրաբանության և կլիմայագիտության մասնագետների պահանջը տնտեսության այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ջրային տնտեսությունը, բնապահպանությունը, ջրային աղետների կառավարումը, գյուղատնտեսությունը, ջրաէներգետիկան և այլն: Ջրաօդերևութաբանության պրակտիկան անցկացվում է հանրապետության համապատասխան ձեռնարկություններում, ՀՀ Բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունում, բնապահպանության շրջակա միջավայրի պահպանության վարչությունում, Հայպետհիդրոմետում, իսկ 2010 թ-ից նախատեսվում է նաև անցկացնել Սանկտ-Պետերբուրգում:

Ֆիզիկական աշխարհագրության բնագավառում նույնպես կա լուրջ առաջընթաց: Մասնավորապես, «Լանդշաֆտային էկոլոգիա» մասնագիտության գծով կա նախնական համաձայնություն, որ այդ բաժնի ուսանողները 2011թ. ուսումնական պրակտիկան անցկացնեն Վրաստանի պետական համալսարանի ուսումնական բազաներում, ինչպես նաև ՀՀ Բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի պահպանության վարչությունում:

Լուրջ հեռանկարներ են ակնկալվում նոր բացված «Քարտեզագրություն և կադաստրային գործ» ու «Սերվիս» մասնագիտություններից, որոնք նույնպես ունեն շուկայական մեծ պահանջարկ և կադրերի պատրաստման գործընթացն իրականացվում է համապատասխան նախարարությունների և նրանց նյութատեխնիկական բազայի լիարժեք օգտագործմամբ: Սեր երկրի տնտեսական զարգացման կարևորագույն ուղիներից մեկը սերվիսի ոլորտի առաջընթացի ապահովումն է: Մի կողմից՝ հանրապետությունում կա սերվիսի ոլորտի զարգացման համար անհրաժեշտ մեծ ներուժ, մյուս կողմից՝ այն շատ փոքր չափով է օգտագործվում: Պատճառը որակյալ մասնագետների պակասն է: Խնդրի լուծման ուղին «Սերվիս»-ի համալսարանական կրթությամբ մասնագետների պատրաստումն է:

Առաջատար երկրների փորձը օգտագործելու նպատակով 2011թ-ից նախատեսվում է «Սերվիս»-ի մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողների ուսումնական պրակտիկան անցկացնել արտասահմանյան որևէ երկրում: ԵՊՀ ռեկտորատի և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության միջև կնքված պայմանագրով «Սերվիս»-ի մասնագիտության ուսանողների արտադրական պրակտիկան անցկացվում է նախարարության համակարգում: Այս մասնագիտության շրջանավարտները կարող են աշխատել սերվիսի ոլորտի հյուրանոցային, զբոսաշրջության, առևտրի, կենցաղի, սպասարկման, ռեկրեացիոն և այլ կառույցներում:

Այսօր հանրապետությունում մեկը մյուսի հետևից բացվում են սերվիսի ոլորտի բազմաթիվ օբյեկտներ՝ հյուրանոցներ, ռեստորաններ, մոթելներ, զբոսաշրջության կենտրոններ, սպասարկման բազմաթիվ այլ օբյեկտներ: Դրանց կառավարման համար անհրաժեշտ են գրագետ, կիրթ, բարեհամբույր, մասնագիտական խորը գիտելիքներով հմուտ կազմակերպիչներ:

Համալսարանում և ֆակուլտետում ստեղծվել և ստեղծվում են անհրա-

ժեշտ բոլոր պայմանները միջազգային չափանիշներին համապատասխան բարձրորակ մասնագետների պատրաստման համար: Այդ գործին է լծվել սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի աշխատակազմը:

Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնը պատրաստում է մասնագետներ կադաստրային գործի, քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի մասնագիտությունների գծով:

2007թ-ից ամբիոնում բացվեց «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտությունը, որի շրջանավարտների կարիքը շատ մեծ է մեր հանրապետությունում: Նրանք կարող են իրականացնել հանրապետության ամբողջ տարածքի հողի, անշարժ և շարժական գույքի կադաստրային աշխատանքները: «Քարտեզագրություն» մասնագիտացման գծով ավարտած ուսանողները կարող են աշխատել Քարտեզագրության և գեոդեզիայի կենտրոնում, Պետական կադաստրի կոմիտեի ստորաբաժանումներում, տարբեր գիտահետազոտական ինստիտուտներում, Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնում:

«Գեոմորֆոլոգիա» մասնագիտացման բնագավառում նույնպես բացվել են լայն հեռանկարներ: Վերջին տարիներին տեղի ունեցող բնական վտանգավոր երևույթների (սելավ, սողանք, ջրհեղեղ, փլուզում և այլն) ակտիվացման դեմ պայքարելու նպատակով մեծ է գեոմորֆոլոգ մասնագետների դերը: Այդ բաժինն ավարտողները կարող են աշխատել ՀՀ Բնապահպանության, Արտակարգ իրավիճակների նախարարություններում, Երկրաբանական վարչությունում, նախագծային տարբեր ինստիտուտների ստորաբաժանումներում:

Ներկայումս Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում սովորում է 760 ուսանող, որոնցից 675-ը՝ բակալավրիատում, 85-ը՝ մագիստրատուրայում: Ֆակուլտետի ասպիրանտուրայում սովորում է 30 ասպիրանտ, որոնցից 22-ը՝ արտերկրից: 2007թ-ից ֆակուլտետում իրականացվում է նաև հեռակա ուսուցում, որտեղ այժմ սովորում է 206 ուսանող:

Ֆակուլտետում սովորում են նաև Իրանի, Սիրիայի, Եգիպտոսի քաղաքացիներ:

Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է

- աշխարհագրություն
- ջրաօդերևութաբանություն
- քարտեզագրություն և կադաստրային գործ
- սերվիս
- երկրաբանություն

մասնագիտություններով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.



Մասնագիտություն	Համախոսում	2010թ.		2009թ.		2008թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի թվաքանակը	Դիմորդների թիվը	Տեղերի թվաքանակը	Դիմորդների թիվը	Տեղերի թվաքանակը
Աշխարհագրություն	Անվճ	73	5	57	15	95	15
	Վճ	-	-	-	20	-	20
	ԱՏ	-	50	-	20	-	20
Զրաօդերևութաբանություն	Անվճ	11	2	10	5	18	5
	Վճ	-	-	-	5	-	5
	ԱՏ	-	18	-	10	-	10
Քարտեզագրություն և կադաստրային գործ	Անվճ	66	2	67	5	118	5
	Վճ	-	-	-	10	-	5
	ԱՏ	-	23	-	10	-	10
Սերվիս	Անվճ	101	2	87	5	45	5
	Վճ	-	-	-	5	-	5
	ԱՏ	-	18	-	10	-	10
Երկրաբանություն	Անվճ	68	11	48	20	78	20
	Վճ	-	-	-	25	-	25
	ԱՏ	-	49	-	15	-	15

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.		
	Անվճ	Վճ(ԱՏ)	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ	ԱՏ
Աշխարհագրություն	28.75	16	29.5	27.5	17.3	33.3	34	30.3
Զրաօդերևութաբանություն	27	16	29.8	28.8	24.5	32.8	33.3	29
Քարտեզագրություն և կադաստրային գործ	35.25	26	34.6	31.8	16	36	35.5	32.3
Սերվիս	55.25	42.75	48	49	44.3	51.3	47.5	42
Երկրաբանություն	25	16.25	21.8	18.8	17.5	26.8	24.8	22.1

## ԿԵՆՍԱՔԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒՆԵՏ

21-րդ դարում բնագիտության զարգացման հիմնական միտումները քննարկելիս հաճախ է խոսվում նոր հարյուրամյակում բնության մեջ եղած ամենաբարդ՝ կենսաբանական համակարգերի ուսումնասիրման նկատմամբ աճող հետաքրքրության մասին, ընդ որում՝ ոչ միայն կենսաբանների, այլ նաև մյուս բնական գիտությունների գիտնականների կողմից: Հայտնի է, որ 20-րդ դարը կարելի է համարել «ֆիզիկայի դար», քանի որ այն նշանավորվեց հատկապես ֆիզիկայի ասպարեզում կարևորագույն հայտնագործություններով, որոնք էապես նպաստեցին ընդհանրապես բնագիտության զարգացմանը: Կան բոլոր նախադրյալները, որ 21-րդ դարը լինելու է «կենսաբանության դար», հատկապես՝ ֆիզիկաքիմիական և մոլեկուլային կենսաբանության, որտեղ իրենց ուրույն տեղը կունենան կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի մեթոդական մոտեցումները: Բնական է, որ ժամանակակից պահանջներին համապատասխանող կենսաբանության տարբեր բնագավառների բարձրորակ մասնագետների պատրաստումը ներկայիս հրատապ խնդիրներից է, որի իրականացումը նախ և առաջ դրված է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի առջև:

Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը հիմնադրվել է 1933թ., սակայն նրա պատմության ակունքներն սկսվում են համալսարանի հիմնադրման առաջին իսկ օրից: Ֆակուլտետը Հայաստանում կենսաբանության տարբեր բնագավառների գծով որակյալ մասնագետների պատրաստման հիմնական գիտակրթական կենտրոնն է:

Ներկայումս ֆակուլտետի կառուցվածքի մեջ մտնում է 8 ամբիոն: Դրանք են՝ բուսաբանության, կենդանաբանության, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի, էկոլոգիայի և բնության պահպանության, մանրէաբանության և բույսերի ու մանրէների կենսատեխնոլոգիայի, գենետիկայի և բջջաբանության, կենսաքիմիայի, կենսաֆիզիկայի ամբիոնները:

Ամբիոններին կից գործում են հինգ գիտահետազոտական լաբորատորիաներ, որտեղ կատարվող գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունները վերաբերում են մոլեկուլային և բջջային կենսաբանության, մոլեկուլային կենսաֆիզիկայի, թաղանթների կենսաֆիզիկայի, համեմատական և էվոլյուցիոն կենսաքիմիայի, բույսերի կենսաքիմիայի, բուսաբանության և սնկաբանության, մանրէաբանության, մանրէների և բույսերի կենսատեխնոլոգիայի, մարդու մոլեկուլային գենետիկայի և բջջագենետիկայի, գենային ինժեներիայի, կենդանաբանության և հյուսվածաբանության, մարդու և կենդանիների բարձրագույն նյարդային գործունեության ֆիզիոլոգիայի, հոգեֆիզիոլոգիայի, կենսացենոզների էկոլոգիայի և բնապահպանության բնագավառներին: Ֆակուլտետի շրջանավարտներից շատերը միջազգային ճանաչում ունեցող գիտնականներ են, որոնք հաջողությամբ աշխատել և աշխատում են նախկին Խորհրդային Միության և հեռավոր արտասահմանյան երկրների գիտական կենտրոններում: Ֆակուլտետի ճանաչված մասնագետները գիտահետազոտական համագործակցության մեջ են արտասահմանյան մի շարք

երկրների (ԱՄՆ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա, Ռուսաստանի Դաշնություն և այլն) գիտական կենտրոնների մասնագետների հետ և բազմիցս հանդես են եկել դասախոսություններով, գիտական զեկույցներով:

Կենսաբանության ֆակուլտետի գիտակրթական պատշաճ մակարդակի, գիտական մեծ ներուժի վկայությունն է ներկայիս պատկառելի պրոֆեսորադասախոսական կազմը (ՀՀ ԳԱԱ 3 ակադեմիկոսներ, ՀՀ ԳԱԱ 3 թղթակից անդամներ, գիտությունների 25 դոկտորներ և ավելի քան 60 թեկնածուներ):

Կենսաբանության ֆակուլտետում, ինչպես և ամբողջ համալսարանում, ներկայումս ուսուցումը տարվում է եռաստիճան համակարգով՝ բակալավրիատ (4 տարի ժամկետով), մագիստրատուրա (2 տարի) և ասպիրանտուրա (3 կամ 4 տարի՝ կախված ուսուցման ձևից՝ առկա, թե հեռակա): Այն իրականացվում է երեք մասնագիտությունների գծով՝ կենսաբանություն, կենսաքիմիա և կենսաֆիզիկա: Իսկ 2008/2009 ուստարվանից բակալավրիատում բացվել է չորրորդ մասնագիտությունը՝ կենսաինֆորմատիկան, որը 21-րդ դարի կենսաբանության արդի և արագ զարգացող բնագավառներից է: Այն կենսաբանական համակարգերի կառուցվածքի և գործունեության հետազոտումն է մաթեմատիկական մոդելավորման, կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի մեթոդների, ծրագրային փաթեթների օգտագործմամբ:

Ֆակուլտետում ունի 564 ուսանողներ, նրանցից 439-ը բակալավրիատի ուսանողներ են, 125-ը՝ մագիստրատուրայի, իսկ առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ընդհանուր թիվը 17 է: 2007/2008 ուստարվանից ֆակուլտետում գործում է նաև բակալավրիատի հեռակա բաժին, որտեղ սովորում են 76 ուսանողներ:

Բակալավրիատի համակարգում կենսաբանություն մասնագիտությամբ ուսուցումը տարվում է 6 մասնագիտացումների գծով՝ բուսաբանության, կենդանաբանության, գենետիկայի, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի, մանրէաբանության, էկոլոգիայի և բնության պահպանության: Շրջանավարտներին տրվում է նաև մանկավարժի որակավորում:

Բուսաբանության ամբիոնում պատրաստվում են մասնագետներ, որոնք տիրապետում են սնկերի, ստորակարգ և բարձրակարգ բույսերի ձևաբանության, էկոլոգիայի վերաբերյալ գիտելիքներին, ունեն դրանք որոշելու ունակություններ և կարող են դրանք կիրառել բուսաբանական և ֆիտոպաթոլոգիական գիտական հետազոտություններում, կենսատեխնոլոգիայում, սնկաթունաբանական և սնկերի միջոցով օրգանական և անօրգանական նյութերի ու մթերքների քայքայման ուսումնասիրության ոլորտում: Շրջանավարտները տիրապետում են սնկաբանական, մանրէակենսաբանական, թունաբանական փորձաքննության և սննդամթերքի ֆիզիկաքիմիական ցուցանիշները որոշելու մեթոդներին: Բուսաբանության ամբիոնը հանրապետությունում սնկաբանական հետազոտությունների միակ կենտրոնն է:

Կենդանաբանության ամբիոնում պատրաստվում են բարձրորակ մասնագետներ, որոնք տիրապետում են կենդանիների կարգաբանության, էկոլոգա-

Ֆաունիստական ուսումնասիրությունների, տեսակների որոշման, պահպանության, վերարտադրության և կլիմայավարժեցման, հյուսվածաբանական, իմունո-հիստոքիմիական, ձևաչափական մեթոդներին, և կարող են իրենց գիտահետազոտական աշխատանքներում կիրառել հարակից գիտությունների նորագույն մեթոդները: Ամբիոնում կատարվում են աշխատանքներ Հայաստանում տարածված կուսածին սողունների ծագման, պոպուլյացիաներում տեսակառաջացման հարցերի, Հայաստանի սեյսմիկ ակտիվ գոտիներում տարածված ողնաշարավորների պոպուլյացիաներում ընթացող միկրոէվոլյուցիայի պրոցեսների, ողնաշարավորների ներքին օրգանների ռեգեներացման և դրա կարգավորման ուսումնասիրությունների ուղղությամբ:

Գենետիկայի և բջջաբանության ամբիոնում պատրաստվում են մասնագետներ, որոնք կստանան մոլեկուլային գենետիկայի, գենոմիկայի և մոլեկուլային բժշկության, մուտագենեզի սկզբունքների, գենետիկական ճարտարագիտության, բջջի ֆիզիոլոգիայի, բջջագենետիկայի, բջջային կուլտուրաների կիրառման, կենդանական բջիջների կենսատեխնոլոգիայի, գենետիկական վերլուծության, պոպուլյացիոն գենետիկայի, մարդաբանության, ֆարմակոգենետիկայի, բժշկական գենետիկայի, էկոլոգիական գենետիկայի գիտելիքներ: Ամբիոնում պատրաստվող մասնագետները հաջողությամբ կարող են աշխատել գենոմիկայի, մոլեկուլային գենետիկայի, գենետիկական ճարտարագիտության, բջջագենետիկայի և գենետիկական թունաբանության բնագավառներում:

Մանրէաբանության, բույսերի և մանրէների կենսատեխնոլոգիայի ամբիոնում ուսուցումը տարվում է երեք հիմնական մասնագիտացումներով՝ մանրէաբանություն, բույսերի ֆիզիոլոգիա և բույսերի ու մանրէների կենսատեխնոլոգիա: Ամբիոնում ուսումնասիրվում են աճման կարգավորիչների ազդեցությունը տարբեր բույսերի աճման, զարգացման, ֆոտոսինթեզի և անատոմիայի վրա: Ամբիոնում ծավալվում են աշխատանքներ անհետացման եզրին գտնվող բույսերի կենսատեխնոլոգիական մեթոդներով պահպանման, (փորձարարական) պայմաններում աճեցվող բույսերի երկրորդային փոխանակության, բույսերի մեկուսացված կուլտուրաներում հակաբակտերիական և հակաուռուցքային նյութերի սինթեզի ուսումնասիրման ուղղություններով: Ամբիոնում իրականացվում են. ա) Հայաստանի ջերմային և երկրաքիմիական անոմալիաներով տեղանքներում էքստրեմոֆիլ մանրէների տարածվածության ուսումնասիրություն, բ) տարբեր շրջանների գյուղական տնտեսությունների կաթնամթերքներից մեկուսացված կաթնաթթվային մանրէների, հակամիկրոբային և հիպոալերգեն հատկությունների հետազոտությունները, գ) բակտերիական մելանինի, որպես նոր ֆիտոխթանիչի գուղատնտեսության և ծառաբուծության բնագավառներում կիրառման հեռանկարների ուսումնասիրություն:

Բնության պահպանության և էկոլոգիայի ամբիոնում պատրաստվում են մասնագետներ, որոնք տիրապետում են էկոհամակարգերի բաղադրիչների թվակազմի կառավարման, մոնիթորինգի մեթոդներին, գիտեն հասարակության և բնության փոխազդեցության սկզբունքները և կարող են տալ շրջակա միջավայրի

աղտոտվածության տնտեսական գնահատականը: Ամբիոնում կատարվում են աշխատանքներ կենսաբանական անվտանգության, բույսերի գենետիկական ռեսուրսների կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման ուսումնասիրության ոլորտում: Ամբիոնում կատարվում են բազմաթիվ գիտական և կրթական դրամաշնորհային ծրագրեր, որոնց ակտիվորեն մասնակցում են ուսանողները:

Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնում պատրաստվում են մասնագետներ, որոնք տիրապետում են փորձարարական հետազոտությունների համակարգչային գրանցման և վերլուծման ծրագրերին, և հաջողությամբ կարող են աշխատել ֆիզիոլոգիայի պրոբլեմներով զբաղվող գիտահետազոտական ինստիտուտների լաբորատորիաներում և ախտորոշիչ կենտրոններում: Ամբիոնում ուսումնասիրվում են էկոլոգիական և տեխնածին գործոնների ազդեցության ներդրումը ֆիզիոլոգիական մեխանիզմները և օրգանիզմի ռեգիստենտությունը բարձրացնող միջոցների շտկող ազդեցությունը ֆիզիոլոգիական ֆունկցիաների վրա: Առանձին տարբերակով ուսումնասիրվում է ուսումնական տարբեր համակարգերում սովորողների հոգեմարմնաֆիզիոլոգիական ցուցանիշների փոփոխությունների բնույթը ուսումնական ծանրաբեռնվածության պայմաններում:

«Կենսաֆիզիկա» մասնագիտությամբ հետազոտություններ են տարվում այնպիսի ժամանակակից ուղղություններով, ինչպիսիք են մոլեկուլային կենսաֆիզիկան, թաղանթների կենսաֆիզիկան, մոլեկուլային և բջջային կենսաբանությունը, բժշկական կենսաֆիզիկան, էկոլոգիական կենսաֆիզիկան, ֆոտոկենսաբանությունը: Ուսանողները յուրացնում են արտաբացիոն, ֆլուորեսցենտային, միկրոէլեկտրոդային էլեկտրաֆորեզի մեթոդներ, գենային ճարտարագիտության մեթոդներ: Ամբիոնում պատրաստվում են բարձրորակ մասնագետներ, որոնք հաջողությամբ կարող են աշխատել կենսամակրոմոլեկուլների կառուցվածքի և ֆունկցիաների, կենսաթաղանթների կառուցվածքի և ֆունկցիաների ուսումնասիրման ոլորտում:

«Կենսաքիմիա» մասնագիտությամբ ուսումնառության տարիներին ուսանողները հնարավորություն ունեն յուրացնել կենսաքիմիան ամենայն խորությամբ: Տեսական գիտելիքներից բացի նրանք ձեռք են բերում կենսաքիմիական անալիզի իրականացման հիմնական սկզբունքները, մասնավորապես յուրացնում են սպեկտրոֆոտոմետրիայի, ֆլուորեսցենտային անալիզի, էլեկտրոֆորեզի, իոնափոխանակային քրոմատոգրաֆիայի, հել-ֆիլտրացիայի, հյուսվածքների ենթաբջջային ֆրակցիաների ստացման դիֆերենցիալ ցենտրիֆուգման եղանակի, մաս-սպեկտրոմետրիայի և մի շարք այլ կարևոր ֆիզիկաքիմիական անալիզի եղանակները: Ամբիոնում պատրաստվում են բարձրորակ մասնագետներ, որոնք տիրապետում են կենսաբանական օբյեկտների ուսումնասիրման կենսաքիմիական, իմունոհիստոքիմիական, օրգանիզմի հիմնական համակարգերի վիճակի գնահատման այլ ֆունկցիոնալ և ախտորոշիչ մեթոդներին, ինչպես նաև լաբորատոր կենդանիների հետ փորձարարական աշխատանքների մեթոդ-

ներին:

«Կենսաինֆորմատիկա» մասնագիտության գծով ուսանողներին հնարավորություն է ընձեռվում ուրույն և ճշգրիտ մաթեմատիկական մոտեցումներ կիրառելով, համակարգչային ծրագրավորման, մաթեմատիկական մոդելավորման զուգակցությամբ պարզաբանել ժամանակակից կենսաբանության, հատկապես մոլեկուլային կենսաբանության և գենետիկայի հրատապ հիմնախնդիրները՝ առանց չափազանց բարդ, թանկարժեք սարքավորումներ պահանջող, երկար ժամկետներում իրականացվող և, որ ամենակարևորն է, շատ դեպքերում ճշգրտությամբ զիջող ամբողջ շարք կենսաբանական փորձարարական մեթոդների: Կենսաինֆորմատիկական բնույթի հետազոտությունները չափազանց արդիական են, մեծ տարածում և զարգացում ունեն առաջատար երկրներում, տարբեր բնույթի համաշխարհային գիտատեխնիկական ֆոնդերի կողմից ահռելի գումարներ և միջոցներ են հատկացվում դրանց: Բաժանմունքում պատրաստվում են բարձրորակ մասնագիտական կադրեր, որոնք անմասն չեն մնա այդ բավական հզոր ֆինանսական աղբյուրներից:

Բակալավրիատի համակարգում ուսանողներին տրվող տեսական գիտելիքները ամրապնդվում են Զրազդանի Սարմարիկ ուսանողական հանգրվանում անցկացվող դաշտային, ինչպես նաև ֆակուլտետի ամբիոններում կազմակերպվող փորձարարական պրակտիկաների ընթացքում: Բակալավրիատի ավարտական կուրսում կազմակերպվում է նաև մանկավարժական պրակտիկա Երևան քաղաքի դպրոցներում:

Մագիստրատուրայի համակարգում ֆակուլտետը մասնագետներ է պատրաստում տասնմեկ մասնագիտացումների գծով (բուսաբանություն, կենդանաբանություն, գենետիկա, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա, կենսատեխնոլոգիա, էկոլոգիա, կենսասննդագիտություն, կենսաքիմիա, բժշկական կենսաքիմիա, կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա): Սրանցից կենսասննդագիտությունը, կենսաինֆորմատիկան և բժշկական կենսաքիմիան համեմատաբար նոր մասնագիտացումներ են և արդեն արժանացել են բակալավրիատի շրջանավարտների ուշադրությանը:

Ֆակուլտետի շրջանավարտների աշխատանքային ոլորտը բազմաճյուղ է, ուսումնական և գիտական հիմնարկներից (բուհեր, հանրակրթական դպրոցներ, գիտահետազոտական ինստիտուտներ) բացի պահանջն օրեցօր աճում է սննդարդյունաբերության, կենսատեխնոլոգիայի տարբեր բնագավառներում աշխատելու համար:

Կենսաբանության ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է

կենսաբանություն, կենսաֆիզիկա, կենսաքիմիա, կենսաինֆորմատիկա մասնագիտություններով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին Կենսաբանության ֆակուլտետում դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.

Մասնագիտություն	Համախմբում	2010թ.		2009թ.		2008թ.			
						Հիմնական մրցույթ		Հարցազրույց	
		Միջին Գլխավորների վերականգնում	Տեղերի քանակը	Միջին Գլխավորների վերականգնում	Տեղերի քանակը	Միջին Գլխավորների վերականգնում	Տեղերի քանակը	Միջին Գլխավորների վերականգնում	Տեղերի քանակը
Կենսաբանություն	Անվճ	76	8	47	14	32	9	3	5
	Վճ	-	-	-	19	-	17	-	2
	US	-	37	-	12	-	12	-	-
Կենսաֆիզիկա	Անվճ	19	5	13	10	17	6	1	4
	Վճ	-	-	-	11	-	10	-	1
	US	-	25	-	9	-	9	-	-
Կենսաքիմիա	Անվճ	52	5	50	10	42	6	3	4
	Վճ	-	-	-	11	-	10	-	1
	US	-	25	-	9	-	9	-	-
Կենսաինֆորմատիկա	Անվճ	22	3	20	5	13	3	3	2
	Վճ	-	-	-	5	-	3	-	2
	US	-	17	-	10	-	10	-	-

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.				
						Հիմնական մրցույթ			Հարցազրույց	
	Անվճ	Վճ(US)	Անվճ	Վճ	US	Անվճ	Վճ	US	Անվճ	Վճ
Կենսաբանություն	30.5	17.5	25.8	23.6	16	28.8	23	16	22	-
Կենսաֆիզիկա	21.75	16	18.8	22.3	-	25.6	22.5	17.8	20.5	-
Կենսաքիմիա	32.25	19.5	29.8	25.8	18.6	31	27.1	16.3	16.5	-
Կենսաինֆորմատիկա	26.75	18.5	26.8	24.6	16	32	26.5	21.3	34.3	-

## ՊԱՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒՆՏԵՏ

Պատմության ֆակուլտետը փաստորեն գործում է ԵՊՀ-ի հիմնադրման օրից՝ 1919 թվականից: Ֆակուլտետը նախ հանդես է գալիս որպես պատմալեզվագրական ֆակուլտետի բաժին, ապա՝ հասարակագիտական բաժանմունքի ենթաբաժին, այնուհետև՝ մանկավարժության, արևելագիտության ու պատմագրության ֆակուլտետների բաժին:

Պատմության ֆակուլտետը, որպես ինքնուրույն միավոր, կազմավորվել է 1936թ.: Ֆակուլտետում դասավանդվում են պատմագիտական և հասարակագիտական բնույթի բազմաթիվ առարկաներ: Լուրջ հիմքերի վրա է դրված լեզուների՝ հին հունարենի, վրացերենի, լատիներենի, ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի, թուրքերենի, պարսկերենի, արաբերենի, իտալերենի դասավանդումը:

Ֆակուլտետում ունի վեց ամբիոն՝ հայոց պատմության, համաշխարհային պատմության, Հայաստանի հարակից երկրների պատմության, հնագիտության և ազգագրության, հայ արվեստի պատմության և տեսության, մշակութաբանության, որտեղ դասավանդում են ՀՀ ԳԱԱ 2 ակադեմիկոս, 6 թղթակից անդամ, գիտությունների 16 դոկտոր պրոֆեսոր, 51 թեկնածու դոցենտ:

Ֆակուլտետի հնագույն և կարևորագույն ամբիոններից է հայոց պատմության ամբիոնը, որն ավելի քան մեկ տասնամյակ կոչվում էր հայ ժողովրդի պատմության ամբիոն: Սկզբնապես այն եղել է առարկայական հանձնաժողով, որը ղեկավարել է Հ. Մանանդյանը (1921-1925թթ.): Կարևոր ամբիոններից են համաշխարհային պատմության, Հայաստանի հարակից երկրների պատմության և հնագիտության և ազգագրության ամբիոնները:

1996թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջոցներով բացվեց հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնը, որը մինչ օրս գլխավորում է արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լևոն Չուգասյանը:

2007թ. ստեղծվեց մշակութաբանության ամբիոնը: Նույն թվականից պատմության ֆակուլտետում գործում է հեռակա ուսուցում երեք մասնագիտությունների գծով՝ պատմություն, արվեստաբանություն, մշակութաբանություն, իսկ 2010 թ-ից՝ մագիստրատուրայի հեռակա ուսուցում՝ պատմության գծով:

Պատմության ֆակուլտետը ներկայումս կազմված է մասնագիտական երեք բաժիններից՝ պատմության, արվեստաբանության և մշակութաբանության: Սակայն իր գոյության ընթացքում ունեցել է նաև փիլիսոփայության ու միջազգային հարաբերությունների, պատմության և տեսության բաժիններ, որոնք այնուհետև վերածվել են առանձին ինքնուրույն ֆակուլտետների:

Պատմության ֆակուլտետի շրջանավարտները, ստանալով համապատասխան որակավորում, աշխատանքի են անցնում հիմնականում դպրոցներում, ինչպես նաև համալսարաններում, ՀՀ ԳԱԱ զանազան ինստիտուտներում, Պատմության, Ցեղասպանության պատմության, Երևանի պետական համալսարանի թանգարաններում, պատկերասրահներում, Ազգային արխիվում, այլ արխիվային հիմնարկներում, Մատենադարանում և այլուր:

Արվեստաբանության բաժնի շրջանավարտները, ստանալով համապատաս-



խան որակավորում, աշխատանքի են անցնում Հայաստանի պատմության թանգարանում, ազգային պատկերասրահում, Կաֆեսյան արվեստի կենտրոնում, հեռուստատեսային կայաններում, լրագրերի խմբագրություններում, Արտաքին գործերի նախարարությունում, նշանավոր նկարիչների և քանդակագործների տուն-թանգարաններում և հանրակրթական դպրոցներում, Մատենադարանում, տուրիստական գործակալություններում: Արվեստաբանության բաժնի շրջանավարտները աշխատանքի են անցնում նույնիսկ արտասահմանում:

Մշակութաբանության բաժնի շրջանավարտները, ստանալով համապատասխան որակավորում, աշխատանքի են անցնում ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տարբեր բաժիններում, Մշակույթի նախարարությունում, մարզային մշակութային կենտրոններում, Հայաստանի տարբեր թանգարաններում, մշակութային տուրիզմով զբաղվող հաստատություններում, պատկերասրահներում, տուն-թանգարաններում, մշակութային հետազոտություններ կատարող հասարակական կազմակերպություններում, ՁԼՄ-ներում, ԵՊՀ-ում և այլ բուհերում, ինչպես նաև հանրակրթական դպրոցներում:

Անցած տարիներին ֆակուլտետը զգալի նվաճումներ է արձանագրել գիտական բնագավառում: Այն իրավամբ համարվում է հանրապետության պատմագիտության կարևորագույն օջախը՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հետ միասին: Վերջին շրջանում ֆակուլտետը դարձել է հայագիտության, քարտեզագրության և Հայաստանի պատմական աշխարհագրության ուսումնասիրման նշանավոր կենտրոն: Ֆակուլտետում գործում են քարտեզագրության և հնագիտական հետազոտությունների լաբորատորիաները:

Ուսումնական աշխատանքներին զուգընթաց ֆակուլտետի ամբիոնները կատարում են գիտահետազոտական լուրջ աշխատանք: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ուժերով ստեղծվում են բազմաթիվ մենագրություններ, բուհական դասագրքեր, ձեռնարկներ, դպրոցական դասագրքեր: Ֆակուլտետի ամբիոնները մեծ ուշադրություն են դարձնում դասախոսությունների որակի բարելավմանը, գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը և երիտասարդ կադրերի պատրաստմանը: Ֆակուլտետը գիտամանկավարժական կապեր ունի ինչպես ԱՊՀ երկրների առաջատար բուհերի, այնպես էլ արտասահմանյան երկրների (ԱՄՆ, Ավստրիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Լեհաստան, Իտալիա) հեղինակավոր բուհերի հետ: Ֆակուլտետի ուժերով կազմակերպվում են ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային բազմաթիվ գիտաժողովներ:

Ֆակուլտետում ունի Ն.Մառի անվան գրադարան-ընթերցասրահը, որը վերջերս հարստացել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս «Հ.Սիմոնյանի ֆոնդ»-ի գրքերով: Ֆակուլտետում գործում են ազատամարտիկների անվան լսարաններ:

ԵՊՀ պատմության ֆակուլտետը, անտարակույս, հանրապետության պատմագիտական մտքի կարևորագույն կենտրոններից մեկն է: Հայոց պատմության բազմաթիվ խնդիրներ՝ մասնավորապես Հայոց ցեղասպանության, Արցախի պատմությանը վերաբերող հարցերն ունեն ոչ միայն պատմական, այլ նաև արդիական, քաղաքական հնչեղություն, ուստի պատմաբանների կատարած աշխատանքները պատմագիտական արժեքից զատ ունեն համապետական նշանա-

կություն և կարևորություն: Ֆակուլտետում մեծ աշխատանքներ են տարվում ուսանողության ազատ ժամանցի և նրանց արտալսարանային կյանքի կազմակերպման ուղղությամբ: Այս աշխատանքներում մեծ դեր ունեն ֆակուլտետի ուսանողական կառույցները՝ ուսխորհուրդը և ՈՒԳԸ-ն, բացի դրանից ֆակուլտետում գործում են նաև տարբեր ուսանողական կառույցներ: Ֆակուլտետի ուսանողական կառույցների ջանքերով կազմակերպվում են տարբեր միջոցառումներ (Հայոց ցեղասպանության, Հայաստանի առաջին Հանրապետության, Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման թեմաներով): Պատմության ֆակուլտետի ուսխորհրդի և ՈՒԳԸ-ի ակտիվ աշխատանքների շնորհիվ՝ ուսանողների ջանքերով ֆակուլտետում հրատարակվում է նաև «Երիտասարդ պատմաբան» ուսանողական պարբերականը:

Հիմնադրման օրվանից մինչև օրս ֆակուլտետը հանրապետությանը տվել է հազարավոր պատմաբան շրջանավարտներ, որոնք աշխատում են մանկավարժության, գիտության, պետական, հասարակական կյանքի և այլ բնագավառներում:

2009թ. մեծ շուքով նշվեց ֆակուլտետի հիմնադրման 90-ամյակը:

Պատմության ֆակուլտետում այսօր սովորում են 1204 ուսանողներ, որոնցից 668-ը՝ բակալավրիատում, իսկ 186-ը՝ մագիստրատուրայում: Շրջանավարտներից 16-ը ուսումը շարունակում են ասպիրանտուրայում: Հեռակա ուսուցմամբ սովորում են 350 ուսանողներ:

Ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է

- պատմություն
- արվեստաբանություն
- մշակութաբանություն

մասնագիտություններով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին Պատմության ֆակուլտետում դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.

Մասնագիտություն	Խմբորդում	2010թ.		2009թ.		2008թ.	
		Դիմորդների թիվ	Տեղերի քանակը	Դիմորդների թիվ	Տեղերի քանակը	Դիմորդների թիվ	Տեղերի քանակը
Պատմություն	Անվճ	312	12	223	25	177	25
	Վճ	-	-	-	20	-	20
	ԱՏ	-	53	-	20	-	20
Արվեստաբանություն	Անվճ	40	5	31	10	44	10
	Վճ	-	-	-	15	-	15
	ԱՏ	-	35	-	15	-	15
Մշակութաբանություն	Անվճ	48	3	38	5	53	5
	Վճ	-	-	-	10	-	10
	ԱՏ	-	27	-	15	-	15

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.		
	Անվճ	Վճ(ԱՏ)	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ	ԱՏ

Պատմություն	50	42.5	50	49.3	44.6	47.8	46.5	42.8
Արվեստաբանություն	49	41	45.1	48.8	42.6	45.3	46.8	42
Մշակութաբանություն	41.75	39.5	46.5	50.1	43.8	47.8	47	43

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒՆԵՏ

Անցած դարի վերջում Հայաստանը ձեռք բերեց անկախություն և կարճ ժամանակամիջոցում դարձավ միջազգային հանրության լիիրավ անդամ: Նոր պայմանները, բնականաբար, առաջ էին բերում բարձր որակավորում ունեցող միջազգայնագետների ու քաղաքագետների պատրաստման անհրաժեշտություն:

1990թ. ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ Արևելագիտության ֆակուլտետի կազմում ստեղծվել էր «Միջազգային հարաբերությունների» բաժին: Մեկ տարի անց՝ ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ բաժինը տեղափոխվեց պատմության ֆակուլտետ:

1998թ. սեպտեմբերի 16-ին ԵՊՀ գիտխորհուրդը որոշում կայացրեց Պատմության ֆակուլտետի «Միջազգային հարաբերություններ» բաժնի հիմքի վրա ստեղծել Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ՝ նրան միացնելով նաև Փիլիսոփայության ֆակուլտետի կազմում 1997թ. գործող «Քաղաքագիտություն» բաժինը: 2007թ. ֆակուլտետի կազմում բացվեց մի նոր բաժին՝ «Հանրային կառավարում»: Այժմ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետը իր կազմում ունի երեք բաժիններ՝ միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն և հանրային կառավարում:

Միջազգային հարաբերությունները՝ պատմագիտության կարևորագույն ճյուղերից մեկը ներառված է նաև քաղաքագիտության հետազոտության շրջանակներում:

Միջազգային հարաբերությունների բաժնում ուսանողները հնարավորություն ունեն ուսումնասիրելու միջազգային հարաբերությունների տեսություն և պատմություն, միջպետական հարաբերություններ և արտաքին քաղաքականություն, ժամանակակից միջազգային հարաբերությունների համակարգը և դրանց առնչվող մի շարք այլ դասընթացներ:

Բաժնի ուսումնական պլաններում զգալի տեղ է հատկացված դիվանագիտությանը՝ որպես խաղաղ բանակցությունների միջոցով արտաքին քաղաքականության իրականացման ձևերի, մեթոդների և եղանակների մասին գիտություն, դիվանագիտական և հյուպատոսական ծառայության առանձնահատկություններին, դիվանագետի պատասխանատու առաքելությանը և հիմնական պարտականություններին: Դիվանագիտական և հյուպատոսական իրավունք ու ծառայություն, դիվանագիտական արարողակարգ և էթիկետ, բազմակողմ դիվանագիտություն և դիվանագիտական բանակցությունների վարում՝ ահա ոչ լրիվ ցանկը այն դասընթացների, որ դասավանդվում են բաժնում: Իհարկե, այդ ամենին ավելացրած նաև տեղական նյութն է՝ Հայաստանի միջազգային հարաբերությունների և հայ դիվանագիտության պատմություն:

Միջազգային հարաբերությունների բաժնում մեծ ուշադրություն է դարձվում օտար լեզուներին: Երկու օտար լեզվի ուսումնասիրությունն ու իմացությունը պարտադիր է, ինչն արձանագրված է դիվանագիտական ծառայության մասին ՀՀ օրենքում:

Ժամանակակից աշխարհում քաղաքական գիտությունը դառնում է ամենաարագ զարգացող մասնագիտություններից մեկը: Քաղաքագետների պահանջարկն այսօր զգացվում է հասարակական կյանքի համարյա բոլոր ոլորտներում: Լուրջ և բանիմաց քաղաքագետներ պետք են պետական ներկայացուցչական մարմինների խորհրդատվական և տեղեկատվական կենտրոններում, ԱԺ պատգամավորներին՝ օգնականների պաշտոնում աշխատելու համար, թերթերի և ամսագրերի խմբագրություններին՝ քաղաքական վերլուծություններ կատարելու համար, ընտրարշավները մասնագիտական բարձր մակարդակով անցկացնելու նպատակով, քաղաքական, տնտեսական և սոցիալական տարբեր այլ կառույցներում հանրային կապերը ամրապնդելու առումով և այլն:

Վերջին ժամանակներում Հայաստանում, ինչպես և հետխորհրդային շատ երկրներում, մեծապես ակտիվացել է հասարակական կազմակերպությունների աշխատանքը, որոնք միավորելով քաղաքական խոր գիտելիքներ ունեցող երիտասարդների, միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ լայնորեն աջակցում են հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներում ծավալվող ժողովրդավարացման գործընթացներին:

Մասնագիտական պատրաստվածության նման բարձր աստիճանի ապագա քաղաքագետները կարող են հասնել շնորհիվ ֆակուլտետում դասավանդվող հարուստ առարկայացանկի: Արդի քաղաքական գիտության պահանջներին համապատասխանող ուսումնական պլանը հնարավորություն է տալիս ուսանողներին ձեռք բերել անհրաժեշտ հմտություններ ժամանակակից ներքաղաքական գործընթացները գնահատելու, համաշխարհային քաղաքականության նոր մարտահրավերները հասկանալու, քաղաքական տեխնոլոգիաները գործնականում ճիշտ կիրառելու, սոցիալ-քաղաքական իրականությունում իրենց արժանավոր կերպով դրսևորելու համար: Մի խոսքով, ԵՊՀ քաղաքագիտության բաժնի ապագա շրջանավարտը դառնում է լայն աշխարհայացքով օժտված, ազգային արժեքները գնահատող, հանդուրժողականությամբ դեկավարվող, համաշխարհային օրինաչափությունները ճանաչող ակտիվ և նախաձեռնող քաղաքացի, որի նկատմամբ հասարակության ներսում խիստ պահանջարկ կա:

Հանրային կառավարման բաժնում ուսումնասիրում են հանրային քաղաքականությունը, վարչական և քաղաքական փոխհարաբերությունները, ռազմավարական ուղղությունները: Բաժնում դասավանդվող առարկաներից են՝ մեներջմենթ և կառավարում, հանրային քաղաքականություն և համեմատական վարչարարություն, կազմակերպչական վարք և բյուրոկրատիայի տեսություն, համայնքի զարգացում և կառավարում, էլեկտրոնային կառավարում ու կրթության կառավարում և այլն:

Կրթական նման մակարդակը ֆակուլտետի շրջանավարտներին հնարավորություն է ընձեռնում աշխատելու՝ դիվանագիտական հաստատություններում, միջազգային տարբեր կազմակերպություններում, հանրապետության պետական իշխանության մարմիններում, ինչպես նաև ոչ պետական հաստատությունների ու կազմակերպությունների հետազոտական-վերլուծական բաժիններում: Ներկայումս ֆակուլտետը համագործակցում է ԱՄՆ-ի, Հունաստանի, Եգիպտոսի, Սիրիայի, Իրա-

նի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Լեհաստանի, Ուկրաինայի և Ռուսաստանի Դաշնության և այլ երկրների համալսարանների հետ: Ֆակուլտետում ավանդույթ են դարձել հանդիպումները՝ Երևանում գործող օտարերկրյա դեսպանների, արտասահմանյան երկրներում ՀՀ դեսպանների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների երևանյան գրասենյակների ներկայացուցիչների, քաղաքագետների, վերլուծաբանների հետ:

Բարձր առաջադիմությամբ բակալավրիատի շրջանավարտները կարող են ուսումը շարունակել մագիստրատուրայում: Մագիստրատուրայում կազմակերպվում է արտադրական պրակտիկա՝ ութ շաբաթ տևողությամբ՝ միջազգայնագետների համար հիմնականում ՀՀ Արտգործնախարարությունում, ՀՀ-ում օտարերկրա դեսպանություններում և Ազգային ժողովում, քաղաքագետների համար՝ Ազգային ժողովում և Սահմանադրական դատարանում, «Հանրային կառավարում» մասնագիտության գծով՝ պետական ինքնակառավարման մարմիններում:

Ուսանողական կյանքը ֆակուլտետում առավելապես պայմանավորված է Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության գործունեությամբ: Վերջինս ամեն տարի կազմակերպում է ուսանողական կոնֆերանսներ, որտեղ առավել հաջողված զեկուցումներն արժանանում են խրախուսման: Ֆակուլտետի ուսանողները ակտիվորեն մասնակցում են միջազգային երիտասարդական գիտաժողովներին և արժանանում մրցանակների:

Ֆակուլտետում գործում է «Բանավեճ» ակումբը, որի մասնակիցները քննարկում ու բանավիճում են իրենց հետաքրքրող քաղաքական և այլ բնույթի հարցերի շուրջ:

Ֆակուլտետում գործում է հինգ ամբիոն՝ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության, դիվանագիտության ծառայության և մասնագիտական հաղորդակցման, քաղաքական ինստիտուտների և գործընթացների, քաղաքական գիտության պատմության և տեսության, հանրային կառավարման, որտեղ դասավանդում են մեծ փորձ ունեցող բարձրակարգ դիվանագետներ և քաղաքագետներ: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը համալրում են գիտությունների 6 դոկտոր պրոֆեսոր, 20 թեկնածու դոցենտ:

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում սովորում են 2041 ուսանողներ, որոնցից 1084-ը՝ բակալավրիատում, իսկ 402-ը՝ մագիստրատուրայում ( որոնցից 134-ը՝ հեռակա բաժնում): Շրջանավարտներից 23-ը ուսումը շարունակում են ասպիրանտուրայում, իսկ հեռակա ուսուցմամբ սովորում է 555 ուսանող:

Ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է հետևյալ մասնագիտություններով.

- միջազգային հարաբերություններ
- քաղաքագիտություն
- հանրային կառավարում:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.

Մասնագիտություն	Համախառմը	2010թ.		2009թ.		2008թ.	
		Միլիոն ԱՄՆ դոլար	Միլիոն Տեղեկատվական	Միլիոն ԱՄՆ դոլար	Միլիոն Տեղեկատվական	Միլիոն ԱՄՆ դոլար	Միլիոն Տեղեկատվական
Միջազգային հարաբերություններ	Անվճ	218	0	353	12	211	12
	Վճ	-	-	-	45	-	45
	ԱՏ	-	80	-	25	-	10
Քաղաքագիտություն	Անվճ	177	5	113	10	89	10
	Վճ	-	-	-	30	-	30
	ԱՏ	-	55	-	20	-	20
Հանրային կառավարում	Անվճ	207	3	136	5	94	5
	Վճ	-	-	-	15	-	15
	ԱՏ	-	37	-	20	-	10

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.		
	Անվճ	Վճ(ԱՏ)	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ	ԱՏ
Միջազգային հարաբ.	-	50	58.4	54.1	48.3	54.3	51.3	47.8
Քաղաքագիտություն	54.5	46.25	52.1	51.5	45.4	49	49.3	44
Հանրային կառավարում	55.5	47.75	57.3	52.6	46.4	52.8	50.8	45

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Տնտեսագիտական առանձին գաղափարներ կան հայեցակարգային դրույթներ արժարժվում էին դեռևս Յին աշխարհի մտածողների աշխատություններում: Սակայն որպես գիտության ինքնուրույն ճյուղ, որպես գիտական համակարգ, տնտեսագիտությունը ձևավորվեց շուկայական տնտեսակարգի կայացման ժամանակաշրջանում: Այդ ժամանակներից ի վեր անցել են դարեր: Տնտեսագիտության մեջ առաջացել և շարունակում են առաջանալ նոր ուղղություններ և դպրոցներ: Ինքը՝ փոփոխվող տնտեսական իրականությունն է նոր խնդիրներ ու պահանջներ առաջադրում գիտությանը:

Այս պայմաններում շարունակաբար աճում է պահանջարկը տնտեսագետ մասնագետների նկատմամբ, մասնագետներ, որոնք հարկավոր են ինչպես տեսական, այնպես էլ ամենատարբեր մակարդակներում ու ոլորտներում տնտեսության կառավարման գործնական բնույթի բարդ հիմնախնդիրների լուծման համար:

Երևանի պետական համալսարանի հիմնադրումից սկսած տնտեսագիտությունը եղել է ուսուցման կարևոր ուղղություններից մեկը հասարակագիտական (1920թ.), խորհրդային շինարարության (1921թ.), իրավատնտեսագիտական և սոցիալտնտեսագիտական (1924թ.) ֆակուլտետներում: Որպես ինքնուրույն ստորաբաժանում ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետը ձևավորվել է 1933-1934 ուստարում: 1975-1983թթ. տնտեսագետ-մասնագետների պատրաստումը համալսարանում ընդմիջվեց Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ստեղծմամբ: 1984թ. ԵՊՀ-ում ֆակուլտետը վերաբացվեց տնտեսագիտական կիբեռնետիկա անվանմամբ՝ տարեկան 25 ուսանողների ընդունելությամբ և մեկ մասնագիտական ամբիոնով:

Ներկայումս ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետում ուսուցման տարբեր ձևերով սովորում են շուրջ 1783 ուսանողներ, որից 1001-ը՝ բակալավրիատում, 240-ը՝ մագիստրատուրայում, իսկ 542-ը՝ հեռակա ուսուցման գծով: Ուսուցումը կազմակերպվում է հինգ ամբիոնների կողողինացված աշխատանքով: Դրանք են՝ «Տնտեսագիտության տեսության», «Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման», «Միջազգային տնտեսագիտության», «Կառավարման և գործարարության» և «Ֆինանսահաշվային»: Դասավանդման գործում ընդգրկված են 70-ից ավելի դասախոսներ, որոնցից մեկը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ է, մեկ տասնյակից ավելին գիտության դոկտոր պրոֆեսորներ են, իսկ հինգ տասնյակը՝ գիտության թեկնածու դոցենտներ:

2007-2008 ուստարվանից սկսած բակալավրիատում «Տնտեսագիտություն» մասնագիտությունից բացի ընդունելություն է իրականացվում նաև «Կառավարում» մասնագիտությամբ: Ինչ վերաբերում է մագիստրոսական ծրագրերին, ապա դրանք ութն են՝ «Տնտեսության մոդելավորում», «Կառավարման ինֆորմացիոն համակարգեր», «Ֆինանսներ, վարկ և դրամաշրջանառություն», «Գործարար և կառավարում», «Միջազգային տնտեսական հարաբերություններ» «Տնտեսագիտության տեսություն», «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» և «Ինովացիոն կառավարում»:

Վերջին մի քանի տարիների ընթացքում իրականացված լայնածավալ աշխատանքների շնորհիվ ձեռք են բերվել հետևյալ արդյունքները.



□ Բարելավվել և միջազգային չափանիշներով ճշգրտվել են ինչպես բակավարկատի, այնպես էլ մագիստրատուրայի ուսումնական պլանները, վերջիններս՝ ըստ մագիստրոսական ծրագրերի հստակ սահմանազատված ուղղությունների:

□ Մեծ թափ են ստացել հայալեզու տնտեսագիտական դասագրքերի և ուսումնական ձեռնարկների պատրաստման, թարգմանության, խմբագրման և հրատարակման աշխատանքները: Ֆակուլտետի առաջատար դասախոսների հեղինակությամբ կան խմբագրությամբ վերջին երեք տարիների ընթացքում լույս է ընծայվել ուսանողությանը խիստ անհրաժեշտ մեծածավալ ուսումնական գրականություն:

□ Ընդլայնվել և կոնկրետ առարկայական բովանդակություն է ձեռք բերել միջազգային համագործակցությունը, որի շնորհիվ ոչ միայն ֆակուլտետի դասախոսների շուրջ կեսը վերապատրաստվել է արտասահմանյան կրթօջախներում, այլև հիմնվել են չորս համակարգչային լսարաններ, գործարկվել է անխափան ինտերնետային կապ, ժամանակակից գրականությամբ համալրվել է ֆակուլտետի ընթերցասրահը, ներդրվել են դասավանդման նոր տեխնոլոգիաներ: Մասնավորապես, ամենաեական արդյունքներից մեկը Կալիֆոռնիայի (Ֆրեզնո) պետական համալսարանի աջակցությամբ «Կառավարման տեղեկատվական տեխնոլոգիաներ» նոր մագիստրոսական մասնագիտացման բացումն ու ծրագրային ապահովումն է: Ֆակուլտետի տարածքում է գործում նաև «Յետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն» կազմակերպությունը, որը աննախադեպ հնարավորություններ է ընձեռում ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների բեղմնավոր ստեղծագործական գործունեության համար:

□ 2002 թ. ֆակուլտետի գիտական ներուժի հիման վրա ԵՊՀ-ում բացվել է ՀՀ ԲՈՅ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհուրդը, և վերջին տարիներին թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ են պաշտպանել տարեկան շուրջ երկու տասնյակ ատենախոսներ: Սեփական կադրերից բացի, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը համալրվում է հանրապետության պետական և տնտեսական կառավարման մարմիններում համատեղությամբ աշխատող մեծաթիվ բարձրորակ մասնագետներով:

Ֆակուլտետի շրջանավարտների մեծ մասը ուսումն ավարտելուց անմիջապես հետո աշխատանք է գտնում ՀՀ տնտեսության և պետական կառավարման համակարգի կարևորագույն օղակներում: Ֆակուլտետի շրջանավարտների թվում եղել են ՀՀ վարչապետներ, նախարարներ, Ազգային ժողովի պատգամավորներ, խոշոր ձեռնարկությունների և բանկերի գործադիր ղեկավարներ և այլն: Նրանց մեծ մասը շարունակում է պահպանել ֆակուլտետի հետ կապը՝ նպաստելով տասնամյակների ընթացքում ձևավորված բարի ավանդույթների պահպանմանն ու փոխանցմանը:

Տնտեսագիտական կրթության որակական բարելավման, դասախոսական կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման կարևորագույն նախադրյալներից է համագործակցությունը արտասահմանյան առաջավոր համալսարանների հետ: Այդ նկատառումով ֆակուլտետը առաջնահերթորեն պահպանեց իր ավանդական կապերը Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի հետ՝ ակտիվորեն անդամակցելով տնտեսագիտության ուսումնամեթոդական խորհրդի աշխատանքներին և կա-

նոնավոր, առանց ընդհատումի մասնակցելով նիստերին 1992թ-ից առ այսօր: Դա հնարավորություն տվեց ոչ միայն հաղորդակից լինելու Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի և Բելառուսի առաջավոր համալսարանների տնտեսագիտական ֆակուլտետների ուսումնական գործընթացներին, նոր ուսումնական պլաններին և ծրագրերին, հրատարակված ու թարգմանված դասագրքերին, այլ նաև իրականացնելու ուսանողների, ասպիրանտների և դասախոսների փոխանակություն: Սկսած 1995թ-ից ֆակուլտետի բարձր առաջադիմությամբ մի քանի տասնյակ ուսանողներ անվճար հիմունքներով իրենց ուսումը շարունակել են Մոսկվայի պետական համալսարանում, ՌԴ կառավարության ժողովրդական տնտեսության ակադեմիայում, Գ.Վ.Պլեխանովի անվան տնտեսագիտական ակադեմիայում: Նրանց մի մասը, ավարտելով նաև ասպիրանտուրան, վերադարձել է Հայաստան և ներկայումս աշխատում է ֆակուլտետում և այլ բուհերում:

Ուսանողական կյանքը ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետում ակտիվ է: Ուսանողական խորհրդի ջանքերով կազմակերպվում են բազմաբնույթ մշակութային միջոցառումներ, այդ թվում՝ գրական-գեղարվեստական ցերեկույթներ, տարաբնույթ սպորտային առաջնություններ և ինտելեկտուալ խաղեր: Կազմակերպվում են հանդիպումներ պետական հատվածի տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչների, հայտնի տնտեսագետների և գործարարների, ինչպես նաև մշակութային գործիչների հետ: Պարբերաբար ֆակուլտետում անցկացվում են առարկայական օլիմպիադաներ և գիտական կոնֆերանսներ, տնտեսագիտական և հասարակական կյանքի այլ ոլորտներին առնչվող թեմաներով բանավեճեր ու քննարկումներ: Ֆակուլտետի ՈւԽ-ը (Ուսանողական խորհուրդը) հրատարակում է «Երիտասարդ տնտեսագետ» ուսանողական ամսաթերթը:

Ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է երկու մասնագիտություններով.

- տնտեսագիտության տեսություն, կառավարում:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին Տնտեսագիտության ֆակուլտետում դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.

Մասնագիտություն	Համալսարան	2010թ.		2009թ.		2008թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Տնտեսագիտության տեսություն	Անվճ	334	10	342	25	290	25
	Վճ	-	-	-	125	-	125
	ԱՏ	-	150	-	10	-	10
Կառավարում	Անվճ	122	4	104	8	90	8
	Վճ	-	-	-	35	-	35
	ԱՏ	-	49	-	10	-	5

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.		
	Անվճ	Վճ(ԱՏ)	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ	ԱՏ
Տնտեսագիտության տեսություն	56.5	43.25	57.1	46.8	40.8	58.3	52.5	49.3

Կառավարում	56	42.75	54.5	45.8	39.4	55	51.8	47.5
------------	----	-------	------	------	------	----	------	------

## ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ԵՎ ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի կազմավորման գործը սկիզբ է առել 1964թ-ից, երբ առաջին անգամ Պատմության ֆակուլտետում կատարվեց առանձին ընդունելություն և ստեղծվեց փիլիսոփայության բաժին, որը 1969թ. տվեց առաջին շրջանավարտները: Մինչև 1970թ. փիլիսոփայության բաժնում և համալսարանի բոլոր ֆակուլտետներում փիլիսոփայության դասավանդումը իրականացնում էր փիլիսոփայության միակ ամբիոնը, որի հիման վրա այդ թվականին ստեղծվեց երեք ամբիոն, որոնք գործառու են մինչ օրս:

1982թ. բաժինն առանձնացվեց պատմության ֆակուլտետից, և ստեղծվեց Փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետ, որտեղ մինչև 1990թ. փիլիսոփաները և սոցիոլոգները ընդունվում էին միասին, իսկ 3-րդ կուրսից առանձնացնում էին ըստ մասնագիտությունների: Այդ եղանակով անհրաժեշտ մասնագետներ պատրաստելուց հետո 1991թ. սոցիոլոգիան առանձնացավ փիլիսոփայությունից և դարձավ ինքնուրույն բաժին, որից գրեթե նույն ճանապարհով 1995թ. ծնունդ առավ սոցիալական աշխատանքի բաժինը:

1992թ. ֆակուլտետում բացվեց նաև հոգեբանության բաժին, ուստի ֆակուլտետը վերանվանվեց Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության: Մինչև 1998թ. նրա կազմում էր գործառու նաև նոր ձևավորվող քաղաքագիտության բաժինը, որը 1998թ. ներառվեց նորաստեղծ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի կազմի մեջ:

2004թ. սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի բաժիններն առանձնացան ֆակուլտետից և դարձան ինքնուրույն ֆակուլտետ, իսկ մայր ֆակուլտետը վերանվանվեց փիլիսոփայության և հոգեբանության:

2005թ. հոգեբանության նախկին ամբիոնի հիման վրա ստեղծվեց երկու ամբիոն՝ հոգեբանության տեսության և պատմության ու կիրառական հոգեբանության: 2009թ. կազմավորվեց երրորդ՝ անձի հոգեբանության ամբիոնը, իսկ նախկին երկու ամբիոնները վերանվանվեցին համապատասխանաբար՝ Ընդհանուր հոգեբանության և Սոցիալական հոգեբանության:

Ներկայումս ֆակուլտետում գործում է վեց ամբիոն՝ Տեսական փիլիսոփայության և տրամաբանության, Սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության, Փիլիսոփայության պատմության, Ընդհանուր հոգեբանության, Սոցիալական հոգեբանության և Անձի հոգեբանության:

Ընդհանուր հոգեբանության ամբիոնին կից գործում է երկու գիտահետազոտական լաբորատորիա՝ 1. փորձարարական հոգեբանության, որտեղ զբաղվում են հոգեբանության հետազոտական մեթոդների, հատկապես՝ հոգեախտորոշման մեթոդիկաների համակողմանի մոդելի մշակման ու կիրառման հիմնախնդիրներով, 2. անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության, որտեղ զբաղվում են մասնագիտական գործունեության մեջ անձի հոգեբանական անվտանգության, ինչ-

պես նաև մասնագիտական կողմնորոշման հիմնահարցերով:

Ֆակուլտետում 2008թ. գործում է Հոգեբանական ծառայության կենտրոն, որն ստեղծվել է հոգեբանական գիտության նվաճումները հանրությանը ծառայեցնելու և կյանքում կիրառելու նպատակով:

Ֆակուլտետը պատրաստում է փիլիսոփայության և հոգեբանության բակալավրներ, ինչպես նաև փիլիսոփայություն, բարոյագիտություն, սոցիալական հոգեբանություն, բժշկական հոգեբանություն, տարիքային հոգեբանություն, կառավարման և կազմակերպչական հոգեբանություն, արտակարգ իրավիճակների հոգեբանություն, անձի հոգեբանություն և անձնային հոգեբանություն մասնագիտացումներով մագիստրոսներ, ովքեր աշխատում են հանրապետության քաղաքական, տնտեսական, կրթական ու մշակութային ոլորտներում (նախադպրոցական ու դպրոցական, բուհական, գիտահետազոտական ու մշակութային հաստատություններ, բնակչության սոցիալական ծառայության հիմնարկներ, հոգեբանական վերականգնողական կենտրոններ, ՁԼՄ) և այլն:

Փիլիսոփայությունը բացառիկ կրթական ներուժ ունեցող բնագավառ է, քանի որ բնության, հասարակության և մարդու հիմնախնդիրների տեսական ուսումնասիրմանը զուգընթաց այն ունի նաև գործնական-արժեքային նշանակություն: Հնուց ի վեր համարվելով գիտությունների գիտություն և արվեստների արվեստ, փիլիսոփայությունը և փիլիսոփայական կրթություն ունեցող անձինք կարևոր դեր են խաղացել տարբեր հասարակություններում՝ նպաստելով աշխարհայացքային հիմքերի մշակմանը և արտաքին աշխարհի վայրիվերումների հորձանուտում անհատների ու մշակույթների ինքնության պահպանմանը: Որպես կանոն, տարբեր դարաշրջաններում հզորության են հասել են այն ժողովուրդներն ու մշակույթները, որոնք կարողացել են ստեղծել կենսահաստատ փիլիսոփայական համակարգեր:

20-րդ դարում գիտատեխնիկական բուռն զարգացումը, կարծես թե ստվերել էր փիլիսոփայական մտեցման ու գիտելիք-արժեքների կարևորությունը, առաջնությունը տալով նեղ մասնագիտական կրթությանը: Սակայն նման մտեցումը շուտով օրինաչափորեն հանգեցրեց բախումների, քանի որ գոյացման նեղ մասնագիտական հանրություններ, որոնք զուրկ էին ընդհանուր հումանիտար հիմքից և ի վիճակի չէին երկխոսության: Արդիականության հոգևոր ճգնաժամը նորից ակնհայտ դարձրեց փիլիսոփայական կրթության և հասարակության հոգևոր-արժեքային կողմի վրա աշխատելու անհրաժեշտությունը, և ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային կազմակերպությունը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն, որոշեց սահմանել Փիլիսոփայության միջազգային օր, որը ֆակուլտետում տոնվում է նոյեմբերի 18-ին:

Փիլիսոփայության բաժինը սովորողներին տալիս է հիմնարար բազմակողմանի կրթություն, որի շնորհիվ բաժնի շրջանավարտները, աշխատելով հասարակական-քաղաքական, կրթության և մշակույթի տարբեր ոլորտներում շահեկանորեն առանձնանում են իրենց խորը գիտելիքներով և լայնախոհության, բացմտության, հիմնարար հետազոտություններ ու եզրահանգումներ անելու և մի շարք այլ կարողություններով: Փիլիսոփայական կրթությունը նրանց հնարավորություն է տալիս աշխատանքում հանդիպող խնդիրներին նայել ավելի լայն հա-

մատչելի, հավատարիմ մնալ արժեքային կարևոր կողմնորոշիչներին, ինչը նպաստում է և՛ տարատեսակ բնագավառներում նրանց կատարած կոնկրետ աշխատանքի առավել արդյունավետությանը, և՛ ընդհանրապես, հասարակական հարաբերությունների առավել մարդկայնացմանը:

Դեպի ժողովրդավարական հասարակություն տանող ճանապարհին կարևորվում է նաև փիլիսոփայական-հումանիտար գիտելիք, կարողություններ, արժեքներ եռամիասնության մուտքը հանրակրթական դպրոց: 2007թ-ից սկսած հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարաններում դասավանդվում է «Հասարակագիտություն» ինտեգրված առարկան, որի բաղադրիչներն են փիլիսոփայությունը, իրավագիտությունը, բարոյագիտությունը, գեղագիտությունը, տնտեսագիտությունը, քաղաքագիտությունը և հոգեբանությունը:

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետը բակալվրի կրթական աստիճանում պատրաստում է նաև «Հասարակագիտություն» առարկային դասավանդողներ թե՛ հանրակրթական դպրոցների, թե՛ միջնակարգ մասնագիտական հաստատությունների համար՝ նրանց մատուցելով կրթության փոփոխության արդի կարևորագույն նվաճումներն ու արժեքները:

Հոգեբանական կրթությունը բազմամակարդակ և բազմակողմանի գործընթաց է, որը առաջին հերթին ուղղված է ձևավորելու ուսանողի մոտ աշխարհայացքային լայն սպեկտր, բարձր բարոյական արժեքներ, միջավայրում ներդաշնակ հաղորդակցվելու կարողություններ, ինչպես նաև անձնային, ինտելեկտուալ որակներ և կյանքի հմտություններ: Բացի այդ, այն կօզնի ուսանողին զգալու սեփական ներուժը և մասնագետ դառնալու ձգտումը, հստակեցնելու ապագայի նկատմամբ պատկերացումները և բազմազան հասարակական գործընթացների ակտիվ մասնակցի կարգավիճակ ստանձնելու ու մասնագիտական բնագավառում կայանալու հնարավորությունները: Ի վերջո, հոգեբանության բաժնի կրթական գործունեությունը նպատակ ունի պատրաստել բարձր որակավորում ունեցող տարբեր ոլորտների հոգեբան-մասնագետներ, որոնք տիրապետում են հոգեբանական կայուն գիտելիքների և կիրառական հմտությունների:

Վերը նշվածը իրականանում է հմուտ ու բարձրորակ պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմի ներդրած ջանքերի միջոցով, միջբուհական և միջազգային համագործակցության արդյունքում, ինչպես նաև ֆակուլտետի կողմից կազմակերպվող մասնագիտական-կողմնորոշիչ, դաստիարակչական, հետազոտական և գործնական աշխատանքների շնորհիվ:

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի բարձր կուրսերի ուսանողներն իրենց ուսումնական և արտադրական պրակտիկաներն անց են կացնում հիմնականում նախադպրոցական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում, հոգեբանական կենտրոններում, քրեակատարողական հիմնարկներում, լրատվական ծառայության ոլորտում և այլն:

Ֆակուլտետն ունի գիտահետազոտական աշխատանքների մի շարք ուղղություններ, որոնց շրջանակներում համագործակցում է հանրապետության և արտասահմանյան կենտրոնների ու մասնագետների հետ՝ շատ դեպքերում հան-

դես գալով որպես հանրապետությունում տվյալ ուղղության ղեկավար կենտրոն:

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում այսօր աշխատում է բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ, քանզի վերջինս համալրում են ՀՀ ԳԱԱ 1 ակադեմիկոս և 1 թղթակից անդամ, գիտության 13 դոկտոր պրոֆեսոր, գիտության 28 թեկնածու, դոցենտ:

2008-2009 ուստարվանից ֆակուլտետում գործում է հոգեբանության գծով հեռակա ուսուցման բաժին, որտեղ սովորում են 78 ուսանող:

Ֆակուլտետում սովորում են 599 ուսանողներ, որոնցից 426-ը՝ բակալավրիատում, իսկ 173-ը՝ մագիստրատուրայում: Ֆակուլտետի լավագույն շրջանավարտներից տասներեքը շարունակում են ուսանել մայր բուհի ասպիրանտուրայում:

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է

- փիլիսոփայություն
- հոգեբանություն

մասնագիտություններով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.

Մասնագիտություն	Էանկուրը	2010թ.		2009թ.		2008թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Փիլիսոփայություն	Անվճ	30	5	33	10	38	10
	Վճ	-	-	-	15	-	15
	ԱՏ	-	30	-	10	-	10
Հոգեբանություն	Անվճ	101	5	134	10	133	10
	Վճ	-	-	-	20	-	20
	ԱՏ	-	45	-	20	-	20

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.		
	Անվճ	Վճ(ԱՏ)	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ	ԱՏ
Փիլիսոփայություն	40.5	39	41.8	48	41.9	45.5	45.8	42.5
Հոգեբանություն	50.75	31.75	48	44.4	35.6	51.5	48	43.3

## ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Սոցիոլոգիայի ֆակուլտետը սկսել է գործել 2004 թվականից: Սակայն որպես բաժին այն համալսարանում կազմավորվել է 1986 թվականին: Ֆակուլտետում գործում են երկու ամբիոններ՝ «Կիրառական սոցիոլոգիա»-ի և «Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաներ»-ի:

Ֆակուլտետի ձևավորման հենց առաջին տարվանից ամբիոնները ծավալեցին գիտամանկավարժական արդյունավետ գործունեություն, որի արդյունքներն են՝ նոր դասընթացների մշակումն ու դասավանդումը, ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների հրատարակումը, ֆակուլտետում մասնագիտացումների կազմակերպումը:

Ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է

- սոցիոլոգիա
- սոցիալական աշխատանք

մասնագիտություններով:

Սոցիոլոգիայի բաժնում բակալավրիատի 3-րդ կուրսից ուսանողները հնարավորություն ունեն ընտրել 3 հատուկ մասնագիտացումներից որևէ մեկը՝ կիրառական սոցիոլոգիա, կոնֆլիկտաբանություն և հասարակայնության հետ կապեր (PR):

Ֆակուլտետն ապահովում է մագիստրոսական կրթություն հետևյալ հինգ մասնագիտացումներով՝

- սոցիոլոգիա,
- կոնֆլիկտաբանություն,
- սոցիալական հետազոտություններ և PR,
- սոցիալական աշխատանք,
- սոցիալական քաղաքականություն և վարչարարություն:

Սոցիոլոգիան գիտություն է հասարակության մասին: Ի տարբերություն մյուս հասարակական գիտությունների, որոնք ուսումնասիրում են հասարակական կյանքի այս կամ այն կողմը, սոցիոլոգիան ուսումնասիրում է հասարակությունն ամբողջությամբ: Սոցիոլոգիայի ուսումնասիրության առավել գործնական բնագավառներն են անհատի և հասարակության փոխհարաբերությունները, սոցիալական ինտիտուտները և նրանց գործառույթները, այն ամենը, ինչ տեղի է ունենում սոցիալական իրականության մեջ: Սոցիոլոգիան հայտնաբերում է հասարակության զարգացման օրենքներն ու օրինաչափությունները, որոնք մարդկանց համար ուղեցույցի դեր են կատարում հասարակությունը ծանաչելիս: Սոցիոլոգիան նաև մարդկանց զինում է հասարակության ուսումնասիրման յուրահատուկ տեխնոլոգիայով, որի անունն է սոցիոլոգիական հետազոտություն և որից օգտվում են բոլոր նրանք, ովքեր ուզում են գիտական փաստեր ունենալ մարդկանց համատեղ կյանքի մասին:

«Սոցիոլոգիա» մասնագիտությամբ շրջանավարտները կարող են աշխատել գիտակրթական հաստատություններում, տնտեսության բոլոր այն հատ-

վածներում, որտեղ իրականացվում են շուկային վերաբերող (մարքեթինգային) հետազոտություններ, ինչպես նաև հասարակական կազմակերպություններում և քաղաքական քարոզարշավներով զբաղվող օղակներում, ՋԼՄ-ներում:

Կոնֆլիկտաբանությունը գիտություն է, որն զբաղվում է տարաբնույթ կոնֆլիկտների ուսումնասիրմամբ, վերջիններիս առաջացման պատճառների և հետևանքների վերլուծությամբ, ինչպես նաև դրանց կանխարգելման, կարգավորման և լուծման մեխանիզմների մշակմամբ: Կոնֆլիկտաբանությունը զբաղվում է ինչպես միջանձնային, այնպես էլ խմբային և հասարակական կոնֆլիկտներով: Խոսքը սոցիալական, քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա կոնֆլիկտների մասին է:

Կոնֆլիկտաբան շրջանավարտները կարող են աշխատել պետական և ոչ պետական կառույցներում, որոնք առնչվում են միջպետական, համայնքային, մշակութային, միջանձնային հարաբերություններին, ազգային անվտանգության հիմնախնդիրներին: Նման խնդիրների լուծմամբ զբաղվում են տարբեր նախարարություններ, գործակալություններ, աշխատանքի պետական տեսչությունը, մասնագիտական-խորհրդատվական կենտրոնները, հասարակական կազմակերպությունները և այլն:

PR-ը ժամանակակից աշխարհում առավել մեծ պահանջարկ վայելող մասնագիտություններից է, որը նպաստում է կազմակերպությունների և իրենց հասարակայնության միջև արդյունավետ հաղորդակցությունների ապահովմանը, տեղեկատվական հոսքերի կառավարմանը, հասարակությունում կազմակերպության հեղինակության հաստատմանը:

PR-ի շրջանավարտները կարող են աշխատել որպես հասարակայնության հետ կապերի PR մասնագետ, PR-մենեջեր, պետական և մասնավոր կառույցներում PR-խորհրդատու, կազմակերպության լրատվական ծառայության աշխատակից, ղեկավար, փորձագետ, ինչպես նաև նշված մասնագիտության շրջանակներում դասավանդել մասնագիտական կրթական հաստատություններում:

Սոցիալական աշխատանքը մասնագիտական գործունեություն է, որն օգնում է անհատներին, խմբերին և համայնքներին լուծելու իրենց սոցիալական հիմնախնդիրները, ուժեղացնելով նրանց նոր գիտելիքներով ու հմտություններով՝ ավելի ներդաշնակ դարձնելով միջավայրի հետ նրանց փոխհարաբերությունները: Սոցիալական աշխատողի միջամտության արդյունքում բարելավվում է մարդկանց սոցիալական գործառնումը, հաղթահարվում են նրանց կյանքում առաջացած դժվարությունները:

«Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ շրջանավարտները կարող են աշխատել սոցիալական ապահովության և պաշտպանության ծառայություններում՝ խնամքի հաստատություններում, դպրոցներում, հիվանդանոցներում, բանտերում և դատարաններում, դասավանդել մասնագիտական կրթական հաստատություններում և այլն:

«Սոցիալական քաղաքականություն և վարչարարություն» մասնագիտացման շրջանավարտները կարող են աշխատել սոցիալական քաղաքականության մշակման ոլորտում՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,



ազգային ժողովին կից հանձնաժողովի փորձագիտական խումբ, հասարակական, բարեգործական, հանրային նշանակության կազմակերպություններ, ինչպես նաև սոցիալական ծառայությունների վարչական աշխատողներ:

Ֆակուլտետի դասախոսները պարբերաբար վերապատրաստվում են արտասահմանյան հեղինակավոր համալսարաններում: Սոցիոլոգիայի ֆակուլտետում դասավանդելու նպատակով արտասահմանից հաճախակի հրավիրվում են բարձրակարգ մասնագետ-դասախոսներ: Ֆակուլտետը միջազգային գիտական համագործակցություն է իրականացնում տարբեր երկրների՝ Ռուսաստանի Դաշնության, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Նորվեգիայի, Յունգարիայի, Հնդկաստանի հայտնի համալսարանների, ԱՄՆ-ի Քոնեքթիքուսի և Ջորջ Մեյսոն համալսարանների հետ: Իրականացվում են համատեղ ծրագրեր Լոնդոնի բաց համալսարանի հետ: Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնը սերտորեն համագործակցում է Քոնեքթիքուսի Սոցիալական աշխատանքի բարձրագույն դպրոցի հետ՝ երկու համալսարանների մագիստրատուրայի ուսանողների համար կազմակերպում է on-line դասընթաց, որի ավարտից հետո ուսանողների փոխադարձ այցելություն է կատարվում Հայաստան և ԱՄՆ, բակալավրիատի չորրորդ կուրսի ուսանողները հնարավորություն են ունենում մասնակցելու Գերմանիայի Մյունստեր քաղաքում կազմակերպվող ամենամյա Ամառային դպրոցի աշխատանքներին:

«Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բակալավրի դիպլոմ կարելի է ստանալ նաև սովորելով հեռակա ուսուցման բաժնում, որտեղ ուսուցումը 5 տարի է, իսկ լսարանային պարապմունքները տևում են տարեկան 8 շաբաթ:

Սոցիալական աշխատանքի գծով ուսման կարևոր մաս է կազմում մասնագիտական պրակտիկան, որը տևում է 4 կիսամյակ: Այն կազմակերպվում է հանրապետության տարբեր սոցիալական ծառայություններում, որտեղ երկու ղեկավարների հսկողությամբ ուսանողները յուրացնում են մասնագիտական անհրաժեշտ հմտություններ: Բացի այդ, ուսանողներն ունեն նաև ամառային պրակտիկայի հնարավորություն, որը կազմակերպվում է Հայաստանի և Արցախի տարբեր բնակավայրերում:

Ֆակուլտետին կից գործում է օտարալեզու հարուստ մասնագիտական գրադարան, որն ուսանողներին հնարավորություն է տալիս յուրացնել համապատասխան նյութը, կատարել գիտահետազոտական աշխատանք: Ֆակուլտետին կից ստեղծվել և գործում են նաև հեռուսուցման լաբորատորիան՝ «Սոցիալական աշխատանք» և «PR» մասնագիտություններով, որն ունի մասնաճյուղեր ՀՀ տարբեր քաղաքներում, Կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների լաբորատորիան, Տարածաշրջանային ինտեգրացիայի և կոնֆլիկտների լուծման կենտրոնը:

Ուսումնական և գիտահետազոտական գործընթացների կազմակերպման գործում ֆակուլտետը համագործակցում է ինչպես ներհամալսարանական, այնպես էլ հանրապետության տարբեր կառույցների հետ:

Ֆակուլտետում գործում են «Ուսանողական գիտական ընկերություն», «Ուսանողական խորհուրդ», «Երիտասարդական համալսարանականների միություն» ուսանողական կառույցները, որոնք ուսանողների առօրյան դարձնում են բազմակողմանիորեն հագեցված:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը համալրում են գիտությունների 4 դոկտոր, 8 թեկնածու դոցենտ, 13 թեկնածու ասիստենտ և 22 դասախոս:

Սոցիոլոգիայի ֆակուլտետում այսօր սովորում են 454 ուսանողներ, որոնցից 368-ը՝ բակալավրիատում, իսկ 86-ը՝ մագիստրատուրայում: Շրջանավարտներից 7-ը ուսումը շարունակում են ասպիրանտուրայում, իսկ հեռակա ուսուցմամբ սովորում է 45 ուսանող:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին Սոցիոլոգիայի ֆակուլտետում դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.

Մասնագիտություն	Գնահատում	2010թ.		2009թ.		2008թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Սոցիոլոգիա	Անվճ	51	5	64	10	53	10
	Վճ	-	-	-	20	-	20
	ԱՏ	-	45	-	20	-	20
Սոցիալական աշխատանք	Անվճ	15	3	26	5	51	5
	Վճ	-	-	-	15	-	15
	ԱՏ	-	27	-	10	-	10

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.		
	Անվճ	Վճ(ԱՏ)	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ	ԱՏ
Սոցիոլոգիա	46	33.5	43.9	42.3	35.8	47.8	47.8	44.3
Սոցիալական աշխատանք	42	30	41.3	41.3	35.3	46.5	46.8	44.8

## ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒՆԵՏ

Բանասիրությունը հումանիտար գիտություններից մեկն է, որն ուսումնասիրում է լեզուն ու գրականությունը: Մարդն իր մտքերը ձևավորում ու արտահայտում է լեզվի միջոցով, ուստի լեզվի ուսումնասիրությունը նաև մտածողության ու հաղորդակցության ուսումնասիրություն է: Բանասիրությունը պարզում է նաև գրականության գեղեցիկ ու խորհրդավոր աշխարհը: Այդ ասպարեզի դռները իր ողջ հարստությամբ ու շռայլությամբ ձեր առջև կբացի ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետը:

Հայ բանասիրության ֆակուլտետը համալսարանի հիմնադիր ֆակուլտետներից է: Նրա հիման վրա են կազմակերպվել վաղուց ինքնուրույն գործող Արևելագիտության, Ռուս բանասիրության, Ռոմանագերմանական բանասիրության և ժուռնալիստիկայի ֆակուլտետները: Ֆակուլտետի հիմնադիր դասախոսները բարձրագույն կրթություն էին ստացել արտասահմանյան նշանավոր համալսարաններում, նրանց մի մասը բնակվում և աշխատում էր տարբեր երկրներում, բայց հայրենիքում բացված համալսարանը դարձավ միավորող ուժ և համախմբեց նրանց: Նորաստեղծ համալսարանում բանասիրական առարկաներ էին դասավանդում գիտության երախտավորներ Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառյանը, Ստեփան Մալխասյանը, Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյանը, Գրիգոր Ղափանցյանը, Աշխարհբեկ Լոռու Մելիք-Քալանթարը, Գևորգ Ասատուրը, Արսեն Տերտերյանը և այլք: Նրանց ջանքերն իզուր չանցան, և ֆակուլտետը եղավ ու մնաց հայոց լեզվի ու գրականության գիտամանկավարժական հզոր կենտրոն, որտեղ հետագայում աշխատեցին ու գործեցին այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են ակադեմիկոսներ Ս.Մկրյանը, Հ.Թամրազյանը, Էդ.Ջրբաշյանը, Էդ.Աղայանը, Գ.Ջահուկյանը, Գ.Անանյանը և այլք: Այսօր էլ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը պատվով է կատարում վաստակաշատ ավագների թողած գործը: Ֆակուլտետի շրջանավարտներ են մայրենի լեզվի ու գրականության հազարավոր ուսուցիչներ, նշանավոր գրողներ, գրականագետներ, լեզվաբաններ և պետական գործիչներ:

Ֆակուլտետն ունի յոթ ամբիոն՝ Հայոց լեզվի, Հայոց լեզվի պատմության, Ընդհանուր լեզվաբանության, Հայ գրականության, Հայ նորագույն գրականության, Համաշխարհային գրականության և գրականության տեսության, Մանկավարժության: Այս ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմը ուսումնասիրել և ուսումնասիրում է լեզվաբանական, գրականագիտական ու մանկավարժական բազմաթիվ հարցեր, ստեղծում մենագրություններ, ձեռնարկներ, դասագրքեր:

Հանրակրթական դպրոցի տարբեր դասարանների՝ լեզվի և գրականության դասագրքերի հեղինակները ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ներկայիս դասախոսներ են՝ պրոֆեսորներ Լ.Մնացականյանը, Ջ.Ավետիսյանը, Ժ.Քալանթարյանը, Լ.Եզեկյանը, Ռ.Սաքապետոյանը, դոց.Ա.Սարգսյանը:

Ֆակուլտետում ուսուցումը եռաստիճան է. բակալավրիատ՝ 4 տարի, մագիստրատուրա՝ 2 տարի, ասպիրանտուրա՝ 3 տարի: Բակալավրիատում կա երկու

մասնագիտություն՝ «հայոց լեզու և գրականություն» և «սոցիալական մանկավարժություն»): Մագիստրատուրայում գործում են հետևյալ մասնագիտացումները՝ «ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ», «հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն», «հայ գրականության պատմություն», «հայ նորագույն գրականություն և գրաքննադատություն», «համաշխարհային գրականություն և գրականության տեսություն», «սփյուռքագիտություն», «հանրակրթության կառավարում», «բարձրագույն կրթության կառավարում»: Բակալավրիատի առաջին կուրսից սկսած՝ ցանկացողները որպես օտար լեզու, անգլերենից, ֆրանսերենից, գերմաներենից բացի, կարող են սովորել հունարեն կամ վրացերեն:

Ֆակուլտետում գործում է նաև բակալավրիատի (5 տարի) և մագիստրատուրայի (2,5 տարի) հեռակա ուսուցում:

Ուսանելով Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետում՝ դուք կարող եք լինել հայ մտքի երախտավորների գործի արժանի շարունակողը: Մասնագիտական որակյալ կրթությունը կյանքում կօգնի ձեզ լինելու լավ ուսուցիչ, դասախոս, խմբագիր, թարգմանիչ, լրագրող, հաղորդավար, գրող, սցենարիստ և այլն: Ֆակուլտետի «հայոց լեզու և գրականություն» բաժնում ուսանելու տարիներին դուք կսովորեք ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, բառագիտություն և քերականություն, գրաբար, արևմտահայերեն, հայ ժողովրդի բանահյուսություն, հայ հին, միջնադարյան, նոր, նորագույն և արդի գրականություն, ռուս և արտասահմանյան գրականություն, ինչպես նաև թարգմանչական, խմբագրական տարբեր դասընթացներ:

«Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բաժնի ուսանողները որպես սոցիալական մանկավարժներ կպատրաստվեն Հայաստանի Հանրապետության դպրոցների համար, որի անհրաժեշտությունն ու կարևորությունն ամրագրված են ՀՀ հանրակրթության պետական կրթակարգում: Սոցիալական մանկավարժը դպրոցում իրականացնում է ուսումնասիրողի, օգնողի, խորհրդատուի և ուղղորդողի գործառույթներ՝ երեխաների տարաբնույթ սոցիալ-մանկավարժական խնդիրները լուծելու համար:

Ֆակուլտետում հրատարակվում է «Բանասեր» ուսանողական թերթը, գործում են Գրական ստուդիան, «ՈւԳԸ» (Ուսանողական գիտական ընկերություն), որոնց մասնակիցները պարբերաբար կազմակերպում են տարաբնույթ միջոցառումներ՝ էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ և մշակութային այլ օջախներ, հանդիպումներ գրողների հետ, գրքերի քննարկումներ և այլն:

Ֆակուլտետը գիտամշակութային կապեր ունի Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի հայագիտական տարբեր հաստատությունների, ինչպես և ՀՀ գրողների միության հետ, և պարբերաբար կազմակերպվում են գիտական նստաշրջաններ, կոնֆերանսներ:

Ֆակուլտետում դասավանդում են գիտությունների 17 դոկտոր պրոֆեսոր, գիտության 40 թեկնածու, դոցենտ և 29 թեկնածու, ասիստենտ:

Ֆակուլտետում սովորում է 1052 ուսանող, որոնցից 608-ը՝ բակալավրիատում, 160-ը՝ մագիստրատուրայում, 284-ը՝ հեռակա բաժնում:

2011թ. Հայ բանասիրության ֆակուլտետում ընդունելությունը կատարվելու է

- հայոց լեզու և գրականություն
- սոցիալական մանկավարժություն

մասնագիտություններով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին Հայ բանասիրության ֆակուլտետում դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.

Մասնագիտություն	Զանգված	2010թ.		2009թ.		2008թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Հայոց լեզու և գրականություն	Անվճ	275	20	265	40	284	40
	Վճ	-	-	-	40	-	40
	ԱՏ	-	100	-	40	-	40
Սոցիալական մանկավարժություն	Անվճ	35	2	-	-	-	-
	Վճ	-	-	-	-	-	-
	ԱՏ	-	20	-	-	-	-

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.		
	Անվճ	Վճ(ԱՏ)	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ	ԱՏ
Հայոց լեզու և գրականություն	47.25	34.25	45	41.6	36.3	48.3	45.5	42.5
Սոցիալական մանկավարժություն	29.25	26	-	-	-	-	-	-

## ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԵՊՀ Ժուռնալիստիկայի բաժինը բացվել է 1949թ. Բանասիրական ֆակուլտետի կազմում: Մեկ տասնամյակ անց դադարել է գործել և վերաբացվել է 1960-ականներին, կրկին փակվել շուրջ մեկ տասնամյակ և նորից վերաբացվել 1986 թվականին:

Որպես առանձին միավոր՝ ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետը հիմնադրվեց 1999թ. հոկտեմբերի 1-ին, ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ: Տարիների ընթացքում Ժուռնալիստիկա մասնագիտության դասավանդումը դրվեց ամուր հիմքերի վրա, և լրագրողական որակյալ կադրերի պատրաստման համար ստեղծվեցին արդիական պայմաններ:

ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետը, լինելով երիտասարդներից մեկը համալսարանում, կրթական գործի կազմակերպման ոլորտում դրսևորած ճկուն քաղաքականության շնորհիվ ձեռք է բերել մի շարք առավելություններ, որոնք հիմք են տալիս ասելու, որ Ժուռնալիստիկա մասնագիտությամբ ուսուցում իրականացնող բուհերի համանուն ֆակուլտետների կան բաժինների շարքում եղել և մնում է առաջատարը:

2011/12 ուստարվա դիմորդները Ժուռնալիստիկայի ֆակուլտետ կընդունվեն հանձնելով հետևյալ քննությունները. Հայոց լեզու և գրականություն (գրավոր, տեստ կենտրոնացված կարգով), ապա բուհում՝ Երևանի պետական համալսարանում, Ստեղծագործական աշխատանք (շարադրություն առաջադրված թեմայով) և Բանավոր հաղորդակցման մշակույթ (նպատակն է ճշտել դիմորդի բանավոր խոսքի կուլտուրան, բառապաշարը, ասելիքը ճիշտ ձևակերպելու հմտությունը, Հայաստանում գործող զանգվածային լրատվամիջոցների (թերթ, ռադիո, հեռուստատեսություն և այլն) մասին իմացությունների շրջանակը):

Ֆակուլտետում գործում է ուսուցման եռաստիճան համակարգ: Առաջին աստիճանը բակալավրիատն է: Չորսամյա ուսուցման ընթացքում ուսանողները ստանում են բարձրագույն լրագրողական կրթություն, որն, ըստ էության, բավարար է լրագրողի մասնագիտությամբ զբաղվելու համար:

Բակալավրիատի շրջանավարտներից շատերն անմիջապես աշխատանքի են անցնում մայրաքաղաքային և մարզային ՁԼՄ-ներում (թերթերի, շաբաթաթերթերի, ռադիոյի խմբագրություններ, հեռուստաընկերություններ, լրատվական գործակալություններ, ինտերնետային հրատարակչություններ), տարբեր գերատեսչությունների մամուլի ծառայություններում:

Ֆակուլտետում գործում է մագիստրոսական երկու ծրագիր, որոնք առաջարկում են երկամյա կրթություն: Ժուռնալիստիկա անվամբ ծրագիրը նախատեսում է խորացնել մասնագիտական գիտելիքները, մեծացնել Ժուռնալիստիկայի և լրագրագիտության ոլորտում գիտական աշխատանքներ իրականացնելու հնարավորությունները:

Մեդիա, հաղորդակցություն և հասարակություն մագիստրոսական ծրագրի նպատակն է՝ տրամադրել ուսանողներին բազմակողմանի գիտելիք մեդիայի և

հաղորդակցության, ինչպես նաև արդի հասարակության մեջ նրանց դերի մասին: Այն թույլ է տալիս յուրացնել ժամանակակից մոտեցումներ և հետազոտական մեթոդներ, որոնք անհրաժեշտ են վերլուծելու և հասկանալու համար մեդիայի և հաղորդակցության ասպարեզի արդի գործընթացները համաշխարհային զարգացումների գլոբալ համատեքստում:

Մագիստրատուրայի լավագույն շրջանավարտներն ուսումնառությունը շարունակում են ասպիրանտուրայում, համալրում պրոֆեսորադասախոսական կազմի շարքերը:

Ժուռնալիստիկայի ֆակուլտետում գործում է երկու ամբիոն՝ մամուլի պատմության և տեսության և ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի, որոնց աշխատանքներում ներգրավված են ժուռնալիստիկայի տարբեր ասպարեզներում մասնագիտացած փորձառու և բարձրակարգ մասնագետներ: Նրանց մի մասը ֆակուլտետի շրջանավարտ է: Իրենց փորձն ու հմտությունները ապագա լրագրողներին փոխանցում են նաև հանրապետության առաջատար լրատվամիջոցների ճանաչված աշխատակիցները:

Ամբիոններում տարբեր ուղղություններով իրականացվում են գիտահետազոտական ուսումնասիրություններ, կազմակերպվում են սեմինարներ, գիտաժողովներ: Լավագույն հոդվածներն ու զեկուցումները լույս են տեսնում առանձին ժողովածուներով, տպագրվում հանրապետական և միջազգային հեղինակավոր ամսագրերում:

Ֆակուլտետում ստեղծված են լավագույն պայմաններ՝ ուսանողներին տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ հաղորդելու, նրանց մասնագիտական որակավորումն ապահովելու համար: Այս առումով մեծ է մուլտիմեդիա լաբորատորիայի դերը: Այստեղ գործում են տեսաձայնագրման և մոնտաժման ժամանակակից սարքավորումներով համալրված ռադիո- և հեռուստաստուդիաներ, համակարգչային սրահ՝ ինտերնետ կապի առկայությամբ, մասնագիտական գրականությամբ և ընթացիկ մամուլի լրակազմերով հագեցած գրադարան, ինչպես նաև «Ժուռնալիստ» ուսումնական թերթի խմբագրությունը:

Ժուռնալիստիկայի ֆակուլտետում նոր տեխնոլոգիաների կիրառումը կարևոր տեղ է զբաղեցնում, քանի որ ուսումնական գործընթացի մի զգալի մասն էլ իրականացվում է վիրտուալ ասպարեզում՝ դասախոսների և ուսանողների էլեկտրոնային շփման միջոցով: Նոր մեդիայի և հաղորդակցության հետազոտությունների կաթինետում է տեղակայված Journalist.am էլեկտրոնային ուսումնական պարբերականի խմբագրությունը: Հայաստանում այն թերևս միակ վիրտուալ պարբերականն է, ուր լրագրողների դերում հանդես են գալիս ուսանողները, իսկ խմբագիրների՝ ժուռնալիստի վարպետության դասախոսները:

Իբրև գիտակրթական կենտրոն՝ ֆակուլտետն ըստ արժանվույն է գնահատում ոչ միայն դասախոսների, այլև ուսանողների հնարավորությունները: Նրանց լավագույն զեկուցումներն ու հրապարակումները խրախուսվում են հատուկ մրցանակներով, տպագրվում տարբեր ժողովածուներում:

Ֆակուլտետը սերտ համագործակցություն է սկսել ոչ միայն երկրում գործող լրագրողական կազմակերպությունների, տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների, լրատվական գործակալությունների, այլև տարբեր գերատեսչությունների հետ:

Այսպես՝ ՀՀ Պաշտպանության նախարարության հետ իրականացվում է «Ռազմական ժուռնալիստիկա» դասընթացը, որի առաջին դասը մշտապես վարում է պաշտպանության նախարարը: ՀՀ Մշակույթի նախարարության աջակցությամբ կյանքի է կոչվել «Մշակութային ժուռնալիստիկա» դասընթացը, իսկ Սփյուռքի նախարարությունը օգնում է արտերկրի հայալեզու առաջատար ՁԼՄ-ների և կրթական հաստատությունների հետ գործակցության հարցում:

Սերտ է համագործակցությունը Հայաստանում ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի, Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության, Կարմիր Խաչի հայկական ընկերության և ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոնի հետ:

Տարեցտարի ընդլայնվում են կապերը արտերկրի առաջատար բուհերի՝ Բեռլինի, Կոբլենցի, Հանովերի, Համբուրգի, Ռոստովի, Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Նիժնի Նովոգորոդի համալսարանների, Թբիլիսիի ժուռնալիստիկայի և մեդիամենեջմենթի դպրոցների հետ:

Ուսանողական գիտական ընկերությունը և ուսխորհուրդը ամեն ինչ անում են ֆակուլտետի ուսանողության առօրյան հետաքրքիր և հիշարժան դարձնելու համար:

Ժուռնալիստիկայի ֆակուլտետի շրջանավարտներից ոմանք այսօր մեր երկրում հայտնի ժուռնալիստներ, խմբագիրներ և հասարակական գործիչներ են:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը համալրում են 4 դոկտոր պրոֆեսոր և 5 դոցենտ, բանասիրական գիտությունների 10 թեկնածու: Ֆակուլտետում սովորում է 385 ուսանող, որոնցից 225-ը՝ բակալավրիատում, 66-ը՝ մագիստրատուրայում, 94-ը՝ հեռակա բաժնում: Լավագույն շրջանավարտներից 7-ը ուսումնառությունը շարունակում են ասպիրանտուրայում:

2007թ. գործող հեռակա բաժինը մեծապես կօգնի աշխատանքային փորձ ունեցող բազմաթիվ լրագրողների, ովքեր չունեն համապատասխան մասնագիտական կրթություն այն ձեռք բերելու ֆակուլտետում:

Ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է լրագրություն (ժուռնալիստիկա) մասնագիտությամբ: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին ժուռնալիստիկայի ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի:

Ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է

լրագրություն (ժուռնալիստիկա) մասնագիտությամբ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին ժուռնալիստիկայի ֆակուլտետում դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.



Մասնագիտություն	Ինտերիուր	2010թ.		2009թ.		2008թ.	
		Դիմորդների թիվը	Սեղերի քանակը	Դիմորդների թիվը	Սեղերի քանակը	Դիմորդների թիվը	Սեղերի քանակը
Լրագրություն	Անվճ	83	7	108	16	101	16
	Վճ	-	-	-	20	-	20
	ԱՏ	-	44	-	15	-	15

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.		
	Անվճ	Վճ(ԱՏ)	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ	ԱՏ
Լրագրություն	43.25	24	41	37.3	29.3	45.5	40.5	36.3

## ՌՈՒՍ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒՏԵՏ

Որպես բանասիրական գիտությունների համակարգի մի ճյուղ՝ ռուսագիտությունը մեզանում ավանդաբար կարևորագույն տեղ է զբաղեցնում: Բացի զուտ գիտական հետաքրքրությունից, որ ներկայացնում են թե՛ բուն ռուսագիտությունը, թե՛ առավել ևս՝ հայ-ռուսական համեմատական զուգադրական և տիպաբանական ուսումնասիրությունները, այն մեծ ազդեցություն է ունեցել մեր երկրի հոգևոր կյանքում:

1938թ. ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում բացվեց ռուսաց լեզվի և գրականության բաժանմունք: Տարիների ընթացքում այն ուժ էր հավաքում և ընդլայնվում էր թե՛ դասավանդվող առարկաների, թե՛ գիտական ուղղվածությունների ու թեմաների առումով:

1976թ. այդ բաժանմունքի հիման վրա ստեղծվեց ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը, որը հետագայում վերանվանվեց ռուս բանասիրության ֆակուլտետի:

Ֆակուլտետում գործում են հետևյալ ամբիոնները. Ռուս գրականության, Ռուսաց լեզվաբանության, Տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոն, Ռուսաց լեզվի (հումանիտար ֆակուլտետների համար), Ռուսաց լեզվի (բնագիտական ֆակուլտետների համար):

Երկար տարիներ ֆակուլտետի հիմնական մասնագիտությունն էր «Ռուսաց լեզու և գրականություն»-ը: 2000թ. ավելացավ նաև «Թարգմանչական գործ»-ը, իսկ 2007-ին՝ «Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն» ռուսաց լեզու» մասնագիտությունը:

Ֆակուլտետում գործում է չորս ուսումնական կաթինետ, այդ թվում նաև Հունաստանի Հանրապետության աջակցությամբ ստեղծված «հունարենի լսարանը», Լեհաստանի աջակցությամբ ստեղծված «լեհերենի լսարանը»:

Ֆակուլտետի բակալավրիատը պատրաստում է ռուսագետ բանասերների՝ գիտահետազոտական, ուսուցչական, թարգմանչական գործունեության համար, մի շարք մասնագիտություններով, ռուսաց լեզու և գրականություն, թարգմանչական գործ, լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն, իսկ մագիստրատուրայում՝ ռուսաց լեզու և գրականություն, ռուս գրականության պատմություն, թարգմանչական գործ, ժամանակակից ռուսաց լեզու:

Ռուս բանասիրության ֆակուլտետում ուսումնամեթոդական աշխատանքն իրականացվում է երկու հիմնական ուղղություններով.

- ռուս բանասիրություն և թարգմանչական գործ մասնագիտություններին առնչվող առարկաներ, որոնց ուսուցումն ապահովում են ֆակուլտետի ամբիոնները,

- ռուսաց լեզվի գործնական դասընթաց, որը դասավանդում են համալսարանի ոչ մասնագիտական ֆակուլտետներում ռուսաց լեզվի (հումանիտար և բնագիտական ֆակուլտետների համար) ամբիոնների դասախոսները:

Բացի ավանդական օտար լեզուներից, ֆակուլտետում դասավանդվում են նաև բուլղարերեն, լեհերեն, չեխերեն և հունարեն: Յուրաքանչյուր տարի 10-ական ուսանող մեկնում է ամառային լեզվական դասընթացների Յունաստան, Լեհաստան և Բուլղարիա: Վերջին տարիների ընթացքում 20-ից ավելի ուսանող մասնակցել է Յունաստանում կազմակերպվող հունարեն լեզվի և մշակույթի մեկամսյա արագացված և երկարաժամկետ /8-ամսյա/ դասընթացներին:

Ֆակուլտետում կատարվում են նաև մի շարք գիտական ուսումնասիրություններ, ռուս գրականության պատմության և տեսության, ռուս լեզվաբանության արդի հիմնախնդիրների, լեզուների տիպաբանության և հաղորդակցման տեսության, ինչպես նաև ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի ընդհանուր խնդիրների վերաբերյալ: Գիտական հոդվածների հիմնական մասը տպագրվում է ամենամյա “Декабрьские литературные чтения” և “Лингвистические исследования” ժողովածուներում:

Ֆակուլտետի դասախոսները և լավագույն ուսանողները մասնակցում են միջազգային, հանրապետական գիտաժողովների, ուր հրատարակում են բազմաթիվ հոդվածներ և աշխատություններ: Դասախոսները ակտիվ մասնակցում են միջնակարգ դպրոցի համար ուսումնական գրականության ստեղծման աշխատանքներին:

Ռուս բանասիրության ֆակուլտետը սերտորեն համագործակցում է Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի, Ռուս-հայկական (սլավոնական) պետական համալսարանի և հանրապետության այլ բուհերի համապատասխան ֆակուլտետների հետ:

Յետգիտես վերականգնվում են երբեմնի սերտ կապերը Ռուսաստանի և ԱՊՀ մյուս երկրների գիտական և գիտակրթական հաստատությունների հետ:

Ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի 4 ուսանող գործուղվել է Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա՝ Ցանցային համալսարանի ծրագրով Ազգերի բարեկամության ռուսաստանյան համալսարան՝ համատեղ մագիստրոսական ծրագրով:

Ռուս բանասիրության ֆակուլտետում աշխատում է 86 դասախոս, այդ թվում՝ բանասիրական գիտությունների 3 դոկտոր-պրոֆեսոր և 28 թեկնածու-դոցենտ: Ֆակուլտետում սովորում են 512 ուսանող, որոնցից 372-ը՝ բակալավրիատում, 48-ը՝ մագիստրատուրայում, իսկ հեռակա բաժնում՝ 92 ուսանող: Շրջանավարտներից լավագույնները ուսումը շարունակում են ասպիրանտուրայում:

Ռուս բանասիրության ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է

- ռուսաց լեզու և գրականություն
- թարգմանչական գործ՝ ռուսաց և հայերեն լեզուներ
- լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն՝ ռուսաց լեզու

մասնագիտություններով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին Ռուս բանասիրության ֆակուլտետում դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.

Մասնագիտություն	Համախորհրդ	2010թ.		2009թ.		2008թ.	
		Դիմորդների քիվիվ	Սերտերի քանակը	Դիմորդների քիվիվ	Սերտերի քանակը	Դիմորդների քիվիվ	Սերտերի քանակը
Ռուսաց լեզու և գրականություն	Անվճ	72	7	67	20	118	20
	Վճ	-	-	-	5	-	5
	ԱՏ	-	33	-	15	-	16
Թարգմանչական գործ՝ ռուսաց և հայերեն լեզուներ	Անվճ	16	2	24	5	24	5
	Վճ	-	-	-	5	-	5
	ԱՏ	-	13	-	5	-	5
Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն՝ ռուսաց լեզու	Անվճ	54	3	57	5	106	5
	Վճ	-	-	-	10	-	5
	ԱՏ	-	22	-	10	-	5

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.		
	Անվճ	Վճ(ԱՏ)	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ	ԱՏ
Ռուսաց լեզու և գրականություն	45.75	28.75	45.8	44.1	28	50	49	45.5
Թարգմանչական գործ՝ ռուսաց և հայերեն լեզուներ	42	28	45.5	43.5	30.1	52	49	46
Լեզվ. և միջմշ. հաղորդ.՝ ռուսաց լեզու	50.25	34.25	50.6	48.1	26.6	54.8	53.5	48.8

## **ՌՈՍԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒՆԵՏ**

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը կազմավորվել է 1991թ. Բանասիրական ֆակուլտետի Ռոմանագերմանական լեզուների բաժնի հիման վրա: Իր գործունեության ընթացքում ֆակուլտետը հասցրել է մեծ ճանաչում ձեռք բերել ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Այդ տարիների ընթացքում ֆակուլտետը հաջողությամբ է հաղթահարել իր առջև ծառայած խնդիրները՝ ուսումնական պլանները, ծրագրերը և դասավանդման մեթոդները համապատասխանեցնելով գիտության, տնտեսության և մշակույթի ասպարեզներում առաջադրվող ժամանակակից պահանջներին: Ֆակուլտետի շրջանավարտները հաջողությամբ աշխատում են մեր հանրապետության ամենատարբեր հիմնարկներում, միջնակարգ դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, դեսպանատներում, պետական ու կառավարման բարձրագույն մարմիններում, արտասահմանում և մեր երկրում գործող միջազգային կազմակերպություններում:

Ֆակուլտետը համագործակցում է ինչպես արտասահմանյան երկրների մի շարք համալսարանների (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ռուսաստանի Դաշնություն և այլն), այնպես էլ Հայաստանի ամերիկյան համալսարանի, Ռուս-հայկական (սլավոնական) պետական համալսարանի և Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի հետ: Ֆակուլտետի դասախոսները ամեն տարի վերապատրաստման դասընթացներ են անցնում Ֆրանսիայում, Իտալիայում, Իսպանիայում, Գերմանիայում:

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում գործում են անգլիական բանասիրության, ռոմանական բանասիրության, գերմանական բանասիրության, ֆրանսիական բանասիրության, արտասահմանյան գրականության, թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնները, ինչպես նաև հումանիտար և բնագիտական ֆակուլտետները սպասարկող անգլերեն լեզվի երկու ամբիոնները: 2007թ-ից ֆակուլտետում գործում է հեռակա ուսուցման բաժինը:

Երկուհարյուր հիսունից ավելի բարձրակարգ մասնագետներ ունեցող ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը, որն այսօր իրականացնում է բազմաբնույթ ուսումնամեթոդական և գիտական գործունեություն, ապահովում է գործնական անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի, իսպաներենի, պորտուգալերենի և իտալերենի ուսուցում՝ որպես հիմնական և երկրորդ մասնագիտական լեզուներ, տեսական գիտելիքներ է հաղորդում բանասիրության տարբեր բնագավառներում, ծանոթացնում երկրագիտական և լեզվամշակութաբանական իրողություններին, սովորեցնում թարգմանչական գործ:

Ֆակուլտետի գիտական աշխատանքները զարգացնում են հետևյալ հիմնական ուղղություններով. ռճագիտության հիմնախնդիրներ, թարգմանությունը որպես բանասիրական քննության առարկա, բառագիտական խնդիրներ, դասավանդվող լեզուների ձևաբանության և շարահյուսության հարցեր, հնչյունաբա-

նության հանգուցային հարցեր, լեզվական փաստերի գործաբանական և հոգեբանական քննություն, ինչպես նաև՝ ռոմանագերմանական բանասիրության արդիական հարցեր:

Ֆակուլտետի անգլիական բանասիրության ամբիոնի և մասնավորապես ամբիոնի վարիչ, դոկտոր պրոֆեսոր Ս.Ք.Գասպարյանի ակտիվ ջանքերով հիմնադրվել է Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիան, որն Անգլերենի ուսումնասիրության եվրոպական ֆեդերացիայի անդամ է 2003թ. սեպտեմբերից: Ասոցիացիան կանոնավոր կերպով կազմակերպում է անգլերեն լեզվին, գրականությանը և մշակույթին վերաբերող գիտաժողովներ, սեմինարներ և այլ միջոցառումներ՝ նպաստելով ոչ միայն Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի դասախոսների և հետազոտողների մասնագիտական և գիտական համագործակցության ամրապնդմանը, փորձի փոխանակմանը, այլև տարբեր երկրների բուհերի և գիտական կազմակերպությունների հետ համագործակցությանը:

Ֆրանսիական բանասիրության ամբիոնը սպասարկում է ԵՊՀ-ի գրեթե բոլոր ֆակուլտետները՝ ապահովելով ֆրանսերենի ուսուցում ակադեմիական նպատակների համար, իսկ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում՝ որպես առաջին և երկրորդ մասնագիտություն: Ամբիոնը սերտորեն համագործակցում է Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքի Պոլ Վալերիի անվան համալսարանի հետ, որտեղ ամեն տարի վերապատրաստման կուրսեր են անցնում ինչպես ուսանողները, այնպես էլ դասախոսները: Առաջիկայում ֆրանսիական բանասիրության ամբիոնը նախատեսում է ֆրանսերեն բաժնի մագիստրատուրայում ներմուծել նոր մասնագիտացումներ՝ հաշվի առնելով եվրոպական կրթական համակարգում առկա մասնագետների ինտեգրման միտումները (ֆրանսերեն և եվրոպագիտություն, ֆրանսերեն և միջմշակութային հաղորդակցություն, ֆրանսերեն և լեզվաբանական ինժեներիա):

Ռոմանական բանասիրության ամբիոնում այսօր իրականացվում է ռոմանական երեք լեզուների՝ իսպաներենի, իտալերենի և պորտուգալերենի դասավանդում: Ընդ որում, իսպաներենը և իտալերենն ունեն առաջին մասնագիտական լեզվի կարգավիճակ, իսկ պորտուգալերենը դասավանդվում է մագիստրատուրայում որպես երկրորդ օտար լեզու:

«Իսպաներեն լեզու և գրականություն» մասնագիտությունը ուսանողներին հնարավորություն է տալիս խորությամբ տիրապետել աշխարհի ամենատարածված լեզուներից մեկին՝ իսպաներենին, ինչպես նաև բավարար չափով գիտելիքներ ստանալ իսպանախոս աշխարհի քաղաքակրթության վերաբերյալ: Իսպաներենի և հիմնական մասնագիտական դասընթացները իրականացվում են Ռոմանական բանասիրության ամբիոնի կողմից: Ամբիոնն ունի իսպաներենի կաբինետ, հարուստ գրադարան, տեսադարան և ապահովված է բոլոր անհրաժեշտ նյութերով, որոնք մատչելի են ուսանողությանը: Ամբիոնում մշտապես աշխատում է Իսպանիայից գործուղված դասախոս, որը դասավանդում է մի շարք առարկաներ, ինչպես նաև ապահովում է կապը Իսպանիայի բուհերի և այլ կազմակերպությունների հետ: Ջանազան ծրագրերի շրջանակներում ամեն տարի բազմաթիվ ուսանողներ և դասախոսներ վերապատրաստման դասընթացներ են անցնում Իսպանիայի տարբեր համալ-

սարաններում: Ամեն տարի՝ մայիս և նոյեմբեր ամիսներին, Ռոմանական բանասիրության ամբիոնում անցկացվում են իսպաներենի իմացության մակարդակը ստուգող քննություններ, որոնց արդյունքների հիման վրա տրվում են միջազգայնորեն ճանաչվող «Սերվանտես» մնուշի դիպլոմներ: Ամբիոնում իրականացվում են մի շարք գիտամշակութային ծրագրեր, որոնց մասնակցում են նաև ուսանողները: Նման ծրագրերից է ամենամյա ուսանողական թարգմանչական մրցույթը, որի արդյունքները ամփոփվում են առանձին ժողովածուներով՝ «Ծաղիկ թարգմանությանց» խորագրով: Այսպիսով, իրենց ուսումնառության ընթացքում ուսանողները հնարավորություն են ստանում գործնականում դրսևորել իրենց թարգմանչական ունակությունները և տպագրել իրենց թարգմանությունները:

Իսպաներենի և իսպանախոս երկրների քաղաքակրթության իմացությունը մեր շրջանավարտների առաջ բացում է լայն հնարավորություններ, առավել ևս, որ մագիստրատուրայում սովորողները ուսումնասիրում են նաև պորտուգալերեն, որը նույնպես աշխարհի ամենատարածված լեզուներից մեկն է: Հայաստանի Հանրապետությունում և աշխատանքի միջազգային շուկայում իսպաներենի դերն ու նշանակությունը շատ մեծ է: Եվ եթե նկատի ունենանք աշխարհում իսպաներենի տարածվածության գործոնը, նաև իսպանախոս երկրների հետ մեր Հանրապետության քաղաքական, տնտեսական և մշակութային հարաճուն կապերը, ապա պարզ կդառնա, որ «Իսպաներեն լեզու և գրականություն» մասնագիտությունը կշարունակի մնալ արդիական և պահանջված:

«Իտալերեն լեզու և գրականություն» մասնագիտությունը ուսանողներին հնարավորություն է տալիս մասնագիտական մակարդակով տիրապետել իտալերենին և ստացած գիտելիքները կիրառել գործնական աշխատանքում: Այսօր մեր շրջանավարտներն աշխատում են բոլոր բնագավառներում՝ բուհերում, պետական մարմիններում, դիվանագիտական ծառայություններում, Հայաստանում Իտալիայի Հանրապետության դեսպանատանը և իտալական կազմակերպություններում: Իտալերենի և հիմնական մասնագիտական դասընթացները իրականացվում են Ռոմանական բանասիրության ամբիոնի կողմից: Ամբիոնն ունի իտալերենի կաբինետ, հարուստ գրադարան, տեսադարան և ապահովված է բոլոր անհրաժեշտ նյութերով, որոնք մատչելի են ուսանողությանը: Ամբիոնում մշտապես աշխատում է Իտալիայից գործուղված դասախոս, որը դասավանդում է մի շարք առարկաներ, ինչպես նաև ապահովում է կապը Իտալիայի բուհերի և այլ կազմակերպությունների հետ: Ձանազան ծրագրերի շրջանակներում ամեն տարի բազմաթիվ ուսանողներ և դասախոսներ վերապատրաստման դասընթացներ են անցնում Իտալիայի տարբեր համալսարաններում: Ամեն տարի՝ մայիս և նոյեմբեր ամիսներին, Ռոմանական բանասիրության ամբիոնում անցկացվում են իտալերենի իմացության մակարդակը ստուգող քննություններ, որոնց արդյունքների հիման վրա տրվում են միջազգայնորեն ճանաչվող «Րանտես» մնուշի դիպլոմներ: Ամբիոնում իրականացվում են մի շարք գիտամշակութային ծրագրեր, որոնց մասնակցում են նաև ուսանողները: Նման ծրագրերից է ամենամյա ուսանողական թարգմանչական մրցույթը, որի արդյունքները ամփոփվում են առանձին ժողովածուներով՝ «Ծաղիկ թարգմանությանց» խորագրով: Այսպիսով, իրենց ուսումնառության ընթացքում ուսանողները հնարա-

վորություն են ստանում գործնականում դրսևորել իրենց թարգմանչական ունակությունները և տպագրել իրենց թարգմանությունները:

«Իտալերեն լեզու և գրականություն» մասնագիտությունն ընտրող ուսանողները ընդգրկվում են Իտալիայի դեսպանատան հետ համագործակցության ծրագրերում և հնարավորություն ունեն մասնակցելու դեսպանատանը պարբերաբար կազմակերպվող միջոցառումներին, այլև օգտվելու դեսպանատան հարուստ գրադարանից:

Ֆակուլտետում օտար լեզուների դասավանդումն իրականացվում է միմյանց լրացնող մի շարք մասնագիտական դասընթացների միջոցով. գործնական լեզվի դասավանդումը զուգորդվում է բազմաթիվ տեսական առարկաներով, որոնք հնարավորություն են տալիս լեզվական միջավայրի բացակայության պայմաններում պատրաստել բարձրակարգ մասնագետներ:

Ֆակուլտետը պարբերաբար հրավիրում է մասնագետներ Իսպանիայից, Իտալիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից և Բրազիլիայից, որոնք օգնում են ապահովելու օտար լեզուների դասավանդման բարձր մակարդակ:

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի նպատակն է պատրաստել որակյալ թարգմանիչներ հանրապետության տարբեր ոլորտներում աշխատելու համար:

Ամբիոնում լեզվի իմացության հիմքի վրա պատրաստվում են թարգմանիչներ հետևյալ ուղղություններով՝ գեղարվեստական, մասնագիտական, ինչպես նաև բանավոր թարգմանիչներ՝ հետևողական և համաժամանակյա ուղղություններով: Դասընթացները տեղի են ունենում տեխնիկապես հագեցած լսարաններում (համակարգիչներ, հեռուստացույցներ, DVD-ներ, ձայնագրիչներ, ինչպես նաև ինտերնետից օգտվելու հնարավորություն): Բակալավրիատի շրջանավարտները հնարավորություն ունեն իրենց ուսումը շարունակելու մագիստրատուրայում:

Ամբիոնը կատարում է գիտական աշխատանքներ՝ ուղղված թարգմանության տեսության և պրակտիկայի տարբեր ոլորտներին, ինչպես նաև ղեկավարում է ասպիրանտների և հայցորդների գիտական թեմաները:

Ամբիոնի ուսանողները իրենց արտադրական (թարգմանչական) պրակտիկական անց են կացնում մայրաքաղաքի տարբեր կազմակերպություններում, որտեղ թարգմանչի աշխատանքը կարևորվում է: Ամբիոնը պատրաստում է թարգմանիչներ երեք լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, զերմաներեն:

Ֆակուլտետի աշխատանքային գործունեության լուրջ ձեռքբերումներից է FLSP (Օտար լեզուն հատուկ նպատակների համար) ամենամյա միջազգային գիտական ամսագրի հիմնադրումը: Ամսագրում հրատարակվող հոդվածները լուսաբանում են օտար լեզուներով մասնագիտության ուսուցման միջազգային փորձն ու ձեռքբերումները, դասավանդման մեթոդիկան՝ ըստ սովորողների փոփոխվող կարիքների ու պահանջների: Հրատարակվում են նաև «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում», «Ռոմանական բանասիրության հանդես», «Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» ժողովածուն, «Համատեքստ» հոդվածների ժողովածուն և «Աստղիկ» թարգմանչաց հանդեսը:



Ֆակուլտետում լուրջ ուշադրություն է դարձվում արտասահմանյան գրականության (արևմտաեվրոպական և ամերիկյան) դասավանդման, ծրագրերի մշակման և արդիականացման խնդիրներին, որոնք իրականացվում են արտասահմանյան գրականության ամբիոնի կողմից:

Բակալավրիատում դասավանդվում է գրականության պատմության ողջ դասընթացը՝ անտիկ, միջնադարյան և Վերածննդի, 17-18-րդ, 19-20-րդ դարերի պատմությունը, իսկ մագիստրատուրայում ոչ միայն մատուցվում են ծրագրային գիտելիքները, այլև յուրացվում են նոր առարկաներ՝ կապված համաշխարհային գրականության պատմության, փիլիսոփայության և գեղագիտության արդիական պահանջների հետ:

Ֆակուլտետի ամբիոններն ապահովված են անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ, համապատասխան տեխնիկական միջոցներով, ֆիլմադարաններով, համակարգիչներով և ինքնուրույն աշխատանքի համար անհրաժեշտ այլ նյութերով:

Թե՛ բակալավրիատում և թե՛ մագիստրատուրայում բարձր առաջադիմություն ցուցաբերող ուսանողները հնարավորություն են ստանում կատարելագործելու իրենց լեզվական գիտելիքները Գերմանիայի, Ավստրիայի և Իտալիայի առաջատար համալսարաններում:

Ֆակուլտետի ուսանողները ակտիվորեն մասնակցում են ֆակուլտետային և համահամալսարանական միջազգային գիտաժողովներին ու սեմինարներին: Մի շարք ուսանողներ խորախուսվել են գերմանական և ավստրիական առանձին կազմակերպությունների կողմից, ստացել են տարբեր կարգի կրթաթոշակներ և անցել մասնակի ուսումնառություն այդ երկրներում: 2000թ-ից մինչ այժմ գերմանական ակադեմիական փոխանակման ծրագրի շրջանակներում տարեկան 15 ուսանողներ մասնակցում են Մանհայմի համալսարանի հետ համագործակցությանը: Մագիստրատուրայի բաժնի ուսանողներն իրենց նախադիպլոմային պրակտիկան անցկացնում են հիշյալ համալսարանի գերմանագիտության ինստիտուտում:

Ֆակուլտետում դասավանդում են բանասիրական գիտությունների 5 դոկտոր, 6 պրոֆեսոր, 40-ից ավելի թեկնածուներ, դոցենտներ: Այստեղ սովորում են շուրջ 2077 ուսանողներ: Շրջանավարտներից 13-ը կրթությունը շարունակում են ասպիրանտուրայում:

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է.

- անգլերեն լեզու և գրականություն
- ֆրանսերեն լեզու և գրականություն
- գերմաներեն լեզու և գրականություն
- իսպաներեն լեզու և գրականություն
- իտալերեն լեզու և գրականություն
- լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն՝ անգլերեն լեզու

- թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն լեզուներ
- թարգմանչական գործ՝ ֆրանսերեն և հայերեն լեզուներ
- թարգմանչական գործ՝ գերմաներեն և հայերեն լեզուներ

մասնագիտություններով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.

Մասնագիտություն	Գնահատում	2010թ.		2009թ.		2008թ.	
		Դիմորդների Թիվ	Տեղերի քանակ	Դիմորդների Թիվ	Տեղերի քանակ	Դիմորդների Թիվ	Տեղերի քանակ
		Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Անգլերեն լեզու և գրականություն	Անվճ	221	5	226	15	213	15
	Վճ	-	-	-	55	-	60
	ՍՏ	-	120	-	55	-	55
Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն լեզուներ	Անվճ	75	3	82	5	82	5
	Վճ	-	-	-	10	-	10
	ՍՏ	-	27	-	15	-	15
Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն՝ անգլերեն լեզու	Անվճ	100	3	70	5	74	5
	Վճ	-	-	-	5	-	5
	ՍՏ	-	22	-	15	-	5
Գերմաներեն լեզու և գրականություն	Անվճ	27	2	25	5	17	5
	Վճ	-	-	-	8	-	8
	ՍՏ	-	23	-	12	-	12
Թարգմանչական գործ՝ գերմաներեն և հայերեն լեզուներ	Անվճ	15	2	10	2	12	2
	Վճ	-	-	-	7	-	7
	ՍՏ	-	12	-	5	-	5
Ֆրանսերեն լեզու և գրականություն	Անվճ	23	2	30	5	29	5
	Վճ	-	-	-	8	-	8
	ՍՏ	-	23	-	12	-	12
Թարգմանչական գործ՝ ֆրանսերեն և հայերեն լեզուներ	Անվճ	17	2	10	2	8	2
	Վճ	-	-	-	7	-	7
	ՍՏ	-	12	-	5	-	5
Իսպաներեն լեզու և գրականություն	Անվճ	40	2	33	6	45	6
	Վճ	-	-	-	12	-	12
	ՍՏ	-	26	-	10	-	10
Իտալերեն լեզու և գրականություն	Անվճ	16	2	20	5	17	50
	Վճ	-	-	-	5	-	5
	ՍՏ	-	13	-	5	-	5

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.		
	Անվճ	Վճ(US )	Անվճ	Վճ	US	Անվճ	Վճ	US
Անգլերեն լեզու և գրականություն	52.75	38.75	53.8	47.1	35	55	50.3	46
Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն լեզուներ	50.5	38.25	52.8	49.8	38.3	54.5	51.8	47.3
Լեզվ. և միջմշ. հաղորդ՝ անգլերեն լեզու	50.75	43.25	52.8	51.3	37.8	55.3	52.5	48.3
Գերմաներեն լեզու և գրականություն	46	31.25	46.8	44.6	30.8	50.8	44.5	37.8
Թարգմանչական գործ՝ գերմաներեն և հայերեն լեզուներ	47.75	27	46.1	41.1	34	50	43.3	38.5
Ֆրանսերեն լեզու և գրականություն	50.75	28.5	51.3	47.8	35.3	54.5	49.3	33.3
Թարգմանչական գործ՝ ֆրանսերեն և հայերեն լեզուներ	54.5	27.5	53	44.3	36.1	54.3	48.5	46.8
Իսպաներեն լեզու և գրականություն	55.75	37	54.1	47.6	33.5	56	51	47.3
Իտալերեն լեզու և գրականություն	49	35.5	50.1	46.8	33.3	51	49.8	46

## ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Հայ ժողովուրդն աչքի է ընկել արևելագիտության բնագավառում իր բավական հարուստ փորձով՝ ձևավորելով այս ոլորտում գիտակրթական ավանդույթներ, ակադեմիական մոտեցումներ: Հատկանշական է այն հանգամանքը, որ Ռուսաստանում առաջին արևելագիտական օջախը՝ Արևելյան լեզուների Լագարյան ճեմարանը, հիմնադրել են հայերը (Մոսկվա, 1815): Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին, երբ ուշադրության կենտրոն մղվեց կրթական դաշտը, հընթացս զարգացում գտան նաև արևելագիտական ուղղությունները: Նորաստեղծ համալսարանի ֆակուլտետների թվում էր նաև արևելագիտությանը, որը շուտով վերափոխվեց Պատմաբանասիրական ֆակուլտետի:

Արդեն խորհրդահայ ժամանակաշրջանում՝ 1968թ., Հայ բանասիրության ֆակուլտետի Արևելագիտության բաժնի հիման վրա ձևավորվեց Արևելագիտության ֆակուլտետը, կազմվեցին նոր ծրագրեր, դրվեց առանձին արևելագիտության ճյուղի զարգացման նոր հեռանկարների հիմք:

Հայաստանի անկախության սկզբնական տարիներին և դրանից հետո արևելագիտությունն իր երեք ճյուղերով՝ արաբագիտություն, իրանագիտություն և թյուրքագիտություն, ձեռք բերեց նորացման, զանազան խնդիրների հաղթահարման տեսանկյունից ռազմավարական կարևորություն՝ ըստ նոր աշխարհաքաղաքական, միջազգային իրավիճակի: Այսօր արևելագիտությունը գիտական առաջատար ճյուղերից է, որի բարձր մակարդակն ապահովում են ոլորտի պատասխանատուները: Պրոֆեսիոնալ պատրաստվածությամբ օժտված մասնագետները մշտապես գտնվում են միջազգային համագործակցության, փորձի փոխանակման, տեղական և միջազգային նշանակության գիտաժողովների, արտասահմանյան գործուղումների շարժունակության մեջ, ինչն ապահովում է գիտության խնդրո առարկա ուղղության նորարարական մոտեցումները, գիտամանկավարժական արտադրողականության արդյունավետությունը: Նշենք, որ ֆակուլտետի շրջանավարտները պատրաստվածությամբ և մասնագիտական ունակություններով, աշխատելով ՀՀ տարբեր գերատեսչություններում, իրենց նպաստն են բերում միջազգային հարաբերությունների, քաղաքական համակարգի կայացման ու հաստատման գործում:

1993թ. ցայսօր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետը ղեկավարում է բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը, որն իր մարդկային կերպարով և գործունեությամբ մեծապես նպաստում է ուսանողության շրջանում ազգային-հայրենասիրական ոգու բարձրացմանը, խթանում ֆակուլտետում առողջ գիտակրթական գործընթացների ամրապնդումը:

Ֆակուլտետում առկա գիտահետազոտական աշխատանքներն ընդգրկում են լեզվաբանության, էթնիկ հանրությունների, պատմության ու քաղաքակրթության, կրոնների ու մշակույթի, արևելյան արվեստի, ազգագրության ծրագրային ուղղությունները, որոնք ներառված են վերոնշյալ երեք բաժիններում: Իրանում, Թուրքիայում և արաբական երկրներում ընթացող երևույթները, գործընթացներն

ու դրանց առնչվող խնդիրները մշտապես լուսաբանվում և քննարկվում են ֆակուլտետում: Կարևորվում են նաև տարածաշրջանային քաղաքական և տնտեսական հրատապ խնդիրներին նվիրված հետազոտությունները, որոնց արդյունքները բարձր են գնահատվում ինչպես հայաստանյան, այնպես էլ արտասահմանյան գիտաժողովներում, սեմինարներում, պարբերականներում:

Արևելագիտության ֆակուլտետում գործում են մի շարք մագիստրոսական ծրագրեր՝ իրանական բանասիրություն, պատմություն, իրանական էթնոլեզվական հանրույթներ, թուրքական բանասիրություն և պատմություն, օսմանագիտություն, արաբական և սեմական բանասիրություն, արաբամուսուլմանական մշակույթ, ինչպես նաև Մերձավոր Արևելքի տարածաշրջանի խնդիրներին վերաբերող ուսումնասիրություններ: Սույն ուսումնական ծրագրերն իրականացվում են մասնագիտական բարձր հմտությամբ, համապատասխանում են միջազգային չափանիշներին: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից հեղինակվում են բազմաթիվ դասագիրք-ծեռնարկներ Արևելքի մի շարք երկրների պատմության, գրականության, լեզվաբանության, կրոնագիտության վերաբերյալ: Ֆակուլտետում կազմակերպվում են նաև ուսանողների գործուղումներ, մասնագիտական որակավորման դասընթացներ, սեմինարներ, որոնք ներկայացնում են ոչ միայն հայ մասնագետները, այլ նաև արտասահմանից հրավիրված բարձրակարգ դասախոսները:

Գնալով առավել սերտանում են արևելագիտական ինստիտուտների և կառույցների կապն ու համագործակցությունը: Հատկանշական է այն կարևոր փաստը, որ միայն արևելագիտության ասպարեզում հրատարակվում են գիտական մի շարք տեղական և միջազգային հանդեսներ, որոնցում տպագրվում են ոչ միայն հայ, այլ նաև արտասահմանյան հեղինակների գիտական հոդվածները՝ այսպիսով միջազգային դաշտում ապահովելով Հայաստանում արևելագիտության դպրոցի բարձր վարկանիշը: Իրանագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գառնիկ Ասատրյանի խմբագրությամբ լույս են տեսնում «Iran and the Caucasus», «Իրան-Նամե», «Orientalia» հանդեսները, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի խմբագրությամբ և պրոֆեսորադասախոսական կազմի ջանքերով՝ «Արևելագիտության հարցեր» մատենաշարը:

Արևելագիտության ֆակուլտետում գործող երեք՝ արաբագիտություն, իրանագիտություն, թյուրքագիտություն ամբիոններում իրենց ուսումնառությունն են ստանում 670 ուսանողներ, որոնցից 564-ը՝ բակալավրիատում, 106-ը՝ մագիստրատուրայում: Ֆակուլտետում ընդհանուր առմամբ կան 40-ից ավելի ասպիրանտներ և հայցորդներ, որոնք մասնագիտանում են արևելագիտության տարբեր ոլորտներում: Ֆակուլտետում դասավանդում են բարձրակարգ դասախոսներ, այդ թվում՝ 5 դոկտոր պրոֆեսոր, 16 դոցենտ, 25 ասիստենտ:

Արևելագիտության ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է

- արաբագիտություն
- իրանագիտություն
- թյուրքագիտություն

մասնագիտություններով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին Արևելագիտության ֆակուլտետում դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.

Մասնագիտություն	Հանդիսություն	2010թ.		2009թ.		2008թ.	
		Դիմորդների թիվը	Միություն վաճառք	Դիմորդների թիվը	Միություն վաճառք	Դիմորդների թիվը	Միություն վաճառք
Արաբագիտություն	Անվճ	109	6	97	10	54	10
	Վճ	-	-	-	20	-	20
	ԱՏ	-	30	-	5	-	5
Իրանագիտություն	Անվճ	66	5	64	10	41	10
	Վճ	-	-	-	20	-	20
	ԱՏ	-	30	-	5	-	5
Թյուրքագիտություն	Անվճ	94	6	60	5	49	5
	Վճ	-	-	-	20	-	20
	ԱՏ	-	26	-	5	-	5

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.		
	Անվճ	Վճ(ԱՏ )	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ	ԱՏ
Արաբագիտություն	54.25	44.75	53.6	50.6	46.8	51	48.8	45
Իրանագիտություն	50.5	42.75	50.8	49.3	45.6	49.8	46	44
Թյուրքագիտություն	51	44	53.3	50.6	45.5	52	47.3	44.5

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒՆԵՏ

Հայաստանի Հանրապետությունը, հռչակվելով ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն, 1995թ. ընդունված և 2005թ. բարեփոխված Սահմանադրությամբ նոր թափ հաղորդեց մեր հասարակության կյանքին՝ բոլոր բնագավառներում տեղի ունեցող արմատական բարեփոխումներին: Դրանց արդյունավետությունը մեծամասամբ պայմանավորված է իրավական ոլորտում իրականացվող վերափոխումների հաջող ընթացքով, ինչը ենթադրում է ժամանակակից չափանիշներին համապատասխանող որակյալ իրավաբան կադրերի պատրաստում: Այսօր մեր հասարակության մեջ նկատվում է իրավաբանի մասնագիտության նշանակության լուրջ վերագնահատում. այն ներկայումս ամենամեծ պահանջարկ ունեցող մասնագիտություններից մեկն է: Եվ դա պատահական չէ. իրավաբանի մասնագիտական գործունեությունն առնչվում է մեր կյանքի գրեթե բոլոր ոլորտների հետ և առաջին հերթին ուղղված է մեր իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանը: Հասկանալի է, որ նման բարդ խնդրի լուծումը հնարավոր է միայն ու միայն որակյալ իրավաբանների գործունեությամբ:

Այս խնդրի լուծման գործում չափազանց կարևոր է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դերը, որը լայն պրոֆիլի իրավաբաններ պատրաստող միակ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունն է ՀՀ-ում: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը Մայր բուհի հնագույն և կրթական ու գիտական ավանդույթներով հարուստ ֆակուլտետներից է, որն ունի ավելի քան 75 տարիների պատմություն:

Հայաստանում իրավաբանական բարձրագույն կրթությամբ կադրեր ունենալու անհրաժեշտությունը զգացվել է դեռևս առաջին Հանրապետության տարիներին, երբ խնդիր դրվեց ստեղծել հայկական համալսարան:

Հայաստանի Հանրապետության Նախարարների Խորհրդի 1919թ. մայիսի 16-ի օրենքով Ալեքսանդրապոլում ստեղծվեց համալսարան՝ չորս ֆակուլտետներով, այդ թվում և տնտեսաիրավաբանականը:

Ի դեպ, համալսարանի հանդիսավոր բացումից հետո առաջին դասախոսությունը կարդաց Մեսրոպ Եպիսկոպոսը՝ «Հայ իրավունքի նշանակությունը Հայաստանի կուլտուրական գործերում» թեմայով:

Հանրապետության Նախարարների Խորհրդի 1920թ. հունիսի 21-ի որոշմամբ համալսարանում բացվում է առանձին Իրավաբանական ֆակուլտետ: Այդ ժամանակ նորաբաց Իրավաբանական ֆակուլտետում աշխատանքի են հրավիրվում արտերկրում ճանաչված մի շարք հայ իրավաբան գիտնականներ:

Սակայն 1920թ. վերջին, երկրում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, զգալի փոփոխություններ է կրում նաև համալսարանական կրթության համակարգը. համալսարանի բոլոր ֆակուլտետները փակվում են, և դրանց փոխա-

րեն բացվում է երկու բաժանմունք՝ բնագիտական և հասարակագիտական:

1921թ. հունվարի 23-ին Երևանում տեղի ունեցավ համալսարանի հանդիսավոր բացումը: Այդ օրը Իրավունքի բաժանմունքի դասախոս Գր.Չուբարյանը Երևանում կարդաց համալսարանի առաջին հրապարակային դասախոսությունը՝ «Խորհրդային իրավունքը և Հայաստանի ժողովրդական համալսարանը» թեմայով:

Եվ միայն 1933-1934 ուսումնական տարում է ձևավորվել Երևանի պետական համալսարանի Խորհրդային շինարարության ֆակուլտետը, որը 1935թ-ից անվանվել է Իրավաբանական ֆակուլտետ: Ֆակուլտետի առաջին ղեկան է նշանակվել Կոստանդնուպոլսի համալսարանի Իրավաբանական ֆակուլտետի շրջանավարտ, Երևանի համալսարանում արդեն ճանաչում ունեցող դասախոս, Տնտեսական իրավունքի ամբիոնի վարիչ Հրանտ Ավետիսի Գալիկյանը: 2007թ. ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը վերանվանվեց Իրավագիտության ֆակուլտետ:

Այսօր մեր հանրապետությունում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետն իրավամբ համարվում է իրավաբանական կրթության առաջատարը և իրավաբան կադրերի հիմնական դարբնոցը: Անցած տարիների ընթացքում ֆակուլտետը տվել է 13000-ից ավելի շրջանավարտ, որոնք համալրել և շարունակում են համալրել ՀՀ պետական կառավարման, իրավապահ և դատական մարմինների համակարգը:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում, ինչպես և ամբողջ համալսարանում, ուսումն իրականացվում է եռաստիճան կրթական համակարգով. բակալավրիատ, որտեղ սովորում է 635 ուսանող, մագիստրատուրա, որտեղ սովորում է 136 ուսանող և ասպիրանտուրա, որտեղ ուսումը շարունակում է 29 ասպիրանտ:

Բարձրագույն կրթություն ունեցող անձանց համար ֆակուլտետում կատարվում է ընդունելություն առանց արտադրությունից կտրվելու (5 տարի ժամկետով)՝ 2-րդ մասնագիտություն ստանալու նպատակով, որտեղ սովորում է 155 ուսանող, իսկ 2007թ. ֆակուլտետում իրականացվում է հեռակա ուսուցում, որտեղ ներկայումս ուսում է ստանում 184 ուսանող: 2010 թ. ֆակուլտետում երկու մագիստրոսական ծրագրերով կազմակերպվում է հեռակա ուսուցում՝ քրեական իրավունք և դատավարություն ու քաղաքացիական իրավունք և դատավարություն՝ 47 ուսանողներով:

Ուսումնական գործընթացը կազմակերպվում է ֆակուլտետի ղեկանատը և 7 ամբիոնները՝ Պետության և իրավունքի տեսության ու պատմության, Սահմանադրական իրավունքի, Քաղաքացիական իրավունքի, Քաղաքացիական դատավարության, Քրեական իրավունքի, Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի, Եվրոպական ու միջազգային իրավունքի, որտեղ դասավանդում են ՀՀ - ԳԱԱ 1 թղթակից անդամ, գիտությունների 10 դոկտոր և 50 թեկնածու:

Դրա հետ մեկտեղ, իրավաբանների ուսուցումն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով, ֆակուլտետում ստեղծվել են կրիմինալիստիկական լաբորատորիա և ֆոտոկաբինետ, ուսումնական դատական նիստերի դահ-



լիճ, ինչպես նաև իրավաբանական կլինիկա (ուսանողական իրավախորհրդատվական ծառայություն): Նման լսարանների առկայությունը հնարավորություն է տալիս գործնականում կիրառել ստացված տեսական գիտելիքները: Ֆակուլտետում գործում են նաև մի շարք գիտական կենտրոններ՝ Եվրոպական իրավունքի և ինտեգրման, Քրեաիրավական և կրիմինոլոգիական հետազոտությունների, Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական ու Կրիմինալիստիկայի և դատական փորձաքննությունների պրոբլեմների հետազոտման գիտագործնական կենտրոնները:

Լիարժեք իրավաբանական կրթության կազմակերպման նպատակով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում ներկայումս կիրառվում են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ: Ֆակուլտետում գործում է համակարգչային կենտրոն-էլեկտրոնային գրադարանը՝ հազեցված 20 համակարգիչներով: Պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողներին հնարավորություն է տրվում օգտվել այդ համակարգիչներում տեղադրված ԻՐՏԵԿ իրավաբանական տեղեկատվական համակարգից ու էլեկտրոնային բառարաններից, ինչպես նաև համաշխարհային համակարգչային ցանցից (Internet), տարբեր (այդ թվում նաև վճարովի) իրավաբանական տեղեկատվական համակարգերից, որոնք մատչելի են դարձնում իրավունքի բոլոր ճյուղերի գրեթե բոլոր ինստիտուտների վերաբերյալ նորագույն իրավական հետազոտությունները: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում գործում է [www.law.yzu.am](http://www.law.yzu.am) ինտերնետային էջը, որտեղ զետեղված է մանրամասն տեղեկատվություն ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսումնական ծրագրերի, դասավանդվող առարկաների, ընթերցասրահում առկա մասնագիտական գրականության և իրավական որոնողական համակարգերի մասին:

Ֆակուլտետի նյութատեխնիկական բազայի բաղկացուցիչ մասն է կազմում նաև փոքր տպարանը, որտեղ հրատարակվում են մասնագիտական ուսումնական ձեռնարկներ, դասախոսության տեքստեր, ուսումնաօժանդակ այլ նյութեր:

Իրավագիտության ֆակուլտետի դասախոսներն ակտիվ մասնակցել և մասնակցում են հանրապետությունում ընթացող սահմանադրական և դատաիրավական բարեփոխումների իրականացմանը:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը, որպես ուսումնական հաստատություն և գիտական կենտրոն, արդյունավետ համագործակցում է ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան գիտահետազոտական հիմնարկների հետ, որոնց թվում են՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը, Սահմանադրական իրավունքի կենտրոնը, ՀՀ Գլխավոր դատախազության գիտաուսումնական կենտրոնը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության, Արևմտյան Եվրոպայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների մի շարք առաջատար իրավաբանական դպրոցներ, որոնք նաև խոշոր գիտական կենտրոններ են:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը մասնագիտական օժանդակություն է ցուցաբերել միջնակարգ դպրոցի բարձր

դասարանների «Իրավունք» առարկայաչարի (Մարդու իրավունքներ, Քաղաքացիական կրթություն, Պետություն և իրավունք) ներմուծման ծրագրի իրագործմանը:

Իրավագիտության ֆակուլտետն աչքի է ընկնում ակտիվ ուսանողական կյանքով: Ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության ջանքերով կազմակերպվում են ինչպես բազմաթիվ գիտական (գիտաժողովներ, թեմատիկ քննարկումներ, հանդիպումներ տարբեր պետական կառույցների ղեկավարների հետ, մասնակցություն մասնագիտական մրցույթների և այլն), այնպես էլ մշակութային միջոցառումներ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում նաև շրջանավարտների զբաղվածության հարցերը լուծելու ուղղությամբ: Ամերիկյան իրավաբանների ընկերակցության գործուն աջակցությամբ ստեղծված Կարիերայի կենտրոնը, հետևելով ամերիկյան իրավաբանական դպրոցների փորձին, ապահովում է ուսանող – շրջանավարտ – գործատու մշտական կապը և օժանդակում ֆակուլտետի շրջանավարտներին իրենց ունակություններին ու որակներին համապատասխան աշխատանք գտնելու հարցում: Կենտրոնի առաջնային խնդիրներից են ուսանողներին և շրջանավարտներին աշխատաշուկայի, դրանում առկա պահանջարկի վերաբերյալ տեղեկատվությամբ ապահովելը և նրանց՝ աշխատանքի ընդունվելուն աջակցելը (անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստման, գրագրության, հարցազրույցի և այլ հմտություններ):

Ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է

- իրավագիտություն մասնագիտությամբ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին Իրավագիտության ֆակուլտետում դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.

Մասնագիտություն	Զանգված	2010թ.		2009թ.		2008թ.	
		Դիմորդների թիվ	Սեղանի թվեր	Դիմորդների թիվ	Սեղանի թվեր	Դիմորդների թիվ	Սեղանի թվեր
Իրավագիտություն	Անվճ	417	0	445	20	272	20
	Վճ	-	-	-	90	-	90
	ԱՏ	-	110	-	-	-	-

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.		
	Անվճ	Վճ(ԱՏ)	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ	ԱՏ
Իրավագիտություն	-	51.5	59.1	53.4	-	54.3	52.5	-



## ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒՆՏԵՏ

Աստվածաբանության ֆակուլտետը ԵՊՀ-ի ամենաերիտասարդ ֆակուլտետներից է, որը հիմնադրվել է 1995-96 ուստարում՝ ՀՀ ԳԱԱ և ԵՊՀ պատվավոր դոկտոր, պրոֆեսոր երջանակահիշատակ Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի ղեկավարությամբ ու մեկնաստությամբ:

Ֆակուլտետում ունի երեք ամբիոն՝ աստվածաբանության, կրոնի պատմության և տեսության, Հայ Եկեղեցու պատմության և եկեղեցաբանության:

Այս ամբիոններում ուսանողները մասնագիտանում են վարդապետական, տեսական ու կիրառական աստվածաբանություն (հայ աստվածաբանական մատենագրություն, հայրաբանություն, կանոնագիտություն ու տոմարագիտություն, տոնագիտություն, ծիսագիտություն), եկեղեցաբանություն, կրոնագիտություն և Հայ Եկեղեցու պատմություն առարկաներով: Խորապես են ուսուցանվում, ինչպես ժամանակակից հայերեն ու օտար լեզուներ՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, նաև հին լեզուներ՝ գրաբար և հին հունարեն: Ուսանողներին հնարավորություն է տրվում սովորելու մի քանի օտար լեզու:

Աստվածաբանության ֆակուլտետում է գործում հանրապետության բուհերում եզակի աստվածաբանության կաբինետ-գրադարանը՝ 2 սրահով և հայերեն ու օտարալեզու հարուստ գրականությամբ: Ֆակուլտետի առաջին դեկանի անունը կրող կաբինետ-գրադարանը ձևավորվել է Շահե արք. Աճեմյանի անձնական գրադարանի հիման վրա, ապա տարեցտարի համալրվել Անգլիայից, ԱՄՆ-ից, Գերմանիայից, Հունաստանից, Լիբանանից, Ֆրանսիայից, ինչպես նաև անհատներից ստացած նվիրատվություններով:

Աստվածաբանության ֆակուլտետի հիմնադիր դեկան Շահե արք. Աճեմյանի նախաձեռնությամբ ստեղծվեց «Աճեմյան մատենաշարը», որով հրատարակվել են 6 գիտական աշխատություններ: Դրանցից հատկապես հիշատակելի են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ.Մ. Բարթիկյանի «Հայ-բյուզանդական հարաբերությունները» ուսումնասիրությունները՝ 2 հատորով, Պ.Հովհաննիսյանի աշխատասիրությամբ Ն.Ադոնցի «Պատկերների խնդիրը», Ռ.Ղազարյանի, Հ.Ավետիսյանի, Խ.-Պալյանի աշխատասիրությամբ՝ «Դասական գրաբարի հատընտիրը» և այլն:

Ֆակուլտետում դասավանդում են ՀՀ ԳԱԱ 1 թղթակից անդամ, գիտությունների 3 դոկտոր պրոֆեսոր, 14 թեկնածու:

Ֆակուլտետում ունի բարձր որակավորում ունեցող դասախոսներ, որոնք ոչ միայն Հայաստանում, այլև ողջ աշխարհում բարձր են պահում ոչ միայն հայագիտության, այլև բյուզանդագիտության, պատմագիտության, արվեստաբանության և հարակից այլ գիտությունների վարկը: Նրանց հիմնարար աշխատություններն ու գիտական հոդվածները իբրև դասագիրք են ծառայում մեր ուսանողների և աստվածաբանությամբ զբաղվողների համար:

Ֆակուլտետը նոր եռանդով սկսեց գործել Անուշավան Եպս. Ժամկոչյանի գլխավորությամբ. ոչ միայն շարունակվեցին լավ ձեռքբերումները, այլև արձանագրվեցին նորերը: Հատկապես հիշատակելի են 2 նոր հրատարակությունները՝ «Տարեգիրք» և «Հայ աստվածաբան» գիտական հոդվածների ժողովածուները, որոնք նախատեսված են ինչպես մասնագետների և ուսանողների, նաև ընթեր-

ցող լայն շրջանների համար:

Շահե արք. Աճեմյանի միջոցներով (հետմահու) ստեղծվել է «Շահե Արք. Աճեմյան հիմնադրամ», որի շնորհիվ վերականգնվել է նաև ֆակուլտետի «Աճեմյան մատենաշարը»:

Աստվածաբանության ֆակուլտետի ողջ աշխատակազմը զգալի ջանքեր է ներդնում ֆակուլտետի ուսանողության ուսումնադաստիարակչական աշխատանքը լավագույնս կազմակերպելու համար. այդ նպատակին են ծառայում նաև հայրենագիտական պրակտիկան և գիտարշավները դեպի Հայաստանի տարբեր պատմամշակութային բազմաթիվ հուշարձաններ:

Ֆակուլտետի կարևոր ձեռքբերումներից է միջազգային կապերը աշխարհի տարբեր երկրների համանման ուսումնական հաստատությունների հետ, որոնց աշխարհագրությունը գնալով ընդլայնվում է՝ Անգլիա, Դանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հոլանդիա, Շվեյցարիա, Սիրիա, Լիբանան: Սովորական երևույթ է նաև աշխարհահռչակ աստվածաբանների դասավանդումը ֆակուլտետում: Կան միջբուհական սերտ հարաբերություններ տարբեր գիտահետազոտական ինստիտուտների՝ Երևանի Մատենադարանի և ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ:

Պարբերական են հանդիպումները Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ, մասնակցությունը տարբեր ծիսական արարողություններին, ինչպես նաև Թարգմանչաց տոմին 1-ին կուրսեցիների երդման արարողությունը Օշականում՝ Մեսրոպ Մաշտոցի շիրմի առջև և երեխաների մասսայական մկրտության արարողությանը Գեղարդում:

Աստվածաբանության ֆակուլտետն այսօր ունի 233 ուսանող, որից 199-ը սովորում են բակալավրիատում, իսկ 34-ը՝ մագիստրատուրայում: Շրջանավարտներից 7-ը ուսումը շարունակում է ասպիրանտուրայում, իսկ հեռակա ուսուցմամբ սովորում է 50 ուսանող:

Ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է

- աստվածաբանություն մասնագիտությամբ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին Աստվածաբանության ֆակուլտետում դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.

Մասնագիտություն	Նստավայրեր	2010թ.		2009թ.		2008թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի միություն	Դիմորդների թիվը	Տեղերի միություն	Դիմորդների թիվը	Տեղերի միություն
Աստվածաբանություն	Անվճ	23	5	16	6	53	6
	Վճ	-	-	-	30	-	30
	ԱՏ	-	53	-	20	-	25

Այդ տարիներին անցողիկ միավորները եղել են.

Մասնագիտություն	2010թ.		2009թ.			2008թ.		
	Անվճ	Վճ(ԱՏ)	Անվճ	Վճ	ԱՏ	Անվճ	Վճ	ԱՏ

Աստվածաբանություն	33	35.5	44.1	46.4	41.1	47	44.8	40
-------------------	----	------	------	------	------	----	------	----

### ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԳՅՈՒՂ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հիմնադրվել է 1994 թվականին: Մասնաճյուղը պատրաստում է Երևանի պետական համալսարանի կրթական ծրագրերին համապատասխան բակալավրի կրթությամբ մասնագետներ: Մասնաճյուղն այսօր ունի չորս՝ Բնական գիտությունների, Հումանիտար գիտությունների, Տնտեսագիտության և Կիրառական արվեստի ֆակուլտետներ, որտեղ գործում են 13 ամբիոններ, գիտաուսումնական լաբորատորիաներ և դեկորատիվ կիրառական արվեստի արվեստանոցներ, համակարգչային սրահներ ինտերնետ կապով: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ներկայումս սովորում են 1554 ուսանող, որից 404-ը անվճար և 1150-ը վճարովի հիմունքներով: Մասնաճյուղը պատրաստում է մասնագետներ՝ կիրառական մաթեմատիկայի և ֆիզիկայի, հայոց լեզվի և գրականության, պատմության, մանկավարժության և հոգեբանության, տնտեսագիտության, սերվիսի, ինչպես նաև կիրառական զարդարվեստի ու ժողովրդական արհեստների գծով:

«Տնտեսագիտություն» և «Սերվիս» մասնագիտությունների շրջանավարտներից շատերը մրցությամբ կարգով ապահովվել են աշխատանքով, ինչը զգալիորեն ավելացնում է դիմորդների քանակը նախորդ տարիների համեմատությամբ և ընդունելության մրցակցությունը:

Բնական և Հումանիտար գիտությունների, Կիրառական արվեստի ֆակուլտետների շրջանավարտները ստանալով մանկավարժի որակավորում, ապահովում են հանրակրթական դպրոցների մասնագետ ուսուցիչների պահանջները:

Կիրառական արվեստի ֆակուլտետի լավագույն շրջանավարտները հաջողությամբ իրականացնում են նաև ազգային մշակութային ավանդույթների, արժեքների պահպանման, զարգացման և հետագա սերունդներին փոխանցման մեծ առաքելությունը:

Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի զգալի մասը Երևանի պետական համալսարանի մասնագետներն են:

2006 թ-ից Իջևանի մասնաճյուղում կազմակերպվել է հեռակա ուսուցման ընդունելություն: Ուսուցումը կատարվում է բակալավրի ծրագրով 5 տարի տևողությամբ: Հեռակա ուսուցման համակարգում սովորում են 830 ուսանող:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը համագործակցում է մեր հանրապետության բազմաթիվ հաստատությունների, ինչպես նաև արտասահմանյան՝ մասնավորապես Ֆրանսիայի Վալանս քաղաքի մի քանի կրթօջախների հետ:

Ընդունելությունը մասնաճյուղում կատարվում է

- Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա
- Բնապահպանություն և բնօգտագործում
- Պատմություն
- Մանկավարժություն և հոգեբանություն
- Հայոց լեզու և գրականություն
- Անգլերեն լեզու և գրականություն

- Ֆրանսերեն լեզու և գրականություն
- Կիրառական արվեստ
- Տնտեսագիտության տեսություն
- Սերվիս

մասնագիտություններով:

Վերջին երեք տարիներին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ընդունելության արդյունքները բերված են աղյուսակում.

Մասնագիտությունը	Համախառն	2010թ.			2009թ.			2008թ.		
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Անցողիկ միավոր	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Անցողիկ միավոր	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Անցողիկ միավոր
Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	Անվճ	25	6	22.25	39	12	20.3	27	13	24
	Վճ	-	30	16.75	-	14	16.8	-	15	17.3
	ԱՏ	-	-	-	-	10	-	-	12	-
Բնապահպանություն և բնօգտագործում	Անվճ	24	4	24.75	30	6	22.3	31	5	21.5
	Վճ	-	28	18.5	-	13	16	-	13	18.5
	ԱՏ	-	-	-	-	11	-	-	12	16
Պատմություն	Անվճ	54	7	44.75	53	13	39.1	57	15	37.8
	Վճ	-	43	27.5	-	21	31.3	-	22	29.3
	ԱՏ	-	-	-	-	15	24.8	-	16	24.8
Հայոց լեզու և գրականություն	Անվճ	31	6	40.75	32	10	30.3	35	10	39.8
	Վճ	-	28	27	-	10	27	-	10	32.3
	ԱՏ	-	-	-	-	12	25	-	12	26.5
Անգլերեն լեզու և գրականություն	Անվճ	30	2	51	33	4	41.5	19	3	48.5
	Վճ	-	12	27.75	-	-	-	-	-	-
	ԱՏ	-	-	-	-	10	28.8	-	10	32
Ֆրանսերեն լեզու և գրականություն	Անվճ	14	2	45.75	17	4	49.3	20	3	56
	Վճ	-	15	27.75	-	-	-	-	-	-
	ԱՏ	-	-	-	-	13	33.6	-	10	34
Մանկավարժություն և հոգեբանություն	Անվճ	34	5	41.5	43	10	32.3	38	10	38.3
	Վճ	-	35	28	-	17	25.8	-	17	32
	ԱՏ	-	-	-	-	13	-	-	13	27.3
Կիրառական արվեստ	Անվճ	37	5	47	39	10	37	42	10	33
	Վճ	-	34	26	-	15	26	-	13	26
	ԱՏ	-	-	-	-	14	24	-	13	24
Տնտեսագիտության տեսություն	Անվճ	63	4	47.5	47	12	42.6	47	12	45.8
	Վճ	-	36	26.75	-	20	35.6	-	20	37.3
	ԱՏ	-	-	-	-	12	29.3	-	12	27.8
Սերվիս	Անվճ	27	4	41.75	34	9	40.3	27	9	39
	Վճ	-	29	25.75	-	13	25.8	-	13	32





## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

2007 թվականից Երևանի պետական համալսարանում գործում է բակալավրի ծրագրով հեռակա ուսուցման ընդունելություն: Հեռակա ուսուցումը կազմակերպվում է վճարովի հիմունքներով: Բակալավրի ծրագրով հեռակա ուսուցման տևողությունը հինգ տարի է, յուրաքանչյուրը՝ երկու կիսամյակ: Կիսամյակի տևողությունը սահմանված է 16 շաբաթ, որից 4-ը՝ քննաշրջանի անցկացման համար: Առաջին կիսամյակը սկսվում է նոյեմբերի 1-ին, երկրորդը՝ մարտի 15-ին: Այժմ հեռակա ուսուցմամբ սովորում է 3181 ուսանող:

Հեռակա ուսուցման համակարգի առկայությունը ԵՊՀ-ում հնարավորություն կընձեռի աշխատանք ունեցող բազմաթիվ մարդկանց, ովքեր չունեն համապատասխան մասնագիտական կրթություն, չկտրվելով աշխատանքից, իրենց ուսումը ստանալ Երևանի պետական համալսարանում:

Հեռակա ուսուցման լսարանային պարամյունքների նվազագույն ժամաքանակը սահմանված է առկա ուսուցման ուսումնական պլանով նախատեսված լսարանային ժամաքանակի 30%-ի չափով, պահպանելով ուսումնական պլանի կառուցվածքը: Ուսանողների լսարանային նվազագույն շաբաթական բեռնվածությունը սահմանված է 10 ժամ (լեզվական մասնագիտությունների գծով՝ 12 -14 ժամ): 1-9-րդ կիսամյակների ընթացքում լսարանային դասընթացները կկազմակերպվեն.

- ա) 3 շաբաթ՝ օրական 8 ժամ բեռնվածությամբ կամ շաբաթական 10 ժամ՝ ամբողջ կիսամյակի ընթացքում,
- բ) լեզվական մասնագիտությունների համար՝ շաբաթական 12-14 ժամ՝ ամբողջ կիսամյակի ընթացքում:

10-րդ կիսամյակում նախատեսվում է ավարտական աշխատանք, պրակտիկաներ և պետական քննություն:

Դասընթացների ավարտից հետո, մինչև քննաշրջանի սկիզբը, բոլոր մասնագիտությունների գծով կազմակերպվում են առնվազն երեքից-չորս խորհրդատվություն, որոնց ընթացքում քննարկվում են ինքնուրույն աշխատանքների հետ կապված հարցերը:

Մաթեմատիկա, ֆիզիկա, կենսաբանություն, աշխարհագրություն, պատմություն, հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու և գրականություն, անգլերեն լեզու և գրականություն, իսպաներեն լեզու և գրականություն մասնագիտություններով դիմած դիմորդները Երևանի պետական համալսարանի հեռակա ուսուցումը ավարտելուց հետո կստանան նաև մանկավարժի որակավորում:

Հեռակա ուսուցման գործերի ընդունումը կատարվում է օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, իսկ քննությունները կազմակերպվում են հոկտեմբեր ամսին: Առկա ուսուցման համար քննություններ հանձնած այն դիմորդները, ովքեր կստանան դրական միավորներ, բայց մրցույթից դուրս կմնան, հեռակա ուսուցման համար դիմելու ժամանակ, պահպանելով ստացած դրական միավորները կամ հանձնելով տվյալ մասնագիտության համար նախատեսված քննությունները (ապահովելով դրական միավորը), կարող են մասնակցել մրցույթին՝ առավել բարձր միավորների հաշվառմամբ:

Կարևորելով հեռակա ուսուցման ձևի անհրաժեշտությունը՝ ԵՊՀ գիտ-  
խորհրդի որոշմամբ 2011թ. ընդունելությունը կկազմակերպվի հետևյալ մասնա-  
գիտություններով.

**Ց Ա Ն Կ**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՎԼՍԱՐԱՆԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՍԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Ծածկա- գիրը	Մասնագիտություն	Ընդունելության քննություններ			
		Մրցութային			Ոչ մրցու- թային
1	2	3	4	5	6
010100	Մաթեմատիկա	Մ(զ)	Ֆ(զ)		Հլ(զ)*
011000	Ակտուար մաթեմատիկա	Մ(զ)	Հլ(զ)	Օտլ(զ)	
010400	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Մ(զ)	Ֆ(զ)		Հլ(զ)*
010600	Ֆիզիկա	Ֆ(զ)	Մ(զ)		Հլ(զ)*
011200	Ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա	Ֆ(զ)	Մ(զ)		Հլ(զ)*
020900	Էկոլոգիական քիմիա	Ք(զ)	Կ(զ) կամ Ֆ(զ)		Հլ(զ)*
021000	Դեղագործական քիմիա	Ք(զ)	Կ(զ) կամ Ֆ(զ)		Հլ(զ)*
020200	Կենսաբանություն	Կ(զ)	Ք(զ) կամ Ֆ(զ)		Հլ(զ)*
020400	Աշխարհագրություն	Ա(զ)	Մ(զ)		Հլ(զ)*
020300	Երկրաբանություն	Մ(զ)	Ֆ(զ)**		Հլ(զ)*
020500	Քարտեզագրություն և կադաստրային գործ	Ա(զ)	Մ(զ)		Հլ(զ)*
100100	Սերվիս	Ա(զ) կամ ՀԺՊ(զ)	Հլ(զ)	Օտլ(զ)	
030400	Պատմություն	ՀԺՊ(զ)	ԸՊ(զ) կամ Օտլ(զ)	Հլ(զ)	
031500	Արվեստաբանություն	ՀԺՊ(զ)	Հլ(զ)	Օտլ(զ)	
031400	Մշակութաբանություն	ՀԺՊ(զ)	Հլ(զ)	Օտլ(զ)	
030700	Միջազգային հարաբերություններ	ՀԺՊ(զ)	Հլ(զ)	Օտլ(զ)	
030200	Քաղաքագիտություն	ՀԺՊ(զ)	Հլ(զ)	Օտլ(զ)	
032000	Հանրային կառավարում	ՀԺՊ(զ)	Հլ(զ)	Օտլ(զ)	
080100	Տնտեսագիտության տեսություն	Մ(զ)	Հլ(զ)	Օտլ(զ)	
081800	Կառավարում	Մ(զ)	Հլ(զ)	Օտլ(զ)	
030300	Հոգեբանություն	Կ(զ)	Հլ(զ)	Օտլ(զ) կամ Ռլ(զ)	
040100	Սոցիալական աշխատանք	Մ(զ)	Հլ(զ)	Օտլ(զ)	
031000	Հայոց լեզու և գրականություն	Հլ(զ)	Հլ(զ)	ՀԺՊ(զ) կամ Օտլ(զ)	
030600	Լրագրություն	Հլ(զ)	ՍԱ(զ)	ԲՀՄ(բ)	
032400	Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(զ)	Ռլ(զ)	Հլ(զ)	
031300	Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(բ)	Անգլ(զ)	Հլ(զ)	
031300	Իսպաներեն լեզու և գրականություն	Օտլ(բ) կամ ԻՍ(բ)	Օտլ(զ) կամ ԻՍ(զ)	Հլ(զ)	
030500	Իրավագիտություն	Հլ(զ)	ՀԺՊ(զ)	Օտլ(զ)	
031900	Աստվածաբանություն	ՀԺՊ(զ)	Հլ(զ)	Օտլ(զ)	

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Երևանի պետական համալսարանի նախապատրաստական դասընթացների գործունեության հիմնական նպատակը ՀՀ հանրակրթական հաստատությունների (դպրոցներ, քոլեջներ, վարժարաններ, նախնական մասնագիտական հաստատություններ) ավարտական դասարանների աշակերտների և սովորողների՝ բուհ ընդունվելուն նախապատրաստումն է:

ԵՊՀ նախապատրաստական դասընթացները կազմակերպում և համակարգում է Մինչհամալսարանական կրթության վարչության նախապատրաստական դասընթացների բաժինը:

Աշակերտները և սովորողները, որպես նախապատրաստական դասընթացների ունկնդիր ձևակերպվելու համար, ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

- դիմում ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի անունով,
- անձնագիր (ծննդյան վկայական),
- 2 լուսանկար (3x4 չափսի),
- ուսման սահմանված վճարի անդորրագիր:

Յուրաքանչյուր առարկայի տարեկան ուսման վարձը սահմանվել է 120 հազար դրամ:

Նախապատրաստական դասընթացների ունկնդիրների համար կազմակերպվում են բազմամակարդակ՝ երկարաժամկետ (ութամսյա) և արագացված (երկամսյա) կրթական ծրագրեր: Ութամսյա նախապատրաստական դասընթացները կազմակերպվում են յուրաքանչյուր ուստարվա նոյեմբեր–հունիս, իսկ արագացված դասընթացները՝ մայիս–հունիս ամիսների ընթացքում: Երկարաժամկետ դասընթացների համար դիմումներն ընդունվում են մինչև հոկտեմբերի 25-ը:

Նախապատրաստական դասընթացներում դասավանդում են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի փորձառու ներկայացուցիչները:

Հանրակրթական առարկաների գծով գործում է փորձագիտական խորհուրդ: Խորհուրդը հաստատում է առարկաների օրացուցային թեմատիկ պլանները և հետևում նրանց կատարմանը: Նախապատրաստական դասընթացների կրթական ծրագրերի բովանդակությունն ու որակն ապահովվելու նպատակով խորհրդի կողմից անցկացվում են ընթացիկ և կիսամյակային ստուգողական աշխատանքներ: Կրթական ծրագիրը հաջողությամբ ավարտած ունկնդիրներին տրվում է ավարտական քննությունների արդյունքներով սահմանված մոուլի վկայական (հավաստագիր):

Նախապատրաստական դասընթացները ավարտած դիմորդներն ընդունվում են ԵՊՀ հեռակա ուսուցման համակարգ մրցույթից դուրս, ավարտական քննությունների գնահատականներով, ըստ մասնագիտությունների ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված տեղերի մինչև 20%-ի չափով:

Այս ամենը նախապատրաստական դասընթացների ունկնդիրներին հնարավորություն է տալիս ստանալու որակյալ կրթություն՝ համաձայն ուսուցման ընտրված ծրագրի:

**ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱՎԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ք. Երևան

« ----- » ----- 20 թ.

«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական 03Ա 053345, տրված 31.01.2002թ., իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1(մեկ)) (այսուհետ՝ ԵՊՀ)՝ ի դեմս ռեկտոր Արամ Սիմոնյանի, ով գործում է համաձայն կազմակերպության կանոնադրության մի կողմից, և ԵՊՀ ----- ֆակուլտետի ----- մասնագիտության ----- կուրսի ուսանող ----- (այսուհետ՝ Ուսանող), մյուս կողմից, ովքեր ստորև հիշատակվում են որպես «Կողմ» և միասին՝ որպես «Կողմեր» կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

1.1 Սույն պայմանագրի իրավական հիմքերն են ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության որոշումները, «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, ԵՊՀ ներքին կարգապահական կանոնները, ԵՊՀ ներքին իրավական և ՀՀ այլ իրավական ակտերը:

**2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ**

2.1 Սույն պայմանագրի առարկան Ուսանողի՝ առկա ձևով, **ԲԱԿԱԼԱՎՐԻ** կրթական ծրագրով ուսումնառություն իրականացնելու կարգն ու պայմաններն են:

2.2 Ուսանողի ուսումնառության նորմատիվ ժամկետը չորս տարի է:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

3.1 ԵՊՀ-ն պարտավորվում է.

3.1.1 Ուսումնառության տարիներին ստեղծել պետական կրթական չափորոշիչներով նախատեսված ուսումնական գործընթացն ապահովող անհրաժեշտ բոլոր պայմանները:

3.1.2 Կազմակերպել Ուսանողի ուսուցումը՝ սահմանված կարգով հաստատված ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համաձայն:

3.1.3 ԵՊՀ-ի ուսումնական պլանները կատարած և ամփոփիչ ատեստավորումն անցած ուսանողներին շնորհել համապատասխան որակավորում և տալ ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ:

3.2 Ուսանողը պարտավոր է.

3.2.1 Սահմանված ժամկետներում կատարել բոլոր ուսումնական առաջադրանքները:

3.2.2 Պահպանել ԵՊՀ-ի կանոնադրությունը և ներքին կարգապահական կանոնները:

3.2.3 Հաճախել ԵՊՀ-ում կարդացվող դասընթացներին:

3.2.4 Բարձր պահել ԵՊՀ-ի պատիվն ու հեղինակությունը:

3.2.5 Վճարովի ուսումնառության պայմաններում սովորող Ուսանողը պարտավոր է

կիսամյակի ուսման վարձը (սահմանված պայմանագրի 4.1 կետով) վճարել տվյալ կիսամյակում՝ պարապմունքների փաստացի սկզբից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ առաջին կուրսի վճարովի համակարգ ընդունված ուսանողների, ովքեր պարտավոր են առաջին կիսամյակի ուսման վարձը վճարել մինչև հրամանագրվելը: Ուսման վարձը ժամանակին չվճարելու դեպքում Ուսանողը կարող է հեռացվել ԵՊՀ-ից:

3.3 Ուսանողները, ովքեր չեն կատարում ԵՊՀ-ի ուսումնական պլաններով և ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված առաջադրանքները, ցուցաբերում են ակադեմիական անբավարար առաջադիմություն, խախտում են հասարակական կարգն ու ԵՊՀ-ի ներքին կարգապահական կանոնները, կարող են ենթարկվել կարգապահական տույժերի՝ ընդհուպ մինչև ԵՊՀ-ից հեռացվելը, ներքին ակտերով սահմանված դեպքերում և կարգով:

3.4 Սույն պայմանագրի կողմերի մնացած իրավունքներն ու պարտականությունները որոշվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ այլ նորմատիվ իրավական ակտերով, «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:

#### **4. ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Վճարովի հիմունքներով սովորող Ուսանողի ուսման վարձը յուրաքանչյուր ուսումնական տարվա համար կազմում է՝ -----  
ՀՀ դրամ, եթե նա չի օգտվում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի փոխհատուցումից:

4.2 Սահմանված ուսման վարձը հաստատուն է ուսանողի ուսումնառության ողջ ժամանակահատվածի համար՝ պայմանագրով նախատեսված ուսուցման ձևի, ըստ կուրսերի անընդհատ ուսումնառության դեպքում: ԵՊՀ-ից անհարգելի պատճառներով հեռացված, այնուհետև սահմանված կարգով վերականգնված ուսանողները ուսման վարձը վճարում են նոր պայմանագրով սահմանված չափով:

4.3 Ուսման վարձը Ուսանողը կարող է վճարել ըստ կիսամյակների: Ուսման վարձը վճարվում է կանխիկ՝ ԵՊՀ-ի դրամարկղ կամ փոխանցման կարգով՝ ԵՊՀ-ին սպասարկող բանկում բացված հաշվարկային հաշվին:

#### **5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է տվյալ կրթական ծրագրով և ուսուցման պլաններով նախատեսված ամբողջ ժամանակամիջոցի համար, բացառությամբ սույն պայմանագրի թիվ 6 գլխում նշված դեպքերի:

#### **6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

6.1 ԵՊՀ-ի կողմից սույն պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման հետևյալ դեպքերում՝

ա. Ուսանողի կողմից տարբեր պատճառներով ԵՊՀ-ում ուսումնական գործընթացն ընդհատելու դեպքում: Ուսումնական գործընթացը վերսկսելիս կնքվում է նոր պայմանագիր:

բ. Ուսանողի կողմից ԵՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կա-

նուններով սահմանված կարգով իր պարտականությունները չկատարելու դեպքում:

գ. Ուսանողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական պայմանները խախտելու դեպքում:

դ. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

6.2 Ուսանողի կողմից պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե նա կամավոր ընդհատում է ուսումնառությունը և այդ մասին ԵՊՀ-ին տեղեկացնում է տվյալ կիսամյակի քննաշրջանի սկզբից մեկ ամիս առաջ, սահմանված ընթացակարգով, վճարելով սովորած ժամանակամիջոցի համար նախատեսված ուսման վարձը:

## 7. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի *լրիվ* (100 տոկոս) փոխհատուցում տրամադրվում է՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված սոցիալական խմբերում ընդգրկված ուսանողներին, ինչպես նաև մեկ ուսումնական տարվա քննությունների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով: Ուսանողական նպաստների ձևով ուսման տարեկան վարձավճարի լրիվ փոխհատուցման հատկացման կարգը և պայմանները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու» կարգով և Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգով:

7.2 Ուսանողը կարող է օգտվել ուսանողական նպաստ ստանալու իրավունքից կամ զրկվել այդ իրավունքից, եթե մեկ ուսումնական տարվա առաջադիմության հիման վրա անցկացված մրցույթի արդյունքներով կատարվում է Ուսանողի կարգավիճակի փոխատեղում (ռոտացիա): Ուսանողի կարգավիճակի փոխատեղումը չի տարածվում օրենսդրությամբ նախատեսված սոցիալական խմբերում ընդգրկված և ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ (100 տոկոս) փոխհատուցման իրավունք ունեցող անձանց վրա:

7.3 «Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բուհի վճարովի ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին, ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ, ԵՊՀ-ն իր միջոցների հաշվին կատարում է ուսման վարձի ուսանողական նպաստի ձևով *մասնակի* փոխհատուցում (մասնակի զեղչերի կիրառմամբ), որի հատկացման կարգը և պայմանները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու» կարգով և Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգով:

7.4 Առաջին կուրսում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է ՀՀ պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով: Հաջորդ կուրսերում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրվում է սույն պայմանագրի 7.2 կետում ամրագրված սկզբունքով՝ մեկ ուսումնական տարվա քննությունների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով:

7.5 Առաջին կուրսի ուսանողները ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել ուսումնառության միայն 2-րդ կիսամյակից:

**8. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

8.1 Սույն պայմանագիրը կազմված է 2 հավասարազոր օրինակից, որոնց մեկական օրինակներն ի պահ են հանձնված կողմերին:

8.2 Կողմերի միջև ծագած վեճերը կարգավորվում են կողմերի փոխհամաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.3. Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են գործող օրենսդրությանը համապատասխան:

8.4. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԵՊՅ՝**

«Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ  
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1  
հեռ. 55-41-51  
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ  
h/h 247010000906  
ՀՎՀՀ 01506928

**Ուսանող՝**

Ա.Ա.Հ.-----  
-----  
Անձնագիր -----N-----  
Տրված-----  
----- կողմից  
Հաշվառված է-----

-----:

Ռեկտոր՝ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

-----  
(Ստորագրություն)

-----  
(Ստորագրություն)

Կ.Տ.

Սույն պայմանագիրը կնքվել է անչափահաս ուսանողի օրինական ներկայացուցչի (ծնող, որդեգրող, հոգաբարձու) համաձայնությամբ:

Անչափահաս ուսանողի օրինական ներկայացուցիչ

(ծնող, որդեգրող, հոգաբարձու) -----  
Ստորագրություն

**Հեռուստա ՌԻՍՏԻՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ  
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ք. Երևան

« ----- » ----- 20 թ.

«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական 03Ա 053345, տրված 31.01.2002թ., իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1(մեկ)) (այսուհետ՝ ԵՊՀ)՝ ի դեմս ռեկտոր Արամ Սիմոնյանի, ով գործում է համաձայն կազմակերպության կանոնադրության մի կողմից, և ԵՊՀ ----- ֆակուլտետի ----- մասնագիտության ----- կուրսի ուսանող ----- (այսուհետ՝ Ուսանող), մյուս կողմից, ովքեր ստորև հիշատակվում են որպես «Կողմ» և միասին՝ որպես «Կողմեր» կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

1.1 Սույն պայմանագրի իրավական հիմքերն են ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության որոշումները, «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը և ՀՀ այլ իրավական ակտերը:

**2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՐԿԱՆ**

- 2.1 Սույն պայմանագրի առարկան Ուսանողի՝ հեռակա ձևով, **ԲԱԿԱԼԱՎՐԻ** կրթական ծրագրով ուսումնառությունն իրականացնելու կարգն ու պայմաններն են:
- 2.2 Ուսանողի ուսումնառության նորմատիվ ժամկետը հինգ տարի է:
- 2.3 Հեռակա ուսուցման ձևով, բակալավրի կրթական ծրագրով ուսումնառությունն իրականացվում է վճարովի հիմունքներով:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 3.1 ԵՊՀ-ն պարտավորվում է.
  - 3.1.1 Ուսումնառության տարիներին ստեղծել պետական կրթական չափորոշիչներով նախատեսված ուսումնական գործընթացն ապահովող անհրաժեշտ բոլոր պայմանները:
  - 3.1.2 Կազմակերպել Ուսանողի ուսուցումը՝ սահմանված կարգով հաստատված ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համաձայն:
  - 3.1.3 ԵՊՀ-ի ուսումնական պլանները կատարած և անփոփոխ ատեստավորումն անցած ուսանողներին շնորհել համապատասխան որակավորում և տալ ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ:
- 3.2 Ուսանողը պարտավոր է.
  - 3.2.1 Սահմանված ժամկետներում կատարել բոլոր ուսումնական առաջադրանքները:
  - 3.2.2 Պահպանել ԵՊՀ-ի կանոնադրությունը և ներքին կարգապահական կանոնները:
  - 3.2.3 Հաճախել ԵՊՀ-ում կարդացվող դասընթացներին:
  - 3.2.4 Բարձր պահել ԵՊՀ-ի պատիվն ու հեղինակությունը:



3.2.5 Ուսանողը պարտավոր է կիսամյակի ուսման վարձը (սահմանված պայմանագրի 4.1 կետով) վճարել տվյալ կիսամյակի դասերը փաստացի սկսելուց ոչ ուշ, քան երկու շաբաթվա ընթացքում, բացառությամբ նոր ընդունված ուսանողների, ովքեր պարտավոր են առաջին կիսամյակի ուսման վարձը վճարել մինչև հրամանագրվելը: Ուսման վարձը ժամանակին չվճարելու դեպքում Ուսանողը կարող է հեռացվել ԵՊՀ-ից:

3.3 Ուսանողները, ովքեր չեն կատարում ԵՊՀ-ի ուսումնական պլաններով և ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված առաջադրանքները, ցուցաբերում են ակադեմիական անբավարար առաջադիմություն, խախտում են հասարակական կարգն ու ԵՊՀ-ի ներքին կարգապահական կանոնները, կարող են ենթարկվել կարգապահական տույժերի՝ ընդհուպ մինչև ԵՊՀ-ից հեռացվելը, ներքին ակտերով սահմանված դեպքերում և կարգով:

3.4 Սույն պայմանագրի կողմերի մնացած իրավունքներն ու պարտականությունները որոշվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետրուսական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ այլ նորմատիվ իրավական ակտերով, «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:

#### **4. ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Ուսանողի ուսման վարձը յուրաքանչյուր ուսումնական տարվա համար կազմում է՝ \_\_\_\_\_ ՀՀ դրամ:

4.2 Սահմանված ուսման վարձը հաստատում է ուսանողի ուսումնառության ողջ ժամանակահատվածի համար՝ պայմանագրով նախատեսված ուսուցման ձևի, ըստ կուրսերի անընդհատ ուսումնառության դեպքում: Ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված ուսանողի ուսման վարձը մնում է անփոփոխ, եթե նա մինչև զինվորական ծառայության մեկնելը, սահմանված կարգով, ԵՊՀ-ում ձևակերպել է տարկետում և զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո երկամսյա ժամկետում դիմում է ներկայացրել ԵՊՀ-ում իր ուսանողական իրավունքները վերականգնելու համար:

4.3 ԵՊՀ-ից անհարգելի պատճառներով հեռացված, այնուհետև սահմանված կարգով վերականգնված ուսանողները ուսման վարձը վճարում են նոր պայմանագրով սահմանված չափով:

4.4 Ուսման վարձը Ուսանողը կարող է վճարել ըստ կիսամյակների: Ուսման վարձը վճարվում է կանխիկ՝ ԵՊՀ-ի դրամարկղ կամ փոխանցման կարգով՝ ԵՊՀ-ին սպասարկող բանկում բացված հաշվարկային հաշվին:

#### **5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՍԿԵՏԸ**

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է տվյալ կրթական ծրագրով և ուսուցման պլաններով նախատեսված ամբողջ ժամանակամիջոցի համար, բացառությամբ սույն պայմանագրի թիվ 6 գլխում նշված դեպքերի:

#### **6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՍԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

6.1 ԵՊՀ-ի կողմից սույն պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման հետևյալ դեպքերում՝

ա. Ուսանողի կողմից տարբեր պատճառներով ԵՊՀ-ում ուսումնական գործընթացն ընդհատելու դեպքում: Ուսումնական գործընթացը վերսկսելիս կնքվում է նոր պայմանագիր:

բ. Ուսանողի կողմից ԵՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով իր պարտականությունները չկատարելու դեպքում:

գ. Ուսանողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական պայմանները խախտելու դեպքում:

դ. ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված այլ դեպքերում:

6.2 Ուսանողի կողմից պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե նա կանախոր ընդհատում է ուսումնառությունը և այդ մասին ԵՊՀ-ին տեղեկացնում է տվյալ կիսամյակի քննաշրջանի սկզբից մեկ ամիս առաջ, սահմանված ընթացակարգով, վճարելով սովորած ժամանակամիջոցի համար նախատեսված ուսման վարձը:

## 7. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրը կազմված է 2 հավասարազոր օրինակից, որոնց մեկական օրինակներն ի պահ են հանձնված կողմերին:

7.2 Կողմերի միջև ծագած վեճերը կարգավորվում են կողմերի փոխհամաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են գործող օրենսդրությանը համապատասխան:

7.4. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ԵՊՀ՝**

«Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ Ա.Ա.Հ -----

ք. Երևան, Ալեք Մամուկյան 1 հեռ. 55-41-51

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ  
h/h 247010000906

ՀՎՀՀ 01506928

**Ուսանող՝**

-----

Անձնագիր -----N-----

Տրված-----

----- կողմից

Հաշվառված է-----

-----:

Ռեկտոր՝ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

-----  
(Ստորագրություն)

-----  
(Ստորագրություն)

Կ.Տ.

Սույն պայմանագիրը կնքվել է անչափահաս ուսանողի օրինական ներկայացուցչի (ծնող, որդեգրող, հոգաբարձու) համաձայնությամբ:

Անչափահաս ուսանողի օրինական ներկայացուցիչ

(ծնող, որդեգրող, հոգաբարձու) -----

Ստորագրություն

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ԵՊՀ ռեկտորի խոսքը ..... 3

Ցանկ Երևանի պետական համալսարանի առկա ուսուցման 2010/2011  
ուսումնական տարվա մասնագիտությունների և  
ընդունելության քննությունների..... 4

Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ ..... 7

Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ ..... 11

Ֆիզիկայի ֆակուլտետ ..... 13

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ ..... 16

Քիմիայի ֆակուլտետ ..... 20

Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ ..... 24

Կենսաբանության ֆակուլտետ ..... 31

Պատմության ֆակուլտետ ..... 37

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ ..... 40

Տնտեսագիտության ֆակուլտետ ..... 44

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ ..... 47

Սոցիոլոգիայի ֆակուլտետ..... 51

Հայ բանասիրության ֆակուլտետ ..... 55

Ժուռնալիստիկայի ֆակուլտետ..... 58

Ռուս բանասիրության ֆակուլտետ ..... 62

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ ..... 65

Արևելագիտության ֆակուլտետ ..... 72

Իրավագիտության ֆակուլտետ..... 75

Աստվածաբանության ֆակուլտետ..... 79

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ..... 81

ԵՊՀ հեռակա ուսուցում ..... 83

ԵՊՀ նախապատրաստական դասընթացներ..... 85

Պայմանագիր ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրով  
ուսումնառության պայմանների վերաբերյալ..... 86

Պայմանագիր ԵՊՀ հեռակա ուսուցման ձևով բակալավրի  
կրթական ծրագրով ուսումնառության պայմանների վերաբերյալ..... 90